


5257

4 PUBLICATIONS 4

PNC39



1106

12003

1690-чнч
И. С. речище 7930

891.99

4-26

Централизованная библиотека им. Ленина
г. Баку

ИДЕНТИФИКАЦИЯ 1936 г.

№ 3

ЗАЩИЩЕННО.

У-241



Համարեան թէ սովորութիւն է դարձած մեր մէջ, որ տմհն մի նոր զրական ասպարէզ գուրս եկող կրիստոնյայի խօսութեանը չենթարկելու համար իրան աւելի համեստ է ցոյց տալիս՝ խոսափանելով իր անզօրութիւնը կամ ամփորձութիւնը։ Բայց պէտք է ասել, որ կրիստոնյան աւելի արդար է վարուժմ—այդ խօսքերը ոչ մի կերպ չեն օգնում իմաստակի արժեքը բարձրացնելուն կամ արժանաւորքն առոր ցոյց տալուն։ Ուստի բոլորամբն աւելորդ եմ համարում ասել, զրել այն, ինչ որ ոչ մի նշանակութիւն չունի։ Գրականութեանն ինչ փոյթ, թէ ևս միայն տասնութ տարեկան եմ, միթէ տարիներս կարող են նշանակութիւն ունենալ այս դէպքում։ Առաջ գրականութիւնը պահանջում է հասուն գրւածներ, իսկ գրողն ով ուզում է, թող վինի. ով իր մէջ նկատում է ոյժի բացակայութիւն, զգում է իր երկասիրութեան թուլութիւնը, նա գուր է զնում իր խալ մաքերը հասարակութեան առաջ, ոչ որ չէ կարող նրանցով հանճար միայն նրա համար, որ զրոյը մանկահասակ է. ընդհակառակն՝ զգւելի է թւում, երբ ամեն մի երեխայ ՚ի չարն է զործ դնում տղասոսութեան իրաւունքը և պղտորում զրականութեան գիրս տուշակը։ Խօսք՝ ինարկէ, միայն այնպիսիների մասին է, որոնք լու զիսեն իրանց գործի անզօր լինելը. բայց կան մարդիկ, որոնք վատան են իրանց վրայ և առանց որևէ կատածի տապարէզ են զուրս զալիս. արդ պիսիներին մեղաղիւն անարդարութիւն է, թէկուզ նոյն խոկ նրանց դորձն արժեք չունենայ։

Համարձակ զնում եմ հեղինակութիւնս կրիստոնյայի առաջ և պատրաստ եմ լսել ամեն մի կարծիք, ինչ տեսակ էլ նա վիճի. Զէ որ ամենքն ապաստ են իրանցն առելու կամ զրելու, և ով է կարող խիլ

2032
41



այդ իրաւունքը նոյն իսկ վերջին խելագարից, մինչեւ անդամ՝ նու իրաւուցի է տրւած մարդուս. այդպիսով կերևաց շատերի թագնւած հոգին: Հրաւիրում եմ ամենքին օգտւել այդ ազատութիւնից և դուքս գալ ասպարեզ առանց քաշելու, առանց ամաչելու: Իինում են անձնաւորութիւններ, որոնք շատ անդամ կատկածում են իրանց ոյժի վրայ, չ'նայած որ կարող են շատերից բարձր կանգնել. զուր է վախենալը, բնչ անենք, թէ երբեմն կ'ոչնչանան նրանց կարծիքները հակառակ փաստերի առաջ, այդ ոչինչ, դրանից ոչ մի վնաս չի հասնիլ, ընդհակառակն՝ կարելի է նոյն իսկ օգտւել:

Բայց զուցէ քննադատելու կարողութիւն ունեցողներից կը զբանակն շատերը, որոնք զործու ընդունելով չնշին՝ կ'ասեն. Արժէ միթէ խօսել այսպիսի մի գրւածքի մասին: Օ՛, բայց միթէ այդպիսով կտրելի կ'ինի ցոյց տալ յիրաւի, որ իսկապէս անարժան է զործու. բոլորովին, ևս կ'մնամ նորից նոյն համոզմունքի մէջ, ուրիշ շատերն էլ կ'ընդունեն զործու արժանաւոր.... Այն կարծիքը՝ թէ չ'արժէ խօսել անպէտք գրւածքների մասին, մեծ սխալ է, այդ բանից օգտւած են քաղում որոշ կարգի մարդիկ և բացի այն, որ ապականում են զբականութիւնը, այլ և անուն են ձեռք բերում ամբոխի մէջ: Դ' հարկէ, մեր մէջ չ'կան առանձին ուղղութիւններ, չ'կայ մի մեծ վնասակար ճիւղ, բայց չէ որ մեր գրականութիւնն էլ գեռ մի ովկիանոս չէ, մի կաթին էլ զգացի է վիճում նրա մէջ, չէ որ թոյնի աննշան քանակութիւնն ևս ունենում է իր ազգեցութիւնը. և այդ բոլորը շնորհուարհամարհական բաւթեան է... իսկ այդ կատարեալ յանցանք է:

Ահա զործու, ով կարող է, թող օգտւէ իր իրաւունքից և դուրս դայ ասպարեզ: Ես ոչ թէ խնդրում եմ, ով առաջարկում:

Թ. Ա Յ Ն

Ահազին բազմութիւն էր հաւաքւել բանափ մուսփի մօտ, չ'նայած որ անձրել մազում էր, և վաղոցները ցեխուաւել էին: Ես ևս հետաքրքրւեցի և ամբոխի մէջ մանելով կանգնեցի ձանապարհի վրան առանց իմանալու, թէ ինչի եմ սպասում, որովհետեւ ոչ ոք մի որոշ պատասխան չէր տալիս իմ քնչ կայ, հարցին, բոլորի աշքերն ապշարար յառած էին գէսփի մի կողմ—բանտի մուտքը:

Ահա նա.... չնջացին բազմաթիւ ձայներ, և նոյելով տեսայ, որ բանափ երկու պաշտօնեայ գուրս են բերում մի չղթայակապ բանտարկեալ: Չ'նայելով ամբոխի սպասիկ խոնւելուն՝ տեղս հաստատ կանգնեցի, որպէսզի կարողանամ դիտել յանցաւորի դէմքը: Նա հանդարս քայլում էր՝ մուալի, հպարտ հայեացց գցելով շուրջը: Եկաւ, մօտեցաւ և գասակերից կապկապած ձեռքը մեկնեց գէպ ինձ. Նրա մէջ կար մի տեսր, ևս վերցրի այն: Շնորհակալութիւն յայտնեց յանցաւորը և շարունակեց քայլել՝ մի անդամ ևս յետ նայելով և մի թախծալի հայեացք զցելով իմ տպշած դէմքին:

Ես ինձ իրաւունք եմ համարում հրատարակել այդ տետրն: Ահա նա:

Արշակ Արակեան:

I.

Թ Յ Ւ Ա Ռ Ո Ւ Թ Ե Ե Ն Ս Կ Ի Զ Բ Բ .

Երբ մայրս ինձ ծնեց, հէնց այն օրից աշխաընը հետո
թշնամացաւ. չ'զիտեմ ինչու, ուրիշներն էլ չ'զիտեն, միայն
առում են, որ ամեն մէկն ընդունակ է մէկ—մէկ քմահա-
ճութիւն բանացնելու. բայց այդ ոչ մէկ—մէկ էր և ոչ
նոյն իսկ հազար ու մէկ: Հէնց առաջին օրից սկսւեցին
բնութեան հարւածները:

Ես ծնւեցի հպարտ և այս մէկի համար գոհ եմ. ծըն-
ւեցի երազներով լի հոգով, հաւատում էի ազնւութեան
և այլ սրա նման բաներին: Եւ արդարե, ինչպէս կարող
էի չ'հաւատալ, ինքս այդպէս էի. բայց աւազ, երբ կեանքը
լայն բացաւ իր բազմանկիւն զիրկին, այն ժամանակ հա-
ւատու անհետ կորաւ, և սկսեցի կասկածել, իսկ աւելի
առաջ զնարով՝ կրծքիս տակ մտաւ ատելութեան մի սոս-
կալի կայծ, որ հետզհետէ վառելով հոգիս՝ դարձաւ հրդեհ,
ատելութեան բռնկումն: Այդ բոլորն այնքան արագ կա-
տարեց, որ մինչև անդամ նրա զարդանալն ինքս չ'նկա-
տեցի: Արժանի՞ է մարդն ատելութեան, թէ ոչ. պատաս-
խանում եմ—անկատկած: Ով համաձայն չէ հետո, զնում
եմ նրա առաջին իմ կեանքն իբրև փաստ ասածիս: Իսկ

ով նրան կ'համարէ անհիմն ,անհամողիշ, նրան ոչինչ չ'ունեմ ասելու՝ բայցի սովորական խօսքերից. «Ասուած նրա հետ!...» Թող շատերի համար խօսքերս լինեն ունայն, զան ու անցնեն, այդ ինձ համար միենոյնն է, ես չ'եմ վշտանալ, այլ կ'աթհամարհեմ այնպիսի գատաստանը:

Արկածալից է իմ կեանքը, սակայն այդ արկածները շատ սովորական են, ամենքի հետ կարողէ նոյնը պատահել, ինչ որ ինձ հետ է պատահել: Ո՛վ զիտէ, մարդուս զիսին ինչ փորձութիւններ կարող են զալ: Կեանքը, կամ աւելի լաւ է ասել՝ բախտը հետա շատ է խաղացել, թէեւ ես երբէք բախտախնդիր չ'եմ եղած: Դեռ պատահի էի, երբ երազներս ինձ տիրեցին վերջնականապէս: Եյնպիսի բաններ էի մտածում, որոնց ասուածաբանները յանցանք անունով են կնքում: Ինչո՞ւ ենք ծնւել, ինչո՞ւ ենք ապրում, աւելի լաւ չէ միանգամից վերջ տալ մեր կեանքին, որը մի կօմեղիա է, և ոչնչանալ միանգամայն: Բայց այն էլ էի մտածում, որ զուցէ իմ յոռետես ուզեղը զեռ ես թոյլ է, զուցէ ես խկապէս չ'եմ հասկանում այն, ինչ որ հասկացած եմ կարծում: Առաջ զնացի, նախկին օրերը հեռացան, մանկութիւնս դարձաւ երազ, պատահնեկութիւնս մի թուած վայրկեան, սակայն երազներս ինձնից չը հեռացան, այլ բազմացան միայն: Ես տանջում էի, բայց թէ ինչն էր տանջում ինձ, այդ չէի կարողանում հասկանալ. զուցէ մերժումը—ոչ, զուցէ հալածանքը—ոչ, ոչ և ոչ. իմ վիշտն ուրիշ էր, մերժումը, հալածանքը և փոթորիկները չէին հասնիլ նրան: Միայն այս զիտեմ, որ չ'էի ուզում ապրել, կեանքն ինձ թուում էր մի աւելորդ ծանրութիւն: Աշխարհն ինձ աւելի նեղ էր թուում, քան թէ մահապարտին մութքանալը, կեանքն աւելի չնշին, քան թիթեռի կեանքը: Եմ սիրու կոտրած էր միանգամայն: Օրս անցնում էր

տաղտուկ կերպով, նա միշտ թւում էր մի ֆարս, բնութիւնը մի խարսափիկ ծիածան, վերջապէս ամբողջ տիեզերքը իմ խարէութիւն: Բայց ե՞ս... մի աննշան ատում ընկած տիեզերքի մի աննշան անկիւնում, ինչպէս համարձակուում էի իմ ոչնչութեամբս ոչինչ համարել այս ամբողջ տիեզերքը, որի սահմանն ինձ աներեակայելի է, որի մեծութիւնն անհասանելի է: Բայց... ինչ արած, այդպէս էի. ես յակտում եմ այն, ինչ որ զգացել եմ:

Ինչո՞ւ ապրել, քանի—քանի անդամ կրկնել եմ այս խօսքերը և զեռ կրկնում եմ. ինչո՞ւ տանջւել, ցաւ զգալ, աւելի լաւ չէ միանդամից վերջ տալ այս բոլորին: «Սպասիր, յոյս ունեցիր, ամեն բան նրա մէջն է, այդ անիծեալ յուսոյ մէջ», ասում են էլազիստիկները. բայց ինչի յուսալ, այդ չէ իմացւում: Յոյսը մի օր յանկարծակի վշրում է, և այդպիսով ընկնում է սիրու, բայց այնպէս է ընկնում, որ այլ ես վերականգնելու անկարող է զառնում: «Թող ուրեմն անյայտութեան մէջ մեռնեմ, մտածում էի ես, փշանամ, թող իմ յիշատակը չը մնայ երկրիս երեսին, եթէ մնայ, ինչ օգուտ—ես ուզում եմ բոլորովին հեռանալ. եթէ կարելի լինէր, նոյն խոկ իմ կենսագուրկ մարմինը չէի թողնիլ երկրիս վրայ, ես ցանկանում եմ բոլորովին հեռանալ տիեզերքից, բայց տանդ, տիեզերքից զուրս ուրիշ մի տեղ չեմ զտնում, տեսնում եմ, որ ամբողջ անսահմանութիւնը բռնակալ տիեզերքն է բռնած: Ճիշտ է, որ հնար չը կայ նրանից ազատւելու, հնաց զրա համար էլ ատում եմ նրան, նա ինձ նպատակով է զոյացըել, որպէսզի տանջիք. խոկ ով կ'սիրէ իր անողոր տանջողին, նրան, որի նպատակն է խաղալ իր զոյացըած սրտերով: Կարծես մի բան է պակաս... ինչ է իմ ուզածը, հանդիսած... օ, ոչ. ով...

գուցէ... ինչո՞ւ... սէ՞ր, բայց ի՞նչ, կարծես ամբողջ կեանքը սիրոյ մէջն է, մարդ միայն սիրոյ համար է ստեղծւած, ապա ուրիշ նպատակ կայ նրա զոյտթեան մէջ. միթէ սէրը քիշ է, բայց ում սիրել... որտէ՞ղ սիրել... ամբողջ աշխարհն եմ հապարտ, անընկճելի հոգու համար աւելի նեղ է, քան ճպնաւորի համար իր այրը: Աւը թագցնեմ իմ անգուսպ ցանկութիւնները, որտեղ կորցնեմ իմ ցնորդները...» Սատանան գիտէ, թէ ինչեր չէի անցկացնում մտքովս... «Եւ իսկապէս՝ ապրելը կայանում է սիրոյ, գիտութեան և փառքի մէջ. երբեմն առանց վերջինների կարելի է լինում ապրել, բայց առանց սիրոյ—կեանքը վատ է ոչնչութիւնից, կամ այլ խօսքերով՝ ապրում ենք իանալու և գիտենալու համար. այլ երկուսից մէկն ու մէկը միսիթարութիւն է ընդհանուր սուզի մէջ (կեանքը սուզ է), իսկ եթէ երկուսից էլ զուրկ ենք, ապա աւելի լաւէ ոչնչանալ վերջապէս:» Այս և այսպիսի շատ մոքեր գալիս, անցնում էին մտքովս, բայց այս բոլորը թագնւած էր ուրիշներից, թէ իմ մէջ ոչինչ չէր լսում: Դեռ չեմ ասում այն մոքերը, որոնք կենթարկէին ինձ բանադրանքի և աստւածաբանների գօրաւոր ու անդոր անձքին:

Ես սկսեցի վայրենանալ. վայրենացայ ոչ թէ զզացմունքներով, այլ կեանք վարելու ձեռվ. այնպէս որ համարեա ամբողջ ժամանակն անտառներում, զաշտերումն էի անցկացնում, ինձ գուրք էր գալիս բնութիւնը, նա գեղեցիկ էր թւում, որովհետեւ ինձ պէս իր վիշտը չէր կարստանում յայտնել ոչ ոքի. թէ լուսինն, ասում են, տիսրում է, կամ աստղերը ժպտում են, ամպերը լալիս են անալի արտասուրով, և այս բոլորը հասկանալի է լինում մարդկանց: Այս առայժմ թողնենք, միայն այսպանը դիտեմ:

որ ևս սիրահարւել էի բնութեան վրայ: Նոյն իսկ գիշերները, երբ բւերն անգամ քնած էին լինում, ծածուկ գուրս էի գալիս լեռնոտ շրջակայքը և սրանշանում թէ լուսնով, թէ աստղերով, թէ ժայռերով, որոնք լիրաւի կարծես հետո խօսում էին. տեսնում էի, թէ ինչպէս ամպերը գալիս, ծածկում են լուսինն ինձանից, և ես տրխում ու մտածմունքների մէջ էի ընկնում... »Արդեօք, մի օր էլ ինձ չէ վիճակելու կեանքի ամպերից ծածկել...» թէ մերթ—մերթ էլ իմ տարուրերող խելքն այդ ամպերով արդին ծածկւած էր համարում ինձ, բայց հազար երանի այն օրերին. Եթէ ես օրհնել կարողանայի, այն օրերը կ'օրհնէի, միայն այն օրերը. թէ կեանքումս եղել են աւելի քաղցը օրեր, բայց նրանք միշտ որևէ չարիքի սկզբնապատճառ են եղել:

Ես զոհ չէի այն բանից ես, որ «բամբակում էի պահւած», բայց գիշերային լեռնական զբօանքներն ինձ վոխեցին, այլ ես թուլամորթ չը մնացի, միայն հետքերը մնացին: Երբ ինձ պաշարում էին երազներս, վազում էի գէպի լեռները, քարանձաւները և այնտեղ մի բարձրութեան վրայ նասում ու գիտում շրջակայքս. այն ժամանակ ամեն ինչ սիրելի էր ինձ. նոյն իսկ ինձ տանջող ցնորդները մի տեսակ դուք էին գալիս, ես քաղցրութիւն էի տեսնում նրանց մէջ: Նստում էի բարձրութեան վրայ և գիտում շրջակայքս. ահա այնտեղից արծաթէ զետեսն ինձ յանդիմանում է, որ իրան չեմ այցելում, երբ իր մէջ զիշերները խաղալու են զալիս բազմաթիւ աստղեր, և զիշերային ֆէան—լուսինը կախարդում է նրանց՝ զեր, զրոյցով գցելով երազների մէջ, իսկ նրանք միշտ հրձւում են հերիաթներից. նա իր խօսքը բուռին ասելու համար շրջում է զետի մէջ, բոլորին է անում իր կախար-

զական պատմութիւնը, որն այնքան կսկծեցուցիչ է, որ յոդ աստղը գունատուում է, զողգողում և լոյսը կորցնում. և երբ վերջացնում է լուսինն իր խօսքը, շքանում է ինքնարաւական կերպով, իսկ աստղերը տիրում են ու թօթափում: Երբ մօտենում էի ամպերին, որոնք եկած էին լինում հանգստանալու ժայռի լանջերին, նրանք ինձնից փախում էին, կանգնում հեռուում և, կարծես յանդիմանում, թէ ինչու եմ ատում նրանց, երբ ծածկում են լուսինն իմ աշքից, չէ որ նրանք էլ ունեն ինքնասիրութիւն. երբ լուսինը երկնքի վրայ է լինում, իմ ուշքն ամպերը չ'են կարողանում դրաւել, մնում են առանց իմ մելամաղձուտ հայեացքներին, և նախանձելով լուսինի երջանկութեանն, իրանք ևս ցանկանում են երջանիկ լինել և ցոյց են տալիս իրանց ամճնօրինակ պատկերները: Նըրանք կանգնում էին հեռուում, ինձ յանդիմանում և յետոյ չքանում: Սակայն պատահում էին աւելի յամառ ամպեր, որոնք իմ սիրտը ծակելու համար՝ հէնց որ սարն էի բարձրանում, ծածկում էին իմ աշքից և դեռ, և աստղերը, և ես կատաղում, փրփրում էի, աւելի և աւելի ատում նրանց, որ ինձ հանում են ինքնամոռացութիւնից: ✕

Ինչու էի այդքան դրաւում արծաթէ զետի լացով կամ անտառակի մեղեգիով, քամու ողբով ու հառաշանքով. ահա թէ ինչու. թէ իմ հասակին նայած՝ կարելի էր ինձ տալ տիրաս անունը, բայց ես սկսել էի արդէն ճանաշել կեանքն իր սեփական գոյներով, նրա ճանապարհը բացւած էր իմ առաջ: Եւ ես մոռացման մէջ էի ընկնում քամու խուլ աղաղակներով նրա համար, որ տեսնում էի զրանց և կեանքի որևէ պատկերի մէջ նմանութիւն: Կեանքը շատ պատկերներ ունի, որոնց ամեն մէկին նմանցնում էի բնութեան ամեն մի տեսարանին, երեսյթին.

Կեանքի և քնութեան երեսյթների մէջ նկատում էի զուգատիպութիւն, ահա՝ թէ ինչու հրճում էի ծիածանի շրեղութեամբ և վշտանում փոթորիկով: Որքան սկսում էի խորը մտածել, կեանքն աւելի և աւելի անմիխթարական էր թւում, խարուսիկ գոյները չքանում էին, և մտքիս հորիզոնի վրայ մնում էր լոկ գալնութիւն, թախիծ: Դեռ սեփական ոյժերով կեանքի մէջ չ'մտած՝ սկսեցի ատել նրան, և ապրելու ցանկութիւնս հատիճետէ չքանում էր. բայց ինձ գերում էր ապագան և պահպանում էին համոզմունքներիս ճշմարտութեան վրայ կասկածելը, որդիական սէրն ու երախտապարտ լինելը. ես չէի կարող վշտացնել հօրս (մայրս արդէն մեռել էր): Օ՛ սէր, եթէ քեզանով շատերն ստացել են բաւականութիւն, երջանկութիւն, ես միմիայն սրտի ցաւ եմ զգացել և թշւառութիւն եմ տեսել. եթէ շատերը քեզ այսօր օրհնաբանութիւն են ձօնում, այսօր ես... ոհ, բայց ինչպէս անիծել այն բանը, որը շատերից փառաբանում է. որքան յանդգնութիւն է պէտք, Տէր Աստրւած, անիծել այն, որն ընտրել ես Քո ամենիմաստութեամբ իբրև մարդկութեան միակ կապ երկնքի հետ. անելանելի գրութիւն... բայց թող, թող մխայ սրտումս վշտերի կոյտն. այսպէս կատէ ամեն մի անձարացած յանդուղին:

Ես ունէի փառքի ծարաւ, որ չքացաւ այն օրը, որ կեանքիս մէջ ամենածանը, ամենագաման օրն եմ համարում. այդ օրն, իհարկէ, բաւականին նման էր իմ ծննդեան օրին: Ոչ թէ ցանկութիւն ունէի լինել մի իշխող, կամ մի հանճար, որի հետ մարդկութիւնը չ'համարձակւել համեմատել իր ամենաբարձրին, կամ մի բարերար, որի յիշատակը դարեղար օրհնաբանութիւններով պսակւէր. ոչ, ես ոչ մէկը լինել չէի երազում, այլ այնպէս,

ցանկանում էի, որ իմ տրածն ուշադրութեան, մի փոքր ուշադրութեան արժանի դառնայ, և նրանով բաւականութիւն զգամ: Բայց այդ միայն լոկ ցանկութիւնն էր, իսկ երբ իմ մասին լսում էի մի դոփասանական բառ, որն արտասանում էր ուրիշների առջև, բարկութիւնու դալիս էր, և իսկոյն լոեցնում էի նրա ասողին իմ կոպիտ հրամանով: Մի խօսքով, ես ունէի փառքի ժառան, եթէ միայն կարելի է այսպէս անւանել, բայց այդ սոսկ ցանկութիւն էր, որից յագենալը ցասմունք էր պատճառում ինձ, բայց ոչ բաւականութիւն: Ինչո՞ւ, այդ ինչ քմահաճութիւն էր—չը գիտեմ, զուցէ բնութեան ծիծաղելի կնիքը գրօշմւել էր իմ ուղեղի մէջ, որպէսզի յետոյ, երբ արդէն շատ ուշ կ'լինի, վրաս բարկանամ: Այդպիսի տգեղ գծեր շատ կային բնաւորութեանս մէջ:

Վաղ մանկութիւնից սկսած դիւրազզաց էի. երբ տեսնում էի մէկի արտասուքն, ինքս ևս արտասում էի, թէկ ուրախութեան ժամերին միմիայն բարկանում էի. բարկանում էի նրա համար, որ ինքս չ'զիտէի ուրախանալ: Այդպէս ժամանակ ես սկսում էի յանցաւոր երազներ տեսնել. ինձ ապերջանիկ էի համարում և մարդու գոյութեան մէջ ոչնչութիւն էի նկատում. եթէ մէկը հարցնէր, թէ՝ «կեանքիդ մէջ քանի՞ օր ես եղել երջանիկ», ես կասէի՝ «այնքան, որքան որ մարդու գոյութեան մէջ նպատակ կայ»:

Ես մելամաղձոտ էի և այդպէս էլ մնացել եմ. այդպէս մնալուն շատ նպաստեց իմ հապարտութիւնը (զա է միայն, որ ինձ քիչ թէ շատ միմիթարութիւն է չնորհում): Մելամաղձոտութեան չնորհիւ արցունքն ինձնից չէս պակասում. նստում էի ժայռի վրայ... և յանկարծ նկատում էի, որ արցունքը հոսում է, հոսում անընդհատ իմ ուռած

աշերից. ինչո՞ւ, շատ անգամ ինքս չէի հասկանում: Այսպէս ապատ սարի վրայ ես, ապահով ծառերի տակ ես ևս անհանդիստ էի. հանգիստ զգացել եմ միայն մօրս գրկում, երբ նա նայում էր զմայլած իմ խոհուն գէմքին, իսկ ես քնում էի նրա քաղցրագոյն հայեացքների տակ: Եթէ զգացել եմ կեանքումս միմիթարութիւն, որը ոչ մի չարիփի սկրզբնապատճառ չէ զարձած, զա այն բազներն են, երբ ես ննչել եմ մօրս գրկում: Օ՛, ինչքան էի սիրում մօրս այդ վայրկեաններին. քունս հանդիստ էր, նրա մէջ այլ ևս չէի հալածւում, ինձ չէին տանջում անյայտ երեակայական ոգիներ. ես իսկապէս երջանիկ էի. բայց այդ այնքան երկար տեսեց, որքան կայծակի վազլելը, և ես այլ ևս չեմ յիշում մօրս պատկերը, միայն յիշում եմ, որ նա շատ էր մտածում և պանճներն չէր ժպտում: Ես նրա երջանկութիւնն էի, նա իմ, բայց նա մեռաւ, զրկւեց իր երջանկութիւնից, իսկ ես կենդանի մնալով՝ զրկւեցի իմ սփոփանքից: Յիշում եմ նաև նրա վերջին անզօր համբոյըը և ամենավերջին խօսքերը, որ ինձ ուղեց, ահա. «Թափայէլ, չը մոռանաս ինձ»: Սուրբ խօսքեր, սուրբ բերանով արտասանւած... օհ, մայր իմ, ինչպէս կարող է մոռանալ քեզ քո դժբախտ զաւակը... նա մեռաւ, ինձ ժառանգութիւն թողեց իր համբոյըը, վերջին խօսքերը և մշտնչենական վիշտը. այս վերջինն էլ նրանից ստացայ. ահա հէնց այն ժամանակ մտածել է նա ճանաչել, զգացի, որ որը եմ, մենակ եմ, թէկ հայրս կենդանի էր: Ակսեցի մտածել, որ մայրս բոլորովին անհետացաւ, բայց ինչո՞ւ... եւ հէնց այդպիսով էլ մտքերիս ծնունդը եղաւ: Բայց կեանքիս այս շրջանը համարում եմ ուկե շրջան, որովհետեւ գրանից յետոյ չ'եղաւ մի օր, որ հանդատութեամբ քիչ թէ շատ նմանւէր նրան. գրանից յետոյ սկսեցի օրէցօր

աւելի և աւելի տառապել: Մի տեղ նստում էի, ինձ պաշտում էին մտքերը, փախչում էի նրանցից, նրանք տմեն աելից ինձ հարածում էին. աշակերտական նստարանի վրայ ևս անհանգիստ էի: Ամեն բան ինձ ձաձբալի էր թուում. ոչինչ չէր կարողանում ինձ զբաղեցնել, թուում էր, թէ մարդիկ ոչինչ չեն հասկանում: Վիճում էի մի բանի վրայ, և ոչ ոք չէր կարողանում հակածառել, ես իու վիստերով, ապացոյցներով բոլորին լոեցնում էի, բոլոր վերջի վերջոյ համաձայնուում էին հետո. և ինչ, այդպիսով միթէ բաւականութիւն էի զգում. ընդհակառակն՝ վառում, բորսրում էի, որ ոչ ոք չէր կարողանում դարձնել ինձ իմ համոգմունքներից, որովհետեւ նրանք այնքան էլ նպաստաւոր չէին:

Երբ պատահում էի ինձ նման մի թշւառի, հոգիս մի տեսակ բաւականութիւն էր զգում. տեսնում էի, որ մենակ չեմ, որ ուրիշ տանջւող էլ կայ. նրան համարում էի իմ միակ բարեկամը և սկսում էի միսիթարել: Բայց երբ պատահում էի մի անհոգ, անփոյթ մարդու, արիւնա և էր զալիս, և ես զգուած փախչում էի նրանից, մտածելով՝ որ մարդիկ իրանց չեն ճանաչում, ստորանում են այն աստիճան, որ մինչև անդամ մոռանում են կեանքի հնչին լինելը:

Եյգալս էի ես: Բայց փոթորկին հետեւում է խորտակումն, անկումն: Հասաւ և իմ խիստ, անողորմ, դժիի, անոգոր օրս, այն օրը, որն իսկապէս սկիզբ էր իմ թշւառութեան: Այդ օրն էր որ ես տասցի. «Մնաս բարով, զօրնց, զու այլ ես չպէտք է աշխատես իմ տանջւող ուղեղը հարթել. մնաք բարով, երազներ, բարի, վաս երազներ, զուք այսուհետեւ օտարացած էր ինձ համար, իմ դիսի մէջ տեղ չունեք:» Այդ օրն էր, որ ես տասցի. «Տա-

ընվ, տանջանիր», սակայն չարով պատահեցի:

Չատ եմ տեսել այնպիսի որդիներ, որոնք անիծում են իրանց հայրերին. բայց իմ հայրը բարի հայր էր, նա իմ մէջ միայն սէր էր ներմուծել դէպ իր անձնաւորութիւնը, ես սիրում էի նրան, ինչպէս ոչ մի որդի չէ կարող սիրել իր հօրը: Երբ մեռաւ մայրս, իմ երջանկութիւնն անյայտացաւ երազի նման, նրանից յետոյ սկսեցի միայն հօրս ճանաչել իրեւ միակ յոյսս, ապագայիս ուղեցոյցը. բայց... Ախ, այստեղ դժւարանում եմ: Վեր կացայ տեղիցս մի առաւօտ և սովորական «բարի լոյսն» ասացի հօրս՝ մտնելով նրա սենեակը: Իմ բարի լոյսը միայն արձագանդ տաւ դատարկ, բուռ սենեակում, ոչ ոք ինձ չ'պատասխանեց: «Հայր»... Սենեակի լուութիւնը դիւթում էր ինձ. ես սկսեցի ինչ որ վատ բան նախազգալ և ինքնամուացութեան մէջ ընկայ. բայց ահա անսանձ հովը վշելով՝ յիշեցրեց ինձ, որ հօրս սենեակումն եմ: Մօտեցայ անկողնին. բայց, Տէր Աստուած... այն ինչ բան էր... հայրս չէր չնշում սովորակամնին պէս... քիշ էլ մօտեցայ, քիշ էլ, բոլորովին մօտ գնացի... և այլ ես ոչինչ չեմ յիշում...

Ոչինչ չեմ յիշում մինչեւ այն ժամանակ, երբ ուշի գալով բացի աշերս և տեսայ, որ պաւկած եմ հէնց այնտեղ, ուր հայրս էր մի քանի օր առաջ պաւկած... և մի սպիտակազգեստ ուրւական կանգնած է իմ գլխավերերը: Ֆիշում եմ, որ երբ բաց արի աշերս, նա ժպտաց, ես նորից ուշազնաց եղայ: Մի քանի օրից յետոյ զգում էի, որ ուշի եմ եկել, սակայն բոլորը վրաս նայում էին զարմանքով, և ես ապշում ու աննպատակ ծիծազում էի, երբ ինձ ասում էին՝ «իւեղագալ ես...» Առաջ գարմանում էի մի տեսակ, բայց յետոյ սկսեցի քիշ առ քիշ զգալ, որ մէս մի փոփոխութիւն է կատարել, որովհետեւ տեսնում էի,



որ լուսամուտով նայող լուսինը բոլորակացած է, մինչդեռ գրանից մի օր առաջ (այդպէս միայն ինձ էր թւում) նա դեռ նոր էր ծնւել: Աւելի յետոյ բոլորովին հասկացայ զըրութիւնս, երբ խելքի եկայ. իմացայ, որ անտէր եմ, անօնական և որբ, կատարեալ որբ...

Ես պառկած էի մենակ, անյոյս, կոտրւած սրտով: «Ուր է իմ հայրը, ասացի սպիտակազգեստ աղջկան, ուր է նրա գերեզմանը, ինձ տարձք այնտեղ, ես կամենում եմ թաղել նրա հետ միասին, ինչու ինձ մենակ էք թողել. ես ձեզ ինչ եմ արել, քարասիրտ մարդիկ, որ պատճառ էք դառնում իմ ապագայ տանջանքներին. ինչու ինձ ևս նրա հետ չը թաղեցիք, ինչու իմ յոյսերը խորտակելուց յետոյ ինձ ևս չը խորտակեցիք, ինչու խնայեցիք...»

— Հանգստացէր, դու դեռ ևս շատ թոյլ ես, պատախանեց սպիտակազգեստ աղջիկն իր հրաշալի ձայնով: Իրաւ որ ես բաւականին թոյլ էի: 2ը գիտեմ ինչու, երբ լսեցի նրա ձայնը, հառաչեցի. գուցէ յիշեցի մօրս, երբ քնում էի նրա գրկում, իսկ նա մեղմ աղօթք էք մրմնջում վրաս: Ճանաչեցի այդ աղջկան. նա մեր հարևանի դուստրն էր. նրա հայրը հօրս մօտ մեծ հաւատարմութիւն ունէր, բայց ես չէի սիրում (թէ միշտ գովասանքով էր խօսում հայրս նրա մասին), որովհետեւ նա այնպէս փակւած էր պահում իր աղջկան, որ ես կեանքումս միայն մի անդամ էի տեսել դուրսը: Ճատ անդամ նա նստում էր իրանց լուսամտի առջև և ինձ նայում, բայց հայրը հեռացնում էր այնտեղից: Զարմացայ, թէ ինչպէս նա թողել էր իր աղջկան մենակ դալ ինձ մօտ: Այդ աղջկայ դէմքն իմ մէջ մի նոր զգացմունք զարթեցրեց, քիչ թեթևութիւն զգացի, բայց թէ ինչու, ինչ յիշեցի, այդ չէի հասկանում, միայն նրա ներկայութեամբ լաց եղայ, և սիրտս իջաւ յուզմունքից:

Սակայն անելանելի էր դրութիւնս. հայրս այլ ևս չկար. ցանկանում էի տեսնել նրա գերեզմանը, վերջին անգամ նրա վրայ լալ, վերջին անգամ խօսել, վերջին անգամ համբուրել, վերջին անգամ յիշել իմ տխուր կեանքի պատմութիւնը և... մեռնել: Բայց թոյլ էի, տեղիցս վեր կենալ չէի կարող և ամբողջ օրերով լալիս էի: Դեռ հօրս գերեզմանը չը տեսած կը մեռնէի, բայց սպիտակազգեստ աղջկայ ներկայութիւնն ինձ զսպում էր: Մոռացայ ասել, որ նրա անունն Աշխէն էր—դա մօրս անունն է:

Երբ կազդուրւեցի, Աշխէնի ուղեկցութեամբ զնացի հօրս գերեզմանը տեսնելու և կեանքին «մնաս բարով» ասելու: Գնալու ժամանակ անդադար արտաստում էի և գլուխը պտտում էր: Մօտեցանք, ահա նա, մի թումբ, մի անշուր հողի կոյտ... Գլուխս պտտեց, և հողակոյտի վրայ կանգնած տեսայ հօրս ուրւականը... ուշաթափ ընկայ: Թէ ինչ պատահեց հետս այդ ժամանակ, կը զգայ միայն այն մարդը, որը երբ և իցէ բարիս բուն նշանակութեամբ թշուտ է եղել: Ուշքի գալով տեսայ, որ ուրւականը չքայել է, Աշխէնն է մօտս լալիս և թումբն է առաջիս: Լաց եղայ նորից ու նորից, կանչեցի ուրւականը, բայց այլ ևս չեկաւ. միայն արցունքներս էին հոսում. այդ արցունքների մէջն էր և իմ երդումը, և իմ հրաժեշտը, և իմ ամենամեծ վիշտը: «Ընդունիր ինձ, հայր, ընդունիր քո զիրկը, ես մենակ վախենում եմ...» այսպէս էի շնչում զերեզմանի վրան ընկած, մինչև որ մութը պատեց, և վերջին անգամ չերմաշերմ համբուրելով հողակոյտն՝ ուզեռւեցի դէպի մի կողմ: Ես չէի ցանկանում հօրս դերեզմանի վրայ վերջ տալ կեանքիս:

— Ուր ես զնում, լսեցի մի ձայն, մօրդ և հոգիները քեզ ինձ են կտակել: Ուշքի գալով նկատեցի Աշխէ-

Նին, որ ինձ հետեւում էք. ևս նրանց մոռացել էի բոլորովին:

«Ալս, այդ գու ես», և չփիտեմ ինչու, սկսեցի նորից հեկեկալ. նա մօտեցաւ ինձ, ուզում էի ընկնել, զըկեց և նոյնպէս հեկեկալով համբռութեց գլուխս, ճակատս, այտերս և լետով շրթունքներս...

Միթէ ես չեմ կարող փոխարինել զոնէ այնպիսի մէկին, որ կարող է պահպանել քո կեանքը. ծնողներդ քեզ համար երջանկութիւն և կեանք էին, թող ես լինեմ զոնէ միայն կեանքիդ պահպանը. դու պէտք է ապրես. ծնողներդ քեզ կ'օրհնեն երկնքից և երջանիկ կ'լինես:

«Ես, ես երջանիկ...» մըսմջում էի և հեկեկում փառած նրան, իսկ նա իմ հեկեկոցը լսելով՝ աւելի էր լալիս. Վերջապէս խղճացի նրան և դադարեցի լալ, որպէսզի նա էլ չը լայ, բայց սիրտս այնպէս էր մորմոքւում, որ չէի կարող ծածկել իմ հառաշանիքները, իսկ նա լալիս էր ու լալիս. Նա պէտք է ինձ մխիթարէր, բայց ես սկսեցի նրան մխիթարէլ, սակայն աւելի մեռնելու վրայ էի մտածում, քան թէ մի ուրիշ բանի:

Աշխէնը մագնիսի պէս ձգեց ինձ իր յետեից. հետեւ
ցի նրան առանց իմանալու՝ թէ ինչու, կամ որտեղ է տա-
նում ինձ, կուրօքէն հետեւցի: Նա ինձ տաքաւ իրանց
տունը. նրա յետեից ներս մտայ առանց մտածելու: Աթո-
ռի վրան ազատ նստած էր նրա հայրը—մի ահադին մարդ:
Նա իմ մտնելուց առանց բարեկու հրաւիրեց նստել իր
մօտ: Նստեցի, իսկ նա սկսեց իր քարոզները ճիշտ այն
տօնով և այն խօսքերով, ինչպէս խոստովանահայրը սնան-
կացածին է քարոզում: Նա 'ի միջի այլոց ասաց, որ չը
նայելով, որ հայրս ոչինչ կարողութիւն չէ թողել, այնու-
ամենայնիւ զիջանելով նրա վերջին յարգելի խնդրանքին,

ինձ որդեգրում է: Այդ խօսքերը վրաս այնքան էլ չազգեցին, որովհետև այդ ժամանակ ես մտածում էի, թէ հօրից լսած վերջին խօսքերն ինչ էին, բայց չէի կարողանում յիշել: Յետոյ երբ ըմբռնեցի այդ խօսքերը, մտածեցի մի ըոպէաչափ և վճռեցի անպատճառ անձնասպանութիւն գործել, որովհետև նախ՝ կեանքն ինձ ատելի էր, երկրորդ՝ միայնակ և անտէր էի մասցել, և երրորդ՝ եթէ ապրէի, պէտք է ուրիշի միջոցներով պահպանէի կեանքս. սրանցից յետոյ էլ ինչ ապրել. իմ վճռոը կայացած էի համարում—յարմար ժամանակին ծածուկ հեռանալ այդ տնից և ամեն բան վերջացնել: Այն էլ էի մտածում, թէ դուքս զնալու ժամանակ Աշխենին մնաս բարով ասեմ, թէ ոչ. ընդհանրապէս մտածմունքներիս մէջ սկսեց խառնւել այդ աղջկայ գոյութիւնը. որևէ բանի մասին մտածելիս՝ իսկոյն միտս էր գալիս և Աշխենը:

Առաջին օրը, երբ հայրը տնից դուրս էր զնացել,
Առաջին օրը, երբ հայրը տնից դուրս էր զնացել,
մենք մասցինք մենակ նրա հիւանդ եղբօր անկողնու մօտ
նստած. Նա հեկեկալով փարւեց ինձ և ասաց, որ ինքն
իմ քոյլս կլինի, թող ևս էլ իր եղբայրը դառնամ, որ
թողնեմ ցնողքներս, մահւան մասին այլ ևս չմտածեմ, և
մենք կապըենք երջանիկ, երբ կհնանայ կրստի ժամա-
նակը, ևս կը մոռանամ վշտերս. Նա հեկեկոցի մէջ ասում
էր նաև, որ իմ մահով ինքն ևս կը մահանայ: Զգացւեցի,
բայց մահւան ծրագիրն աւելի կատարելազործում էի մըտ-
քումս: Աւելի աւելորդ էր թւում ապրելը մահաւանդ այն
ժամանակ, երբ յանկարծ յիշում էի, որ ուրիշի միջոցնե-
րով պիտի պահպանեմ կեանքս: Պէտք է յիշել, որ Աշխենի
հայրը ցոյց տւաւ ինձ մի պայմանաթուղթ, որից երեսում
էր, որ մեր բնակարանը դառնում է իր սեփականութիւ-
նը, որովհետեւ հայրս պարտ էր եղած նրան մի մեծ զու-

մար: Ի՞նչպէս, առաջ ի՞նչ եղաւ հօրս ահապին հարստութիւնը, չէ՞ որ նա ասում էր, որ այդ բոլորն իրանն է, չէ՞ որ նա ասում էր, որ պարտքեր չ'ունի, ուրեմն նա խարսնմ էր... Երկի չէր ուզում ինձ վշտացնել... բայց նորից ինձ անհասկանալի է մնում այն բանը, թէ միթէ նրա ամբողջ կարողութիւնը պատկանում էր ուրիշին, ինքը ոչինչ չունէր...: Այս, ևս պիտի շնորհակալ լինէի մեր հարեանից, որ ինձ բարերարութիւն էր անում: «Բայց չէ, աւելի լաւ է մեռնել», վճռեցի երկար մտածելուց յետոյ, սակայն Աշխէնի հայեացքներն ինձ յանդիմանում էին, և ևս չէի կարողանում անտարերութեամբ նայել նրանց, տարուրեման մէջ էի: Վերջապէս վերջնականապէս վճռեցի լոել, մինչև որ բնութիւնը կամ այս կողմը ցոյց կտայ կամ այն: Տեսէք, թէ որքան թոյլ է մարդու բնաւորութիւնը, որ վճռականութիւն ասւած բանը չդիտէ: 2է կարելի այն խոհեմութիւն համարէլ, որովհետև այդպիսով ընդհանրապէս զցում է իրան թշւառութեան մէջ: Ինչու ևս յետ կագնեցի զոնէ առծանանակ իմ վճռից, ինչու վիճակս յանձնեցի բնութեան խաղերին, ինչն էր պատճառը. կենասսիրութիւնը, բոպէտկան վայելչանքը—այս: 2նայած այն ահագին տանջանքին, որի առաջ բոպէտկան քաղցրութիւնը ոչինչ է, այնուամենայնիւ մարդս ունի մի տեսակ խելագարային սէր դէպի կեանքը. ինչու, ինքն էլ չդիտէ, այլ այնպէս, նրան դժւար է թուռմ զգայունութիւնից տնպայութեան մէջ ընկնել, սառչել, ցրել և կորչել, թէն այնպէս աւելի հանդիսաւ է, թէն զերեզմանային լութիւնը յափտենական է, այնտեղ յուզումներ չկան: Եյդ անհասկանալի սէրն էր, որ ինձ ևս տատանման մէջ զցեց: Ի՞նչ անէի, մեռնէի, կորչէի միանդամից իմ մարերով, իմ երազներով... այդ խորթ և դժւարին էր թւում:

Բայց ապրելն էլ անկարելի էր ինձ: Մի խօսքով հոգուս
մէջ կատարւում էր մի ահազին կռիւ, մի փոթսըիկ, որի
վերջն ինձ աներևակայելի էր:

Միւս կողմից էլ Աշխենն էր ինձ հետաքրքրում, քաշում զէպ իրան։ Ես կարծես թէ զգում էի զէպի նախանդաղատանք։ Նա զբաւիչ կողմեր շատ ունէր, բայց ամենամեծ զբաւչութիւնը կայանում էր նրա հպարտ հայեացքում։ Սպիտակ և վայելչակազմ վիզն ուղիղ պահելով՝ աշքերը փոքրացնում էր, նայում ու ժպտում ասուածունու պէս։ Այդ ժպտի մէջ կար արհամարհանքի պէս մի բան, որ կարծես ասում էր ինձ։ «Փոքրողի...» Այդ հայեացքների տակ ես խկոյն լիշում էի մօրս, նա ևս նոյն կերպով էր նայում։ Ահա թէ ինչու սկսեցի նրան այդպէս շուտ սիրել...։ Առաջին սէրն էր, ամենասուրբ սէրը, բայց նա ծնունդ առաւ այն ժամանակ, երբ ես ոչինչ լաւ չէի սպասում կեանքից։ Օ՛, ես չեմ ուզում խօսել սիրոյ ամենաքաղցր վայելչանքների մասին, որովհետև ով սիրել է այն ուժով ինչպէս ես, նա զգում է այդ, իսկ ով չէ սիրել, անօգուտ է նրան տաելը, որովհետեւ լոկ խօսքերով չէ կարող զգալ, չէ կարող նոյն խսկ երևակայել...։ Չեմ ուզում խօսել այն կրակի, այն շանթի մասին, որն այցում է ուժգինապէս սիրահարի ամբողջ հողին, որը նրան խելազարեցրնում, սպանում է։ Ո՞վ կարող է երևակայել այն երազային հեշտանքները, որով լիրն է լինում սիրահարի սիրտը. ով կարող է զգալ մի վայրկեան, մի ակնթարթ այն ոյժը, որ թուլացնում է սաստիապէս մարզու մարմինը. — ոչ որ, ով որ չէ սիրել։ Սիրել... ով ինչ է զգում այս խօսքն արտասանելով իր սրտի խորունկ յատակից, իր զգացմունքների բարձունքից առնելով նրան։ Ո՞վ է այն ամենագէտը, որ սէր չ'ունի, բայց զգում է ցաւ, տանջանք, թըշ-

ւառութիւն և երջանկութիւն, որ զիտէ կայծակի պէս
շանթող հառաշանքներ արձակել, այրել նըանցով ուրիշ
հոգին և արցոնք խլել անզզայի աշերից:

✓ նա, ով չէ տեսել թշւառութիւն, երբեք չէ կա-
րող ճանաշել երջանկութիւնը. նա, ով չէ լացել, չպիտէ
ուրախութիւնն ինչ է. այդպէս էլ ով չէ տտել, չ
զիտէ թէ ինչ է զօրեղ սէրը—թէն ամեն ատող չէ
կարող սիրել: Ես ատում էի կեանքը և սիրեցի մի արտ-
րած, բայց այնպիսի սիրով, որ իմ մէջ ամեն ինչ
փոխեց: Թէն ինձ հասած թշւառութիւնն այնքան մէծ
էր, որ ես դժւարութեամբ էի հաշտում նորատի զգաց-
մունքներիս հետ, բռնանում էի նըանց վրայ, աշխա-
տում էի, որքան կարելի է խեղել, մեռցնել մէջս
այդ մոլեգին կըքերը, բայց նըանք յաղթող հանդիսացան: Միայն թէ այդպիսով ես չընկայ անհոգութեանն թերի
վրայ, երջանկութեան ժամին չէի մոռանում թշւառու-
թիւնս: Երջանկութիւն... ոչ, սիսալում եմ, ես երբեք
երջանիկ չեմ եղել, բացի մօրս գրկում: Աշխէնի սէրն
ինձ երջանկութիւն չտւաւ, այդ պատճառով չեմ յան-
դընում սէրը երջանկութիւն անւանել. Եթէ սէրը զիտէ
երջանկացնել, զիտէ և թշւառացնել: 2' մոռանանք ուրա-
խութեան ըոպէներին մեր արցոնքը, զգացմունք չունի
այն մարդը, որ մոռանում է անցեալը ներկայով, ով չունի
պահած սրտի խորքում այն անցեալի յիշատակը, որով
ապրել է մի ժամանակ. ով հանգստութեան ըոպէին չէ
յիշում այն երազները, որոնցով տանջել է իւր ուղեղը.
ով սիրոյ գրկում մոռանում է, թէ ինչպէս է ձեռք բերել
նըան, ինչ թշւառութիւններով է հասել այդ կէտին: Մի-
թէ ես կը մոռանայի հեշտանքներ երազելու ժամին, որ
որք եմ, համարեա բոլորից թողնւած, որ զուր է ապրե-

լը. կը մոռանայի, թէ ինչպէս երդմնագանց գտնուե-
ցայ—երդւեցի հօրս զերեզմանի վրայ մեռնել, բայց չը
կատարեցի երդումս և զեռ կենդանի եմ: 0՝ ոչ, եր-
բէք. եթէ մոռանայի էլ, իրանք կը կենդանանային մէջս
և ինձ աւելի կը տանցէին իրանց անազորոյն հարւած-
ներով:

Բայց մարդ միևնոյն հանգամանքներում չէ մոռում և
միևնոյն համոզմունքները չէ ունենում. բաւական է որ
այդ համոզմունքները թոյլ հիմքերի վրայ լինեն դրած,
հանգամանքները փոխւեցին թէ չէ, համոզմունքներն էլ
հետը կը փոխւեն: Ես վճռեցի 'ի սէր սիրոյ ապրել:

Մի երեկոյ բոլորս, այսինքն՝ ես, Աշխէնի հայրը և
Սշխէնը նստած էինք նըանդ եղբօր անկողնի մօտ.
Հայրը վրաս մի քանի սարսափելի հայեացքներ գցեց.
Հայր հայեացքներում երեսում էին ոխ, ատելութիւն և
այդ հայեացքներում էին ոխ, ատելութիւն և
ամեն վատ բան: Ի՞նչ էի արել այդ մարդուն, որ զէս
ամեն վատ բան: Ի՞նչ լիդնաց և իր տունն ընդունեց: Մի քանի
անգամ 'ի մէծ զարմանս իմ կրկնւեցին այդ դժոխային
հայեացքները. ես մտածեցի, որ նա նախանձում է ինձ,
որովհետև որդին վատ դրութեան մէջ լինելով զուցէ կը
մեռնէ: Վճռեցի այլ ևս չապրել այդ մարդու մօտ, և
որովհետև ոչ ապրելու տեղ ունէի, ոչ էլ ազգական, ինքն
էլ այնքան տհաս էի հաշտում ինձ, որ չէի կարող անձու
պահել, վճռեցի մեռնել: «Ենթազբենք թէ կարող եմ ինձ
պահել, պահապանել կեանքս սեփական աշխատանքով,
պահել, պահապանել ապրել» այսպէս էի մտածում և միանգա-
բայց ինչո՞ւ ապրել, Կան մարդիկ, որոնց ուղեղն օրւան ընթաց-
քում որևէ զործի մասին մի քանի վճիռներ է փոփոխում,
ես ևս այդպէս էի. յանկարծ վճռեցի մեռնել, մինչ

դեռ մի քանի բոպէ առաջ կեանքից բաժանւելն ինձ համար սմենածանը բանն էր թւում:

Բայց ահա տւելի վատացաւ հիւանդի դրութիւնը, նա մահամերձ է: Ո՞հ, ծէր Աստած, ինչպէս նա կուռում է մահ ան հետ, ինչպէս նա ցանկանում է ապրել: Օ՞հ, մեռած լինելը շատ հեշտ և ցանկալի է, բայց մեռնելուց գժւար բան չը կայ: Ես ցանկանում էի մեռնել, բայց ինչպէս մեռնէի, ինչպէս սիրտ անէի վերջ տալ կեանքիս... Ի՞շ, չէ որ ոչինչ չէի զգալ մեռնելուց յետոյ, ոչ ցաւ, ոչ գժւարութիւն. բայց մեռնելը գժւար էր... Տեսնում էի, թէ ինչպէս հիւանդն ուժգին չնշում է կամենալով կամել ամբողջ օդը, բայց այնտեղ՝ նրա ներսը կարծես ոչ մի կտոր անդամ չէ մտնում, նա չնշում է, չնշում ուժգնապէս, բայց ուժատպառ է լինում, արցունք է թափում, որ չէ կարողանում հովացնել սրտի ծարաւը, խօսել չէ կարողանում, միաքն արցունքով է արտայայտում: Կա պատրաստ է ամեն ինչ տալու այդ բոպէին, նոյն հոկ կեանքը, միայն թէ միանդամ լիապէս չնշել կարողանայ: Եւ ահա նա յուսահատաւած՝ դլուխը կախում է, ըստ պաշարում են ոսկի ցնորդներ, որոնցից պէտք է աժանւի, նա երևակայում է թոյլ կերպով, թէ ինչ լաւ լինի, եթէ կարողանայ ապրել... և սկսում է այդ երազերի մէջ ընկղմւած՝ խրխուալ... Բայց ահա նրա աշերին երեսմ է երկինքը, այնտեղ հրեշտակները պար բանած երգում են և նայում վրան. բոլորն իրան են սպասում, իր համար են ուրախանում. երջանիկ կեանք... ինքն էլ է ցանկանում նրանց հետ լինել, նրանց մօտ ապրել, նրանց մօտ գլարճանալ, միշտ տեսնել այդ պարերը և իրու լսել այդ զրախտային երգեցողութիւնը, և թոյլ պտում է... Ահա հրեշտակները տիրում են, սկսում են

դլսակոր աշքի տակով նայել իր վրան ու արտասւել. ինքն ևս արտասւում է: Եւ կտրելով վերջին յոյսը՝ մտածում է. «Ո՞հ, ապրելու այլ ևս իրաւունք չ'ունեմ, անշուշտ մեռնելու եմ, ուրեմն թող շուտով մեռնեմ, չը կրիմ այս անկրելի տանջանքները... բայց ոչ, ոչ, զժւար է ինձ բաժանուել աշխարհից, թող երկար նայեմ նրան:» Այդ էր նրա վերջին ցանկութիւնը. նա աշխատեց աշերը բանալ, չնշեց խոր կերպով, բայց կուրծքը չ'հանգատացաւ, բարձրացաւ, իջաւ, մի վերջին անգամ ևս շատ խոր չնշեց, աշերն սկսեց բանալ, բայց նրա հայեացքը հանգաւ օդում, և նա մի հառաջանք, մի անզօր ճիշ արձակելով սառաւ... և այլ ևս ոչինչ չէր զգում: Առջև ընկած էր նրա անշունչ զիակն, անխօս, անշարժ, անկեանք և այլ ևս անընդունակ վերակենդանանալու: Բոլորս լուռ արտասւում էինք: Ես սարսափում էի մահից. ուրեմն այդպէս էր մեռնելը, ուրեմն այդքան ծանր էր վերջին հարւածը. Ես մինչեւ այդ ժամանակ չէի կարողացել երևակայել նրա ամենաթեթև զարկն անգամ: Վերջնականապէս վճռեցի, որքան կարող կ'լինեմ ապրել, ապրեմ. զա համարում էի ամենավերջին վճիռ:

Մենք լուռ արտասւում էինք: Հայրը մըմնջում էր կցկտուք կերպով: «Ուրեմն ես անժառանգ մնացի... ուրեմն Աստհած ինձ այսպէս ինստ պատժեց մնորեիս ևամար... այս, ես մեղառոր եմ... անզարակ մնացի... այլ եռու ոչ որ չ'ունեմ...» Այդ խօսքերը մէջս կարեկցութիւն էին զարթեցնում դէպ այն մարդը, որն ինձ ատեսմ էր, ևս ցաւակցում էի նրան, բայց ևս զարմտնում էի, թէ ինչո՞ւ է նա տառմ, որ անժառանգ մնաց, չէ որ Աշխէնը կար, միթէ նրան իր զաւակը չէր հաշտում, միթէ նրան չէր սիրում: Ես տեսնում էի զարմանք նաև

Աշխէնի մէջ։ Սակայն այդպիսի ըոպէներում շատ բան
կարելի է լսել և չը զարմանալ, վշտացածից չէ կարելի
պահանջել, որ նա խօսէ այն, ինչ որ կայ. նրա սիրութ
նման է հրզեհող ժայռին, որն իր մեջից թափում է
ամեն բան, որ ոչնչի խնայել չը կիտէ. նրան ինչ հոգ,
թէ լաւայի հեղեղը կ'կործանէ ամեն ինչ, նա պէտք է
դատարկւի, նա հանգիստ է ուզում։ Արցունքը և սրտում
կուտակւած հառաշանքը դուրս ժայթքելով՝ թեթևա-
ցընում են մարդուս, բայց պէտք է նկատել, որ նախ և
առաջ բորբոքում են վշտերը և յեսոյ մոխիր դարձնում,
ճիշտ այնպէս, ինչպէս հրաբուղիք դուրս թափելով՝ իր
կրծքում դիմւած եռացող լաւան՝ արտաշնչում է հակա-
յարար, արտաշնչում և յանկարծ փշրւում՝ ուժգնապէս և
խառնելով հրեղէն հեղեղի հետ՝ տարւում է նրա հոսան-
քից՝ թողնելով իր յետքից աւերած և ամայութիւն։

Ես ես լալիս էի նրանց պէս սրտագին. ինչո՞ւ...
ինչո՞ւ... շէ որ ես ես նոյն վիշտն ունէի, շէ որ դեռ
շատ շէր անցած այն օրից, երբ մեռել էր հայրա. թշ-
ւառութիւնը թշւառութիւն է յիշեցնում. նրանց արցունք-
ներն ինձ ասում էի, որ ես աւելի դժբախտ եմ, քան
թէ նրանք, որ ես աւելի եմ զրկւած, քան թէ նրանք.
Նրանցից մինը ողբում էր իր որդուն, միւսն իր եղբօրը,
իսկ ես ողբում էի երկու բան—և՝ ծնողներիս և ինձ.
Իմ հոգու փոթորիկն աւելի մեծ էր, ես առանց այն էլ
շատ էի տանջւել, շատ էի ողբացել. ինչ գրութեան մէջ
կ'լինի ջղային, ամեն բանից զրկւած պատանին, որի
կըծքի տակ հազարաւոր զգացմունքներ կան աւերակ
դարձած, որը տանջել է միշտ ուզեղը մտորումներով,
որը մորի հանգիստ աւած բանը չը գիտէ, որը չէ
խնայում իրան և միանգամից ահճնատուր է լինում վրշ-

տերին, կեանքի գառն հոսանքին, թէկուզ ուր էլ քշելու
լինի նա: «Կեսար... որքան շատ բան է հասկացում
այս խօսքից, որքան սարսափ է ազգում վրաս, երբ
մտածում եմ, որ նրա մէջն եմ. ահ, զօր Արարչի անզօր
արարած... ձշմարիտ, մերթ—մերթ ինձ մեղագրում եմ
թուլութեանս համար. ինչո՞ւ չ'ունենալ զօրեղ կամք,
ինչո՞ւ չ'ապրել ապրելու նման, ինչո՞ւ 'ի շարը զործ
կնել այն երկնային տուքքը, որ կոչում է կեսար. ին-
չո՞ւ... ինչո՞ւ... բայց ինչո՞ւ նա չէ դրւած այնպիսի հի-
մունքների վրայ, որ մարդուս մէջ չ'ծնեցնէ այնպիսի
գժնի մտքեր, որպիսիներն իմ մէջ են ապրում. ինչո՞ւ
սիրոյ հետ ատելութիւն ես կայ, որը պղտորում է մար-
դու զոյութիւնը, ինչո՞ւ բարին ու շարը խառն են...
բայց ոչ, եթէ շարը չ'լինէր, բարին ոչ ոք չէր ճանաչիլ,
եթէ մահը չ'լինէր, կեանքը ոչ ոքի աշքում ոչ մի դին չէր
կարող ունենալ: Էհ, ես էլ չեմ հասկանում, թէ մէջտ
ինչեւ են կատարում:» Այսպէս էի մտածում ինձ մոռա-
ցութեան տւած այն ժամին, երբ գիակն տուածիս էր.
մտքերիս յաջորդում էին նոր մտքեր: Այդ բոլորն ինձ
հասցըրին այն վճռին, որ չ'պէտք է մեռնել, քանի որ
կ'ապրեմ: Ինձ չ'էր սարսափեցնում գերեզմանի սառնու-
թիւնը, չ'էր վախենում ոչնչամնալուց, բայց մեռնելը
թւում էր ամենադժւար բանն աշխարհիս երեսին, աւելի
հեշտ էր երեսում տառածանալ, քան թէ մեռնել. ամենա-
ծանը տանջանքի կոյտն աւելի թեթև էի կարծում,
քան մեռնելու ցաւը. աւելի լաւ էի համարում ընդ-
միշտ տանջելով ապրել, քան թէ զրկել բանականու-
թիւնից և չնշելուց. մի խօսքով մեռնելու ըոպէին կրած
կսկիծը խիստ էի համարում միլիօն կեղեքումից: Եւ ես
վճռեցի:

Ապրում էի, կեանքը կատարելապէս տիրապետել էր ինձ, բայց հոգուց կրակն անպակաս էր: Եւ ահա բարձրացաւ մի նոր կրակ ևս նրա մէջ, սկսեց աւելի փառւել, դարձաւ հրդեհ, սկսեց մաշել և հոգիս և մարմինս: Ո՞վ է ասում, որ երջանկութեան միջից բացակայում է տանջանքը, որը եթէ վերածենք մասերի, կ'տեսնենք, որ բացի զուտ թոյնից ոչինչ չէ պարունակում իր մէջ. սիրոյ հետ կրծքի տակ է մտնում և այդ թոյնը, նրանք միասին են սնուում, անբաժան են:

Կարծես թէ մօտենում էի երջանկութեան և կ'հասնէի, եթէ չլինէին իմ յետքում մնացած աւերակները, եթէ գոյութիւն չունենային մի քանի գերեզմաններ, որոնց յիշատակը վառելանիւթ էր թոյլ հոգուս համար. այո՛, կ'հասնէի, որովհետեւ ինձ համար սիրոյ տանջանքը երջանկութեան նախադուռն էր: Կոտրած էր սիրտս, ևս ուզում էի նրան կենդանացնել, բայց չ'էի կարողանում—ահա մի անզօր ժպիտ, բայց և իսկոյն ահա յանդիմանութիւնս արածիս համար:

Աշխէնը շուտով մոռացաւ եղբօր մահը և վշտակից էր լինում ինձ. կարծես նրան հայրս սիրելի էր իր եղբօրից: Մինչեւ անգամ մի օր, երբ թեանցուկ շրջում էինք դետի ափին, նա ասաց, որ մանկութիւնից սկսած դէպ իր հայրը միշտ սառնութիւն է ունեցել, որ նա չէ սիրում իրանց ընտանիքը, եղբօր մահն այնքան էլ ցաւալի չէր, ինչպէս և մօր մահը ցաւալի չէր, որովհետեւ եղբայրն էլ հօր բնաւորութիւնն ունէր—խորամանկ, խարեբայ և անմարդասէր, որ իր հայրը մի տեսակ փատաքով է նայում իրան, կարծես իր գաւակը չլինի, որ դրանով իր ատելութիւնն օրէցօր շատանում. է դէպի նա, իր բնաւորութիւնը հօր բնաւորութեան հակապատկերն է,

որ հայրն իրան միշտ փակ է պահել, մանաւանդ եղբօր ծնւելուց առաջ, որ վրան հսկում է ամենայն եռանգով, որ շատ անգամ տարօրինակ հայեացքներ է զցում, շատ անգամ ըովէներով աշքն իր վրան է յառում, իսկ ինքը չը գիտէ զրանց պատճառները, միայն այդ բոլորից այն է երեսում, որ հայրն իրան մի փոքր շատ էր սիրում, քան թէ հայրը, բայց նա էլ էր շատ անգամ արհամարհական խօսքեր ուզգում, մանաւանդ երբ եղբայրը ծնւեց: Ըստ անգամ ինքը քաշւում էր մենակ իր սենեակը և մտածում, որ միթէ ինքն Աստուծայ արարածը չէ, որ միթէ աղջիկը տղայից պակաս սիրելի է. մտածում էր, թէ ինչու են ատում իրան, և սուզում տիբրութեան բովի մէջ:

Ես մնացել էի զարմացած, թէ միթէ ծնողների և զաւակի կողմից այդքան սառնութիւն կարող է լինել դէպ իրար: «Ուրեմն այս աղջիկը չէ կարող սիրել մի ուրիշն, քանի որ մինչեւ անգամ իր ծնողներին չէ սիրում, մտածում էի ես. և միթէ այսպիսի հօր զաւակը կարող է սրտում սէր ունենալ»: Բայց անուրանալի է, որ նա ինձ նւիրւած էր բոլոր հոգով: Այնուհետեւ ես և նա միմիանց հետ խօսում էինք իրեն եղբայր ու քոյր, և այսպէս էլ անւանում էինք միմիանց: Մեր երկուսիս բնաւորութիւններն այնքան նման էին իրար, որ կարծես մի մօր զաւակներ լինէինք, նրա հոգին յուզում էր այն, ինչ որ իմ հոգին, ահա թէ ինչու այդքան շուտով կապւեցինք միմիանց հետ բարեկամական նեղ կապերով:

Որքան երանելի է գիշերը մահճի մէջ՝ վիրմակի տակ մտարենել սիրելու դէմքը, նրա հայեացքը, նրա ժպիտը և նրանով երազել անվերջ, հեշտանքներով յագենալ... Բայց երբ յանկարծ հոգսերը գալիս են դիմացդ անողոր-

մարտար կանոնում, հինգ այդ ըռպէին զոյութիւնդ թունաւորում է։ Այս, հոգսեր, հոգսեր, դուք ինչու կաք... Հագաղը երանի, թէ այն ըռպէին մահը հանդարտութեամբ կորպէը հոգին, էութիւնը, մարզս ոշինչ ցաւ չզգար, մեռնէր, կորչէր առանց վախենալու, որ դադարում է զգալուց։ Հաւզար երանի, թէ մարզս այդ երազների շրջանից դեռ դուրս չեկած՝ քնէր մշտնջենական քնով, քան թէ յանկարծ ըպար, որ ինքը մի թշառ է, մի ցնորաբան, քան թէ հոգուերն այդպէս յանդզնութեամբ ծիծաղէին վրան, իսկ նա պատպանձւէր նրանց առաջ։ Այդպէս ժամանակ կարող եռ միայն անհամեստաբար անիծել քո զոյութիւնը, իսկ ուրիշի վրան անկարող ես բարկութիւնդ թափել, կարծես թէ ամեն բանի մէջ ինքդ ես մեղաւոր, ինքդ ես միայն չնշին, փոքրոգի, զուրկ առողջ դատողութիւնից, իսկ ամբողջ տիեզերքն ընթանում է յառաջադիմութեան ճանապարհով զէպ երջանկութիւնը, ասուածութիւնը, դէպի ծշմարտութեան գաղաթնակէտը, դու ես միայն, որ կամոնում ես նրան ցնորաբանելով հասնել։ Այդ ըռպէին մի վայրինի յեղնութիւն է ստեղծւում հոգումդ, ինքդ սկսում ես քեզ ատել։ Սարսափելի է, երբ մարդ ինքն է իրան քըննապատ հանդիսանում, չկայ վրանից անաշառ քննադատութիւն։ մարզս գրկում է իր ամբողջութիւնը, նա այլ ես անզօր է պաշտպանելու իրան իր զէմ, ինքն է բողոքում վաստիրով, որին ոչ մի վկայ պէտք չէ, որի ամենաստոյդ վկան ինքն է։ Նոյնքան սարսափելի է, երբ ոճագործն ինքն է իր համար վճիռ կայացնում, նրա վճույց արդարը չը կայ։ Ահա առջևող վալիս՝ կանդնում են մարդկութեան վաեմ գործերը, սկսում ես ամաշել, որ դու նրանց ոշինչ ես համարել քո ոշնչութեամբ, զգում ես, որ ինքդ քեզնից գատապարտած ես, և մտքերդ իրար են

խառնւում, հոգիով դառնում է փոթորկալից ովկիանոս, որի սահմանը գտնել չես կարող երբէք: Դնկատում ես, որ ինքով ես քեզ համար Աստծուց շնորհւած բաժակի մէջ թոյն ածում, և երբ արդէն լցւած կ'լինի և կսկսի թափ-ւել ափերից, այն ժամանակ կ'կործանւես. օ, չ'համնէ այդ օրը: Բայց սպասիր, ահա յանկարծ թշւառականիդ ցեխից բարձրացնում է մէկը, դու թողնւած չես, դու այնց ստոր չես, որքան կարծում ես, ունես զօրաւիդ—քան ստոր չես, որքան կարծում ես, որը չէ կարող նա քո սէրն է, այն սէրը, որն անճառելի է, որը չէ կարող արտայայտել մարդկային լեզով, այլ միայն սրտով. թոյլ է մարդու լեզուն, նա կրակով չէ վառւած, նա հրեղէն չէ, և դրա համար չ'ունի այնպիսի խօսքեր, որով կարելի լինի արտայայտել ազնիւ Սէր, ձշմարտութիւն, Աստւած. Լինի արտայայտել ազնիւ Սէր, ձշմարտութիւն, Աստւած. Նրանք միացած են իրար հետ և նրանք են միացնում անհատին ընդհանութեան դրօշակի տակ ապրող անհատ-ների հետ, նրանք են դնում իրանց հասնելու ճանապարհի վրայ. Վայ նրան, ով չէ ճանաչում նրանց սրբազն միու-թիւնը, նա թշւառից թշւառ է: Ես չեմ խօսում Արա-մազդի երեակայական մեծութեան մասին, չեմ խօսում երօտի, Աստղիկի, Ամուրի մասին, որոնք միայն վառ երե-ւակայութեան արդիւնքներ են, խօսում եմ այն ձշմարտու-թեան մասին, որ կառավարում է տիեզերքը, բայց միայն արարածի միտքն է հեռու նրանից: Միթէ նա չունի այն բարի յատկութիւններն, ինչ որ վերագրում են Ամուրին, չարաճճի երօտին կամ իւպետերին: Ջատ մարդիկ սովոր են եղականը թողնել և ցնորդներով ապրել, բայց կ'գայ ժամանակ, որ այդ ճշմարտութիւնը կ'ճանաչւի ամենքից իրեն միակ Ստեղծիչ, միակ Կառավարիչ ամբողջ տեղերքի: Ե՞ս խօսեմ նրա մասին... ո՛չ, նա անճառելի է: Նա է սի-րոյ սկզբնապատճառը, նրա պատկերն է ամեն մի վեհու-

թեան մէջ արտափայլում, և նա է երկու սրբազն միու-
թեանց շաղկապողը: Նրանով գոյութիւն ունի կեանքը,
ամեն բան նրանն է, նա է թագաւորում ամենքի վրայ,
անթիւ են նրա իրաւունքները: Եւ ով կարող է որոշել
նրա կատարելութեան սահմանը, ով կարող է խօսել նրա
մասին իր թոյլ խօսքերով. ոչ, լռել, աւելի լաւ է լռել,
թէև սիրտը երբէք չէ լուս, մինչև որ մարդը դադարում
է զգալուց:

Դառնանք մեր պատմութեանը, մարդկային ամբողջ հոգին չէ կարելի միանգամից նկարել, որովհետև նրա խորհուրդներից շատերն անհասկանալի են. ինչ են խանդը, նախանձը, կիրքը, սէրը, զգացմունքը. միթէ այս բոլորը կարելի՞ է դուրս թափել հոգուց, դնել ուրիշների առաջ: Հոգին մի անծայր ովկիանոս է, իսկ միտքը—նաւակ. թող այդ սլացող նաւակը ճեղքէ հոգու մոլեգին ալիքները, անցնէ, որքան որ կամենայ, բայց համնել նրա խորքերն—անձեռնհաս կ'լինի: Խորհրդաւոր է հոգին և նրա ամենամեծ խորհուրդը կեանքն է, որ միշտ միակերպ չէ հասկացւում: «Ապրել... մտածում էի այն ժամանակ, ինչու, չէ որ աւելի տանջուում, թշւառութիւն ենք կրում, քան թէ երջանկութիւն տեսնում: Իսկ եթէ չ'արժէ ապրել, ապա ինչու մեծ Փրկիչն իր անձը զոհեց մարդկութեան համար, ինչու բաց արաւ յառաջադիմութեան, ապրելու ճանապարհ... Ո՛չ, կեանքն անհասկանալի է, անճանաչելի է, երեկի աւելի լաւ է ապրել, ապրել ճշմարտութեան համնելու համար: Մեր նպատակակիցն է ձշմարտութիւնն, ամենամեծ և ամենաաշխատացին ձգտումն է նրան համնելը, և նրան հասնելու ճանապարհն է կեսանքը, իսկ այդ ճանապարհով գնալու միջոցն է սէրը, որն ստեղծւած է ճշմարտութիւնից. ուրեմն կեցցէ Մէրը, կեցցէ յառաջադիմու-

թեան ուղեղոյցը, մարդկութեան սուրբ առաջնորդը, կեց-
ցէ ճշմարտութեան հասնելու սկզբնապատճառը: Հնդիա-
նուր մարդկութիւնն առաջնորդում է նրանով դէպ իգէա-
լական ճշմարտութիւնը, որն ընդհանուրի դէվիզն է, հե-
տևապէս և ամեն մի անհատի»:

Ես ապրում էի սիրով, և այդ սիրոյ մարմնացումն էր
Աշխէնը: Սիրով ապրել, երջանիկ լինել՝ նշանակում, եթէ
չկան ուրիշ հոգսեր, որոնք թունաւորում են երջանկութիւ-
նը (սիրոյ տանջանքի մասին չէ խօսք): Բայց մարդ ա-
ռանց հոգսերի այնքան էլ հեշտ չէ երևակայել. հոգսը
կապւած է հոգու հետ սերտ կերպով: Ես ապրում էի ու-
րիշի տանը, և բաւական էր, որ այդքանը յիշէի, բաւա-
կան էր, որ մտածէի թէ՛ ձրիակեր եմ, սուզում էի մտա-
տանջութեան անծայր խորխորատի մէջ և ամեն ինչ ոչըն-
շանում էր առաջիս, նոյն իսկ սիրոյ վայելչութիւնը: Մտա-
զըրւեցի թողնել այն վայրը, որ հոգուս մէջ սիրոյ հետ թոյն
էր լցնում, և... թողեցի: Թողեցի այդ սիրելի և ատելի
տունը, բայց դրանով չ'ազատւեցի անհանգստութիւնից,
հալածանքից. շատ անգամ պատահում էի Աշխէնի հօրը,
որի հայեացքն ինձ ասում էր. «Դու ձրիակեր ես եղել,
որու մուրացկան ես եղել»: Եւ նա ինձ հալածում էր: Պէտք
է փախչէի հալածանքից՝ թողնելով երկու ամենաթանգա-
գին առարկաներ՝ երկու գերեզման, թողնելով սիրուս մար-
գին առարկաներ՝ երկու գերեզման, թողնելով սիրուս մար-

Հասալի:
Հըաժեշտի երեկոն էը: Աշխէնի հետ միասին գնացի
իմ սըբավայըը: Ահա այն երկու անշուք հողակոյտերը դի-
մաւուրեցին իմ արցունքներին: Էլ նրանց վրայ ինչպէս մի

ժամանակ ուրբական չ'կար, նրանք տիսուր էին, լոիկ ու ամայի և այդ ամայութեամբ փառահեղ էին երեսում: Թւում էր, թէ մայրս աղօթք է մըմնջում վրաս արցունքն աշերին և հայրս յանդիմանում է ինձ....

Ժամերով չէի կարողանում հեռանցից, իսկ հեռանալիս՝ կարծես թէ ինձ յետ էին կանչում անյայտ ոգիներ դէպ երկու թմբերը. դառնում էի, թէս ոչ ոքի չէի նկատում, բայց վազում, գրկում էի գերեզմանները հեկեկալով և նորից հեռանում, նորից դառնում: Վերջապէս անզգայութեան մէջ մի աներեսոյթ ոյժ հեռացրեց անձկալի շիրիմներից, և ինձ տեսայ Աշխէնի թեմին յենւած մի բլրի վրայ: Նայեցի ամեն կողմ: բոլորը ծանօթ էր: Հանդարտ մըմնջացի.

«Մնաք բարնվ, անզին շիրիմներ: Ես թոյլ եմ, անկար, թող ձեր յիշատակը լինի ինձ պահապան: Անդարձ հոգիներ, օրհնեցէք ինձ երկնքից, որ ես չկորչեմ աշխարհային անդունդների մէջ, ես անփորձ եմ: Դուցէ կէսպիշերային պահուն բոլորից ծածուկ երբ և իցէ ձեզ այցելութեան կ'զայ մի թշւառական, գուցէ երբ և իցէ մի կենսահամած ձեզ վրայ կ'բանայ իր սիրտը, գուցէ նրա հեծեծեանքը ձեր հանգիստը կ'վրդովէ, և նրա արցունքը կ'այրէ ձեր հոգին, կ'մորմոքէ զերեզմանի խորքերում, չ'մերժէք նրան»:

«Մնաք բարնվ, հայրենի տուն. քո մէջ ծնւեց այն մահկանացուն, որի սրտի մէջ ընդմիշտ արիւն է կաթել. քո մէջ ծնւեցին այն տառապանքները, որոնք այրեցին և զեռ մորմոքում են ուղեղս. բայց չեմ անիծում քեզ: Այլ ևս քո միջում չեն լսիլ հառաշանքներ, և ոչ մի շուկ չի խանդարիլ դիւթական լուութիւնդ: Հանդիսատ եղիր, մնաք բարնվ:

«Մնաք բարնվ, հայրենի լեռներ, այլ ևս ձեր վրայ չեմ զմայլւիլ գիշերային խաղաղութեամբ, և ձեր միայնացած ժայռը չի լինիլ իմ երազատեղին: Անձրկը խուլ կը շառաչէ ձեր կատարի վրայ, կամ արծիւր թերը տարածելով հպարտ-հպարտ կ'կանգնէ և կ'դիտէ, թէ ինչպէս է անդունդների մէջ գալարում տանջող կետը:

«Մնաք բարնվ, հայրենի գետակ, այլ ևս չեմ գալ ափերիցդ դիտելու, թէ ինչպէս աստղերը երկիր են իշել և թագնւել քո մէջ. թէ ինչպէս դու վոյվոյով կոծում ես օրհասդ, կամ շառաչելով—հառաչելով թափ ընկնում, վշրուում յոզնած: Անքախտ, անհանդիսա գետակ, մնաք բարնվ:

«Մնաք բարնվ, հայրենի լուսին, կաթնանման, ամօթխած ճրադ, որ վինտրածդ չես գտնում: Եղիր լուսաւոր որքան կամենաս, աւելի վատ, չես կարող տեսնել, թէ ինչ է թագնւած խաւարում»:

«Մնաք բարնվ, աստղեր, դուք շատ անգամ էք յուզել միտքս. ես հեռանում եմ ձեզնից, ինձ նոր երկինք պիտի ողջունէ»:

«Մնաք բարնվ, արծաթեայ դաշտեր և ուրախ վայրեր. անկարելի է, որ այս ընդհանուր ցնծութեան մէջ ապրէ մի մոայլ հոգի: Հանգիստ ձեզ և դարաւոր քուն....:

«Մնաք բարնվ և դու, իմ միակ կենդանի միխթարանք, իմ պաշտելի էակ, սիրոյ և բարութեան աղքիւր. թող իմ վերջին համբոյըն անմոռանալի լինի, մեր արցունքները միանան իբրև երկու սիրող սրտերի վշտակցութեան շաղկապ, և մեր սրտերի միջնորդը թող լինի մշտնջենական սէրը....»:

Երկար ժամերով գրկած իրար, համբոյըն արցունքի հետ խառը, չէինք կարողանում անջատել: Քանիք-քանի

անգամ կամեցայ փոխել մտաղըութիւնս, բայց յանկար-
ծակի միտս էին գալիս Աշխէնի հօր դժոխային, շանթուտ
հայեացքները:

Եւ ես հեռացայ: Վերջապէս ամեն բան, ինչ որ ծանօթ էը ինձ, կորաւ աշքիցս... կորաւ ընդմիշտ... Ես ըըռնեցի պանդխատութեան ճանապարհը, նոր աշխարհ, նոր բախտ որոնելու յետեկից ընկայ...



4 0 8 0 8 0 0 0 0 0 0 0 0 0 0 0 0 0

Հայունիքից շառա, մերաբութիւնից զուրկ,

Սիրաւ կոտուած ընկած էի մի Օտար անկիւնում։ Օտար մարզն ապաբախտ է մարզու երբ շուրջն է նայում եւ տեսնում է, որ բոլորը նայում են վրե Օտար Հայացքով։ Օտար զգացմունքով է Սարսափում, զողուած ես մռածելով որ ոչ ոք թեզ օգնութեան չի հասնի և նեղ րոպեներին, եւ որ Բոյ և ուժերը կնկա ւեն մի միացեալ փոքր ոյժի տաշօ Դառնամ, գաւնմ այնտեղ, ուր ամեն ինչ ծան Օթ, Հայրենի է ու Բայ Ք բայց այնտեղ միթէ պաշտպաններ շատ ունեմ ուր փա խցեմ, այն որ անկիւնն է ուր Տարզկութիւն Հկայ Ան անիւլո մարզ, բայց միթէ բնութեան ձեռքի և կարող ես ազառուել ու վարկու, ապրեր ընդհանուրի հետ, նոր բարեկամը կարող է բանել հնի տեղը։ Բայց ամենքի բնաւորութիւնը մէկ էւ, շուրջը քը գաղափարիդ մարդ Հկայ, ինքդ մենակ ես ծնել, մենակ է լ-պէտք ե ապրես։ ՀՀաշում ես ճարահատեալ

Հազար ու մի մաքեր խոցոտում, են կեղեքում եք
սիրոս, ես Օտար էի, ըուլորն Օտար եին։ Ծնոր դիւ
ընաւորութեանս անկայ ունութեան շուտով վհատւեցի
և հայ նացքներս կրկին փոխւեցին ամեն բանի մասի
թէ ինչ էր զրութիւնս Օտար երկնքի տակ, եւ ինչ
յարաբերութիւնների մեջ էի զեպ ԱՇԽԵՆԸ, այդ երե
կում է մեր Նամակներից։ ահա նրանք։ ոյդ ոյ

ԱԽՐԵՆԻ ԲՈՅԱՐԻԿ.

թե որքան նեղութիւններ կրեցի, որքան տառապեց
տի մենակ, Օտար աշխարհում քեզնից հեռու, անասէ
լի է ։ Տաղառակ, մի օրինակ, ձան ճրանի կեանքը ինձ
յոռետես է շինել, հառացրել ամեն բանից, մինչև եւ
անգամ ոռ սիրուտ թերեւ զու ես ամենամծոփկը, որ
ովհետեւ զու յիշեցնում ես այն օրերը, որոնք

Կեանքիս մէջ միանգամ փայլել են ու կորել եւ
այ և եւս չեն երեւալու ծրագ օրեր...

Աշխեն դու նրանց գիշատակն ես, այ ն օրերից
միայն զու ես մնացելո թող որ իմ սիրոը միան
որ սրտի հետ կապւած մնայ յաւիտյան, նա մենակ
է կարող ապրելո.

Այժմ որութիւնս անտանելի է, մտքերս կոր-
ուել եմ Հգիտեմ թէ ինչ եմ մտածում, կարծես
զրկւած եմ բանականութիւնից, ոչնչի չեմ պաշ-
տում, ոչնչի չեմ սիրում ուինչ եմ ճանանչում, մ
ամեն ինչ լուել է իմ մեջ Այգտեղի կեանքը
ընդարձակել է միշտ երեւակայութիւններիս սահ-
մանը, բազմապատկել է երազներս, յոսերս, որով
հետեւ դումոսս ես եղելի քեզ սիրելիս եմ եռել,
այդտեղ տանջանել եմ սիրոյ տանջանքով / սիրոյ տ
տանջանքը կրթում՝ Տոգին /, այդտեղ շատ եմ ոսկ
ոսկի ժամեր ունեցել յահակ այստեղ զանութիւնների
շնորհիվ սրտումս սէր Հկայ, ես կորած եմ ընդ-
միշտ, մաշտող սրտիս տակ առում է արհամարանքը
ես վերջ ի վերջոյ հրեշ պիտի դառնամ։ Որքան
վատ է որ մարդ գիտէ իր ապագան, մանաւանդ երբն
նա աննախանձելի է, ինչպես իմրէ իջարկէ մաւապ
պարտը տանջում է աւելի, թան թէ ազատ մարդը

որովհետեւ նա գիտէ իր ապագան ։ իսկ իմ վիճակ
կը մահապարտի վիճակից լաւ չես ինչ անեմ, ինչ
ով զրառեմ, կայ արդեռք մի հնար ազատուելու
այս շարութեան թակարդից... որնէ... միայն
մազ կարող է Փրկելո

Մին, ինչու Օրերն այսպես աննկատելի, այսպես
արագ կերպով անցնում են, ինչու մոլորված եմ ա
այսպես, միթէ նոյնը չեմ, մի թէ մտքերս գողացել
են եւ նրա տեղն ուրիշները դրել, ինչպես Արտավա-
զդ մանուկինվա վիշապազուները գողացան եւ տեղը
չար զեւ գորինօ Գուցերարի զզացմունքներոս սպառ
ւել, անհետացել են, ինչու վիշտ արտայայտել դ
դժվարանում եմ, ինչու կեանքի դառնութեան դրոշ
մը իոր կնքւած է ճակատիս, եւ ես հնազանդուամ
եմ Բաւարու Շահերի թ

եմ Թունաւոր մողերիս թափառնքին կատարեալ
սորկական հլութեամբ նրանք ինչ գերել են,
չեմ կարուսանում նրանցից ազատ մնալ մի ժամ,
նրանք մէջն հաստատուն հիմքեր են դրեւեան
շում, մաշում են ինչու նրէ երբեմն գոծում է
գիւանդ ուզեղոս, այն էլ երեւակայում է անցան
կալին ուսարսափելին Ան, ազա նոյն իսկ այժմ
ինչ եմ զգմամ ... անողոքելի աշխարհ, մտքեր
անծայր, անհատուկ ովկիննոս, զու արեան կաթիւ
ներից ես զոյացած, որ պատկերով սարսափեցնում
ես ինձ, հեռու, հեռու, թող հանգստանայ յոգ-
նած ճակատս, նա օեզ չէ կարոտում... բայց ոք
ու, չեմ հանգստանում, կորել՝ իմ միջից իմուղը-
եւ սովորական անձրացուցիւ, սպանիչ մողերն
անհանգիստ են անում ինձ իրավում հպարտ հոգի
որի սլացը մի ակնթարթում անհունութիւն է
կորում։

Բոլորն ուստ են ինձ համար. Հկայ մեկը,
որի ներկայութեամբ գէթ բովեապես մոռանամ
վիշտու, հնեածոս տա անգամ մոռանում եմ ալբողջ
աշխարհը, Հկայ մեկը, որ մի քանի սփոփիչ իրա-
ծեր արտասանեթ չէ որ սփոփանքը թեթեւացնում է
տանջանքը թէնեւ նա բարեւութիւն է մրայն թուլորն
անուռ, երշաներկ են, ըսկ ես ինչու նրանց պէս
չեմ, ինչու շտորի նման անփոյթ չեմ, ինչ են
տալու ինձ այս մողերը... Ծըմ, բայց այս ինչ
եմ ասում, միթէ կարող եմ անփոյթ լինել եւ
չեմ լինում ուր եր, թէ ես էլ կարողանայի
ինձ այն հասարակութեան անդամ համարելու, որով
շրջապատվաց եմ. Բայց հնձ ով է տւել Հռուեկան
հանգիստ, նա աշխարհի հարազատ զավակն երի համար
է ստեղծւած, իսկ ես խորթ եմ...

Զ, գիտես այս մողերն ինձ երկար պիտի տանջեն
թէ կգայ եւ մի օր, որ իսպան կրատանեմ նրանցի
սպակայն կարծես թէ գամոզուամ, եմ, որ նրան հետա-
զուեզման պիտի իջնեն իրանց մշտադալար ոյժով։

Ինքս իմ ուոգին չեմ ճանաչում ուրեմն ուրիշը
երբեք չէ կարող ինձ համկանալ հետեւապես մի
մշտական թշնաւոր թշնաւական եմ ես։

Երեւի կը հետաքրքրւես կեանքի մասին ունեցած կարծիքովս, ասեմ. կեանքի եւ մահւան մեջ կայ այն տարբերութիւնը, որ մահւան խաղաղութիւնը չկայ կեանքի մեջ, իսկ կեանքի տառապանքն երբ բացակայում են գերեզմանի խորթերից, որն աւելի քիւրասէր է. Թան կեանքը: Դեմ հասկանուաթէ ինչու ենք ճնշել բայց այստեղ ինչ անհասկանական կայ, բնութիւնն իր գործն է կառուել, մրշուներն ինչու են ճնշուամ, մենք էլ պայնպէսոյ Պետք է ասել, որ աշխարհն էլ գերեցամ է,

է, միայն աւելի դժնի, խաւար, քան իր սառն խորշերը, ուր ննջում է մահւան զաւակը, և աշխարհն աւելի անուր է, քան օտարականի աղքատ շիրիմը... Ո՞հ, բաւաշուր է, իմ աշքում մահը գերազասելի է կեանքից:— Եթէ կան է, իմ աշքում մահը գերազասելի է կեանքից:— Եթէ այդպէս է, էլ ինչու ես ապրում, գուցէ կհարցնես գու: այդպէս է, լսիր պատասխանս. հետաքրքիր է ապահաւացի ես, լսիր պատասխանս. մի ոյժ ինձ ստիպում է շարունակել ճանապարհս, գան, մի ոյժ ինձ ստիպում է շարունակել ճանապարհս, գու, մի ոյժ ինձ ստիպում է շարունակել ճանապարհս, գու: թէ չեմ կարծում, որ երկար լսեմ նրան, գուցէ շատ շուտով կգնամ յաւերթական հանգստութեան սառնասիրտ կը կարող ես, միտիթարիր ինձ:

Քո դժբախտ Ռափայէլ.

Թամակիմ Թափայէլ!

Նամակդ իմ վաղուց ցամաքած աշերից արցունք հոսեցրեց, և ահա, հինց այս ըոպէիս, երբ ես գրում եմ... բայց կարծեմ ինքդ հասկանում ես իմ սիրտը, կարծեմ տեսնում ես արցունքս, ահա երկու կաթիլ նամակիս ճակատին, նրանք աղի հետքեր կթողնեն. չ'կարողացայ ինձ պահել, յանկարծ վղձկաց թոյլ սիրտս, և հոսեցին նրանք. թող քեզ համար նրանք թամնդ լինեն իբրև ան-կաշառ սրտի ամենամեծ ընծայ: Տեսնում ես, քեզ երկու կաթիլ արցունք եմ ուղարկում, աւելի թանգաղին ընծայ չ'գիտեմ, քան սիրտը, իսկ արցունքը սրտի պատկերն է: Արգեօք գու ես կլաս այս արցունքալրօշ տողերը կարդալիս, քո սիրտն էլ իմ սրտի նման վղձկուն է, այնպէս չ'է, ահա քո արցունքներն ես... Արցունք, արցունք,

զգացմունքների ներկայացուցիչներից ամենամեծը, հոգու նկարի երկնային գիծ, եթէ դու չլինէիր, աշերն այնքան սիրելի չէին լինիլ... Եղբայրս, յիշում ես, երբ դեռ փաղ ժամանակներում արցունք էիր թափում ինքդ քեզ, առանձնացած, լուիկ մթութեան մէջ և նրան ծածկում էիր միւսներից. ինչու էիր լալիս, ով գիտէր, ահա այժմ երեսում է նրա բացատրութիւնը—դու յուսահատւած ես... Դժբախտ եղբայր, այդ խօսքն այնքան թունատր, սպանիչ է ինձ համար, ինչքան մերժումը: Յուսահատւել, նշանակում է թոյլ ընաւորութիւն ունենալ: Սակայն ես չեմ ասում, թէ անփոյթ, անզգայ կեանք վարիր, բայց ամբողջ օրերով էլ չ'պէտք է նստել՝ մտորումներով տառապել, յուսեւես հակումներ ունենալ, մեռնել շատ—շատ անգամ, նրանք լի են թոյնով, կամ աւելի ճիշտն, իրանք ամբողջապէս թոյնից են կազմւած: Բայց դու կ'ասես. «Ի՞նչ փոյթ, չեմ էլ հոգում կեանքի մասին, այսպիսով կ'մեռնեմ...» Դա համարձակ խօսք է, չափազանց համարձակ. դու ապրում ես կեանքի մէջ, ի՞նչ ես կարծում, աւելի լաւէ մասնակցել ընդհանրութեանը, գործել նրա հետ ձեռք ձեռքի տւած, թէ անփոյթ կեանք վարել, կամ ինքնամուացութեան մէջ ապրել: Մի չնչին ժամանակ կեանք ունենք, եթէ այն էլ անցկացնենք ոչնչով, նշանակում է չենք ծնւել երբէք: Միթէ կարծում ես թէ լաւ է անզործ առանձնութիւնը—ո՛չ, պէտք է գնալ ընդհանրութեան հետ մեծ հոսանքի միջով: Կարծեմ ինքդ էլ կ'համաձայնես ասածիս հետ. իսկ եթէ համաձայն չես, մտածիր երկար, և ես լիովին հաւատացած եմ, որ կ'համոզւես: Մեռնել, նշանակում է փախչել ընդհանրութեան միջից և ընկնել մոռացութեան խորխորատի մէջ. բայց որքան սարսափելի է այդ վիճը: Սակայն ապրելու

իս ձեեր ունի. իմ ասած ապրելը կայանում է աշխարհի
իղէալսերի իրադորժմանը մասնակցելու մէջ, ասպարիզից
չփախչելու մէջ, կռւի դաշտը թողնելն ու փոքրոգու-
թեամբ փախչելն անազնւութիւն է։ Բայց սպասիր, շու-
տով կանցնեն այդ նեղութիւնները, կհեռանան ցաւն ու
տանչանքը, սիրտդ նոր բարախմունքով կբարախէ, և
դու կլինես իսկապէս կենդանի, աշխարհի սիրած զաւակ։
Խորհուրդ եմ տալիս յարաբերութիւնների մէջ մտնել
հասարակութեան նախանձելի շրջանի հետ։

Հասարակության մատ- և Հա-
Անդինս, միթէ ես ևս շեմ հասկանում քեզ, ինչու ես
քեզ այդքան մենակ կարծում. շատ անգամ հէնց այդպի-
սի սխալ կարծիքներն են դժբախտացնում մարդուս, սև
օրերով զարդարում նրա կեանքը:

Սիրիը կեանքը, զնահատը մլաս, և ու
երջանիկ մարդն աշխարհիս երեսին, բոլորը քեզ կնա-
խանձեն, քեզ երանի կտան՝ ինչպէս մի թագաւորի:

ՔԵզ սիրող Աշխեց.

Ի՞ս ամենաթափառագիւղ կուկ!

Ճատ գոհ եմ քեզնից, որ աշխատում ես ինձ միխ-
թարել, սփոփելով հեռացնել այն մշտնջենական թախիծն
ու սրտացաւը, որոնց ենթակայ է սիրտս, որոնցով սըն-
լում է մռայլ հոգիս. բայց նրանք, պաշտելի Աշխին, յա-
ւերժական են, ինձնից երբէք չեն հեռանալու, նրանք իմ
սեփականութիւնս են, ոչ ոք չէ կարող խլել ինձնից, ես
և չեմ կարող բաժանել նրանցից, ես սովորել եմ նրանց
հետ լինել, առանց նրանց ձանձրալի է, նրանք սիրելի

Են դարձել ինձ և այդպէս կ'մնան մինչեւ վերջին շունչս փշելը:

Ինչու այսքան մտախոհ և մելամաղձոտ է ստեղծել ինձ բնութիւնը, արդեօք սա դժբախտութիւն է, թէ բարեբախտութիւն, բայց ինքնազիտութիւնը խօմ թշւառութիւն չէ, սակայն ես թշւառ եմ...

Դու ուզում ես ինձ համոզել, որ կեանքը սիրելի՞ է, բայց ասածներդ համոզեցնող չեն:

Քո ամենաթանգագին ընծային փոխարինում եմ իմ անգինը, էլ ինչ կարող էի ուղարկել բացի արցունքից, որոնք յիշատակ են մնացել իմ մեռած մանկութիւնից, որը յիշեցնում ես ինձ քո նամակում, որն անցաւ և էլ չէ դառնալու... լաւ չէր լինի, որ այն ժամանակ, երբ արդէն մանկութիւնս մեռաւ, ես էլ հետը մեռնէի. քանի կ'ապրեմ, այնքան կ'զառնանամ, կ'վիրաւորեմ...

Միթէ ես յուսահատւած եմ, միթէ փախչել եմ ցանկանում կուի դաշտից, անազնւութիւն, փոքրոգութիւն է միթէ արածս. քեզ այդպէս է թւում. ինձ չես հասկանում, քոյրիկ, չես հասկանում մելամաղձոտ ներքինս. զգւել՝ նրանակում է յուսահատւել, աւելի գեղեցիկն ընտրել՝ նշանակում է փախչել կուի դաշտից, տանջանքից հեռանալ՝ նշանակում է փոքրոգի լինել: Աշխէն... բայց ոչ, չեմ կարող ասել, դա քեզ կ'սարսափեցնէ... Ասեմ միթէ. ես աւելի և աւելի եմ համոզում, որ մահը գերադասելի է կեանքից, որ մարդիկ գարշելի ճիճուներ են, քարասիրտ, անազնիւ պարագիտներ են, որ ապագայ չ'ունենք, ինչպէս մենք ենք ծիծաղում մեր անմիտ նախնիների վրայ, այնպէս էլ մենք ենք ծիծաղելի լինելու մեր յետնորդների համար, որ աշխարհում չ'կայ ոչինչ կատարեալ, ուրեմն ամեն բան էլ փատէ: Իսկ այս քանի օրերն ատելի կեանքիս վերջին

«մնաս բարեկ» ժամերն են: Քոյրիկ, արդեօք կ'գաս դագաղիս նայելու, սառած հայեացքս դիտելու, սլացած երազներիս, անյուշ անուշներիս անքննելի խորշերը տեսնելու... Օ՛, այս շափից դուրս մեծ փառասիրութիւն է...

Նազելի՞ քոյրիկ, զու ես միայն ինձ սիրելի, այսքան որ ապրում եմ, քեզ համար է լոկ. եթէ դու չ'լինէիր, այսքան չէի տանջլի: Այժմ անզօր եմ, թուլացած, բայց ոչ երբէք փոքրոգի, անազնիւ: Կեանքի մէջ իսկապէս կոիւ չ'կայ, այլ միայն ստոր անձնական վէճեր, ես դրանցից եմ հեռանում. եթէ իրաւ գոյութիւն ունենար մի ազնիւ, գաղափարական կոիւ, ես չ'էի ձանձրանալ, կ'դիմազրէի յամառութեամբ ճակատս դէմ տալով և կամ կ'յազլէի, կամ կ'ընկնէի քաջութեամբ. բայց քո ասած «կեանքի կըռիւր» մանը-մունը հաշիւներից ծագած եսական վէճեր են: Անման հրեշտակ, կինը շատ է լալիս, բայց դու չ'լաս, ինձ համար արցունքները թանգ են, պահպանիր նրանց գերեզմանիս վրայ թափելու համար: Բայց արդեօք կ'գաս զերեզմանս այցելելու, այստեղ էլ կ'լաս. բայց աւաղ, ես գերեզմանս այցելելու, այստեղ էլ կ'լաս. Վարդ կ'զնես շիրմիս չեմ տեսնիլ, չեմ լսիլ հեկեկոցդ: Վարդ կ'զնես շիրմիս վրայ, որ հոտոտեմ, նա սիրոյ սիմվօլն է. բայց մոռացայ, ինչպէս կարող է մեռած դին հոտոտել կենդանի փարզը: Ինչպէս կարող է մեռած դին հոտոտել կենդանի փարզը: Սիրտդ կ'բանած իմ առաջ, կ'պատմես տանջանքներդ, իմ ուրւականը կ'լսէ քեզ... բայց ուրւական չեմ ունենալ. Է՞հ, ես էլ չեմ հասկանում, թէ ինչ եմ մտածում. թողնենք այս, թող մտածեմ հանգստութեանս համար... Մնաս բայց, ըով յալիտեան, սպասում եմ միայն վերջին նամակիդ, շուտով գրիր... Այլ ևս ոչնչից ոչինչ չեմ սպասում:

Քո բշառ, Ռափայէլ:

Մողրիած եղբայր!

Սարսափեցի նամակդ կարդալով. ախ, եթէ կարողա-
նայի դառնալ մի օգային մասնիկ, մտքի մի բոյլ, կ'սլա-
նայի քեզ մօտ, կ'լայի առաջիդ և իմ լացը կ'լինէք մի
խիստ յանդիմանութիւն քեզ համար. ի՞նչ, ուզում ես մեռ-
նել... դու գիտես, թէ որքան սիրելի է ինձ կեանքը, իսկ
նրանից զրկւելն ամենածանը զոհաբերութիւնը կ'լինէք
իմ կողմից. ես սիրում եմ աշխարհն՝ ինչո՞ւ—որովհետև նա
գեղեցիկ է, նրա մէջ ես սիրում եմ. իսկ եթէ զրկւեմ սի-
րելուցս, այն ժամանակ մի րոպէն անգամ թոյն կ'պատրաս-
տէ ինձ համար, այսքան գրաւիշ աշխարհը կ'երեայ արեան
ծով, այնքան սքանչելի երկինքը կ'թւայ մութ տարտարոս,
և ես կ'մեռնեմ... այ՞ո, եղբայր, եթէ դու մեռնես, ես էլ
պէտք է քեզ հետեւեմ, զրկւեմ այսքան սիրելի կեանքիցս:
Միթէ յանցաւոր եմ քո առաջ ապրելուդ համար, որ գը-
րում ես, թէ իմ պատճառով ես տանջուում. ինձ համար
ես ապրում գուցէ, բայց դրանով յանցանք չես զործում:
Դու երբէք չես մեռնիլ, չես մեռնիլ, որովհետև սիրում ես
ինձ, իսկ ես մահ չեմ ցանկանում: Եթէ մարդիկ անբա-
ւական են աշխարհից, սխալում են, իրանցից պիտի լի-
նեն անբաւական. դու այդպէս հեշտութեամբ ճիճուներ մի
անւանիր այն հասարակութեան անդամներին, որի ապա-
գան աստւածութիւնն է, և մի պախարակիր այն կեանքը,
որով ընթանում ենք դէպի ճշմարտութեան գահը: Եթէ
մեռներուց յետոյ կարելի լինէք կենդանանալ, ես կ'ապա-
ցուցանէի, որ կեանքը հրաշալի է: Ես չեմ պնդում, որ
մարդիկ անպայման ազնիւ են սնւում, չեմ հակասում քեզ,
գիտեմ որ նրանք դեռ ևս ստորութեան խանձարուը իւ

մէջ են օրօրւում, բայց նըստ որդեք անւանել՝ այդ մի-
անգամայն դատապարտելի է:

Մի վշտանար, որ մեր յետնորդները մեզ վրայ պիտի ծիծաղեն, նրանց վրայ էլ իրանց յետնորդներն են ծիծաղելու, աշխարհն այդպէս էլ կ'լինի, քանի որ կայ միտք, յառաջաղիմութիւն։ Գիտեմ, որ կեանքումդ միշտ զաւաճանութիւն ես տեսել, քեզ վնասել են, ճշմարիտդ ստի տեղ են ընդունել, բարութիւնդ յանցանք են համարել և քեզ արհամարհող դարձրել, քո աշերում երևացող արհամարհանքը կեղծութիւն են համարել և աւելի խոցել առանց այն էլ շարշարւած սիրոդ, բայց թէ ինչո՞ւ ես այդ աստիճան վհատւած, ահա այդ է հրաշալին, զարմանալին, որովհետեւ միշտ սիրել ես, սիրոդ դատարկ չէ եղել, և միշտ սիրւել ես։ Օ՛, Արարշութիւն, ինչո՞ւ ես մարդուն անքննելի ստեղծել, նրա հոգին այնքան խորհրդաւոր շինել, որ այսպիսի մտատանջութիւններ պատահեն։ Եղբայրս, ես այժմ եմ համոզւում, որ չեմ հասկանում քեզ և գուցէ չեմ էլ հասկանալու։

կանում քեզ և գուցէ չո՞ւ ՅԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
Սիրել կեանքը, դեռ ապագայ ունես, ի՞նչ անենք՝
որ անցեալը մեռած է. իսկ գերեզմանը, օհ, սարսափում
եմ... դու ցանկանում ես այնտեղ զնալ, ես էլ կ'զամ...
էլ չեմ կարողանում զբել, ճիճուներին կերպուր դառ-
նախ այնքան էլ ախորժելի չէ: Յուսով եմ, որ նորից նա-
մակ կ'ստանամ և կ'զբեմ:

የኢትዮጵያ

Phi Mu Alpha

Ի՞նչ զրեմ, ինչից սկսեմ. անցեալ անդամ զրել էի,
որ նամակս վերջինն է, բայց ահա նորից եմ զրում։ Ես

շեմ կարող մնանել, անդօք եմ, թէև առաջւայ պէս ատում եմ կեանքը, ինչպէս զու մահը, ատում եմ, որովհետեւ նրա մէջն են այն զարշելի արարածները, որոնց իրաւամբ ճիճուններ եմ անւանել, և այդպէս էլ են. այս, մարդիկ անսիրտ, անզգայ, անմիտ, անսէր և անշարժ մեքենաներ են, որոնց եթէ չ'ատել, պէտք է արհամարհել: Ասող չ'ինի, թէ այ թշւառներ, ինչո՞ւ էք ծնւել և քարշէք տալիս ձեր ստոր գոյութիւնը. եթէ ծնւելում մեղաւոր չէք, գոնէ ապրելում էլ արդար չէք, ինչո՞ւ չէք մնանում, հեռանում կեսանք կոչւող թակարդից: Բայց ոչ, ձեզնով չի վերջանալ ժամանակը, որովհետեւ նոր մարդկութիւն կ'ստեղծւի: Ողորմելի երկիր, ուրեմն զու գատապարտւած ես կըելու քո մէջքին այդպիսի արատաւոր հրէշների մի խումբ! հանգիստ մարմնիդ, խնդերկիր. թէեւ զու ևս արժանի ես անէծքի, որովհետեւ պատապարում, պահպանում ես նրանց, իսկ յետոյ մեծ ուրախութեամբ քո ծոցն ես ընդունում... Բայց ես վառվըուն բնաւորութիւն ունեմ, մայր երկիր, մինչև խօսելս երկար չեմ մտածում, ահա այդ էք պատճառը, որ այսպէս անհամեստութեամբ անիծեցի քեզ, ներիք ինձ, ես սխալում եմ. չ'որ զու պահպանում ես վրադ և նրան, որին սիրում եմ. մի մեղագրիք ինձ և նշանակութիւն մի տար խստ խօսքերիս, բողէական դատավճիռն անընդունելի է: Է՛, մայր երկիր, զու սպասում ես, որ մարդկութիւնը վերջ ՚ի վերջոյ կ'փոխէ իր կենցաղը, որ ապագայ սերունդն աւելի մեծ սիրտ կ'ունենայ և վեհ հոգու տէր կ'գառնայ. արդար ես, սպասիր, սպասիր, քո սպասելն էլ սուրբ է. զու այն հոգածու մայրն ես, որ քրտինք թափելով այսքան երկար համբերութեամբ սնուցել ես մարդկային միտքը, ուրեմն կարող ես նորից

Համբերել. ուր էր, թէ քեզ պէս ես ևս համբերող լինէի
և ինձ համար այսպէս շուտ-շուտ դատավճիռներ չ'տայի:
Քոյլիկ, ես քեզ չեմ սիրում, չ'վշտանաս, բայց շա-
փից գուրս յարգում եմ. սիրում եմ ուրիշին, սիրոս գո-
զացւած է, նրա ծալքերի մէջ շատ նոր-նոր զգացմունք-
ներ են մտել, բուն դրել: Սիրում եմ, բայց չ'գիտեմ, սիր-
ում եմ, թէ ոչ. տանշանքի նոր աղբիւր չէ բացւած
ինձ համար: Օ՛, նինա, նինա... Արգեօք քո մէջ չէ թագ-
նըւած իմ կործանման մեքենան. շատ բախտաւոր կ'լինեմ,
եթէ անկումս չ'լինի այն կնոջ ձեռքով, որից բարութիւն
եմ սպասում միայն, իսկ եթէ քո ձեռքով է կտրւելու կեան-
քիս թելը, կ'ուզենայի իսկոյն մեռնել...

Digitized by srujanika@gmail.com

Եղբայր իւր!

Ողբան երջանիկ եմ՝ կրկին տեսնելով նամակդ առաջիս. ինչ հըճանք, ինչ ուրախութիւն, արտայայտել չեմ կարողանում... Տրտմութիւնը, վիշտը, ճնշումն ու տառապանքն արցոննքով են յայտնում, իսկ հըճւանքն—ահա ժըպիտ, որ չեմ կարողանում նամակում դնել, ինչպէս արցունքը: Նշանակում է երջանիկ ես, որովհետեւ ապրում ես և սիրում. այո՛, կեանքը սիրոյ հետ միասին երջանկութիւնէ: Տեսար, թէ ինչպէս շքացաւ տարօրինակ ցանկութիւններիդ իրազործման խնդիրը. չ'կայ, անցնելու են և բոլոր ցանկութիւններդ, նրանց տեղ կրծքիդ տակ են մտնելու ուրիշ ցանկութիւններ: Մինչև անդամ կ'զայ մի ժամանակ,

Երբ կ'սիրես այն, որին աշքով աշք չ'ունես տեսնելու, որի
անունը տալիս՝ զգւանք է երևում դէմքիղ. այդ ժամանակը
հեռու չէ, և այժմ, որ անէծք ես թափում մարդկութեան
գլխին, շուտով պարսաւանքդ օրհներգութեան կ'փոխւի:

2եմ ասում, որ մարդիկ արժանի չեն արհամարհանքի, ընդհակառակն, ամբոխն անսառնի է նման, քչերը կան միայն, որոնց կարելի է մարդ անունը տալ. բայց իհարկէ, այդպէս չի մոալ մարդկութիւնն իր գոյութեան ընթացքէ, այդպէս չի մոալ մարդկութիւնն իր գոյութեան ընթացքում, նրա ապագան յափտենականութիւնն է: Դու նոյնպէս համոզւած ես հոգու և մտքի կրթւելումը, և այդ շատ ուրախալի է, որ վեջապէս հեռանում ես քո տարօրինակ մտաթափառումներից. դրա պատճառը քո ասելով սէրն է, բայց միթէ առաջ չէիր սիրում, երբ զերեզմանի սառնութիւնը դէպ իրան էր քաշում քեզ: Ես չեմ բռնանում կամքիդ, իրաւոնք էլ չ'ունեմ սաստելու, սիրեք, ում ուզում ես, ապատ ես սիրտղ տալու, որին կ'ցանկանաս, բայց զբոհութիւնն է պէտք... Այս ի՞նչ ասացի, ինչպէս թէ զգուշութիւն է պէտք. պաշտպանուած, հսկողութեան տակ զգուշութիւն է պէտք. պաշտպանուած, հսկողութեան տակ մնացող առարկան չէ գողացում, բայց չէ որ սիրտը հրակող չունի, նա ընկած է առանձին, ով զօրեղ է, դէպ իրան է քաշում, կամ աւելի ճիշտը՝ սիրտն ինքն է նրան մօտենում: 2եմ նախանձում նրան, որին սիրում ես, այլ ընդհակառակն յարգում եմ, մինչև անգամ ցանկանում եմ զըկել նրան. հաղորդիք նրան այս խօսքերը և ասա՛, որ թող իմանայ, որ իրան սիրողը մի զերբնական էակ է, որ նա մերժել չ'գիտէ, որ նա չէ մոռացւում, թէն մոռանում է, որ նա... ներիք!!...

Յարգելի Աշխա!

Հետո այս պատճենը կազմում է առաջին համարը՝ առաջին աշխարհական պատճենը:

Նամակովդ յայտնում ես վիշտդ և իրաւունք ունես,
որովհետեւ քեզ չեմ սիրում։ Խօսքերդ ինչու չես՝ շարունա-
կել, ես չէի վիրաւորւիլ. գիտեմ, ցանկացել ես ասել, որ
«նա գերել գիտէ, բայց և՛ թողնել գիտէ»։ այդ ես ցան-
կացել, չէ. տեսնում ես, հասկանում եմ միտքդ։

Դու վոխւել ես, և այդ ուրախալի է. այժմ՝ մեր զա-
ղափարները, համոզմունքները շատ նման են զարձած,
նոյն զաղափարն ունես մարդու մասին, ինչ որ ես. երե-
ւում է, շատ ես վշացել, որ այլ ևս նոյնպիսի սեր չեմ
տածում դէպի քեզ, որպէս առաջ էր, բայց չէ որ սիրել—
չսիրելն իմ կամքից չէ կախւած, այդ դու ինքդ էլ լաւ
զիտես. ես ինչ անեմ, որ մենք իրարուց գերւել ենք, ոչ
նա է ցանկանում ինձ ազատ թողնել, ոչ ես եմ թողնում
նրան, և ցանկութիւն էլ չ'ունենք ազատւելու. բայց որ-
քան քաղցը է այս գերութիւնն ամենասուրբ ազատութիւ-
նից... Մեր սրտերն իրար հետ միացած են, նրա հոգին
իմս է, իմս նրանը, մեր կեանքը մի է: Ի՞նչ անեմ, քեզ-
նից շատ հեռու էի, երկար ժամանակ անցաւ և նսեմացաւ
դէպի քեզ ունեցած սերս. Ներիք, որ այլ ևս քեզ համար
դէպի քեզ ունեցած սերս. Ներիք, որ այլ ևս քեզ համար
չպիտի երազեմ, թէև քո յիշատակը մտքիցս երբէք չի
հեռանալ, այլ անչնչելի կ'մնայ հոգուս մէջ: 2էիր ուղում
հաւատալ, երբ գրում էի, թէ ոչ ոքի շեմ սիրում. միթէ
հաւատալ, երբ գրում էի, թէ ոչ ոքի շեմ սիրում.

այժմ ես կարծում ես, որ այն ժամանակ քեզ սիրում էի-
եթէ այդպէս լինէր, միթէ մահն էլ կ'սիրէի, չք որ անկա-
րելի է միաժամանակ երկու հակառակ բաներ սիրել: Իրաւ,
չես նախանձում, աչդ ես գլուխո՞ւ, բայց վշտացած ես: Եթէ
ես մի ատելի արարած եմ, ատիք ինձ, ես չեմ վշտանալ,
ատիք, որ քեզ ոտնատակ եմ տևել, որ քո սիրով խոնար-
հեցրել եմ ուրիշի սրտի առաջ, որ քո համբոյը մեռն է
արդէն և թաղւած է շրթունքներիս մէջ—նա առաջ թարմ
էր, յետոյ հնացաւ, չորացաւ և յետոյ ուրիշի համբոյը ից
ծածկւեց... Աշխէն, սիրիլ նրան, որին ես եմ սիրում
(եթէ միայն զեռ չեմ ատւած քեզնից), որովհետեւ այն շըր-
թունքները, որ մի ժամանակ քո համբոյըներով են ծածկ-
ւել, այժմ նրանց վրայ սիրելուս համբոյըներն են տեղ-
րոնած: Է՞հ, շատ տանջելն էլ լւաւ չէ, քեզ թշւառ չ'զգաս,
սրտեր շատ կան, կարող է նրանցից մէկը քեզ սեփակա-
նանալ: Դու չես ցանկանում բռնանալ ազատ կամքիս, և
անկարելի է (թէն թողնաւածի համար անկարելի բան չը
կայ... Բայց դու թողնւած չես, դու իմ ամենայարգելի
կին ես աշխարհում):

Քեզ յարգող Ռափայէլ:

Եղրայիլ իմ, պաշտեղի էակ!

Ներիք, որ վշտացրել եմ քեզ անցեալ նամակով. ես
հիւանդ էի հոգեպէս, տենդի մէջ էի, չ'զիտէի, որ թողնաւ-
ածն իրաւունք չ'ունի թողնողին յանդիմանելու: Յայտնում
եմ ուրախութիւնս, որ դու երջանիկ ես. քո երջանկու-
թեամբ ես էլ դժբախտ չեմ լինիլ...

«Երցունքը սիրոյ գրաւականն է, բայց համբոյը սէրն
է», այդ ես զրում. ճիշտ է, շատ ճիշտ... Բայց թոնդ ան-
ցած, ցնորական ժամերը չ'կանգնեն իմ դիմաց, թոնդ երա-
զական կեանքիս օրերը միշտ թաղւած մահն, ինչպէս կու-
տական սրտի թարմ սէրը թաղւած է լինում տանջւած
սրտի մէջ. ինչպէս աստղերը յանկարծ հանգչում են, ինչ-
պէս արցունքը լացող աչերից իսպառ ցամաքում, անհե-
տանում է, թոնդ իմ օրերիս հետքն էլ չ'երեալ. մի յիշեցը-
նիր իմ անքաշական, այն երազ դարձած սրբազան կեանքը,
թոնդ, թոնդ մուտացւեն բոլորն, ինչ որ ինձ համար սուրբ
է, թոնդ ոչինչ չ'մնայ: Ես երջանիկ եմ, որովհետեւ զու եր-
ջանիկ ես, էլ ինչ ես ուզում: Մեր մտքերն իրար նման
էին, բայց այժմ փոխւած են. մարդու մէջ համարեա ոչ-
ինչ չ'կայ արժանաւոր, իսկ եթէ բնութեան ծաղիկն այդ-
քան աննշան է, ապա ուրեմն կեանքն ու մահը հա-
մարեա հաւասար են: Քեզ մահն են մոռացրել, ինձ կեան-
քըն են մոռանալ տալու, որովհետ նրա մէջ ես ոչինչ չեմ
տեսնում երջանկացուցիչ: Այն, որին սրբազան կեանք եմ
անւանում, որին երջանկութեան ժամեր եմ համարում, նա
կարծես թէ սէր չէ եղած, որովհետեւ սիրողը չէ կարող չը
սիրել (ժամանակը և բացակայութիւնը ոչինչ են սիրոյ ա-
ռաջ), թէկուզ սիրողը գժոխքում լինի: Թողնւածը սա-
կոյն չէ կարող երբէք ատել թողնողին, թէկուզ նա հա-
ցընի ամենամեծ շարիքն անզամ. շատերն այդ սէրը խե-
լազարութիւն են համարում... Բայց էլի թշւառ չեմ,
որովհետեւ զեռ յարգում ես ինձ: Սիրում եմ նրան, որին
սիրում ես. բայց ինձ չ'մոռանաս, սէրդ կորցնելուց ուրիշ
սէր չ'ունեմ ուրիշին տալու, սիրտս մէկի համար է բարա-
խում:

Ես փախչում եմ հասարակութիւնից, ծանօթութիւն-

ներից, չեմ ցանկանում ուրիշի հետ խօսել, քանի որ չեմ խօսում նրա հետ, որի հետ անցուցած մի ժամը կեանքի մի մեծ շրջան է. չեմ ուզում, որ ուրիշները վրաս ուշադրութիւն դարձնեն, ուրիշի հայեացքը թունաւոր է, քանի որ չ'կան այն հայեացքները, որոնց տակ ինձ դրախտումն էի զգում. չեմ ցանկանում, որ սիրեմ ուրիշից, որովհետև չեմ սիրում նրանից, որով միայն կարող եմ երջանիկ լինել. երբ տեսնում եմ, որ մէկն ինձ յարգում է, ես նրան վիրաւորում եմ, չեմ ուզում յարգւել ուրիշից, որովհետև յարգւում եմ քեզնից: Ուր է հին կեանքը, նա անդառնալի է, միայն զու ես մնացել, ահա թէ ինչու ես առաւել պաշտելի:

Այս, ես ինձ ասում եմ, որ երջանիկ եմ. բայց իրօք այդպէս է. զու սիրած ես շատերից, իսկ ես թողնած... բայց ոչ քո դէմ մեղանչեցի, չէ որ քեզ սիրում եմ, իսկ զու բախտաւոր ես, ուրեմն ես էլ թշւառ չեմ: Բայց բասել է երջանկութիւն, ինչ բան է նա—ոչինչ, եթէ ոչ հանգիստ խղճով ապրել. ուրեմն ես իսկապէս երջանիկ եմ, որովհետև հանգիստ է խիղճս, արդար է հոգիս. չեմ մեղանչել, չէ դըժել սիրոս իր տւած խոստումը, չէ աղաւաղել միտքս սիրելուս վերջին ըոպէի հնչիւնները, դեռ շրթունքս դողդողում է նրա համբոյրից, դեռ սիրոս թընդում է նրա համար, և այն ըոպէներին, երբ ողջ աշխարհն ինքնամոռացութեան մէջ ընկղմած քնած է, իմ ուղեղը դեռ մտածում է քեզ համար. ես երջանիկ եմ, որովհետև սէրս չէ մարել տակաւին, թշւառ չեմ, որովհետև յոյսս դեռ պայծառ փայլում է ճակատիս. զուցէ զու ասես՝ «ինչ յոյս, եղկելի կին, կորած եմ քեզ համար». զուցէ, բայց ես չեմ ուզում հաւատալ, որովհետև այդ հաւատն ինձ դէպի գերեզման կ'տանէ, որովհետև այդ հաւատը կ'խաւարեցնէ

իմ հոգին, կ'կտրէ կեանքիս նուրբ թելը և ինձ անդունդ կ'ուղարկէ: *Կարուց ունէ*

~~+~~ Քո բողնաած Աշխեն:

Յարգելի Քոյրիկ!

Ինչքան բարի ես դու, որ մինչեւ անգամ ներողութիւն ես խնդրում մի չնչին վիրաւորանքի համար, վիրաւորանք, որին չէ կարելի մինչեւ իսկ այդպէս անւանել: Մի վշտանար, որ քեզ չէ պատկանում իմ սիրու, զիտեմ որ հոգիդ ճնշում, գալարում, խեղդում է, բայց ես չեմ մեղաւորն. ինչ անեմ, որ քեզ սիրել չեմ կարողանում:

Եթէ ցնորդներն անցողական չ'լինէին, եթէ երազներն իրագործւէին, մարդիկ աստւածներ կ'դառնային. էլ լուշիւ ես ինձ նախատում նրա համար, որ յետ եմ կանգնել իմ անմիտ մտադրութիւններից:

Գրում ես, որ չես նախանձում նրան, որին սիրում եմ, բայց թոյլ տուր ասել, որ զբան առնւազն կարելի է կեղծութիւնն անւանել, այնպէս չէ: Դու չես կարող սիրել նրան, որ խլել է քեզնից քո ամենաթանգագին բանն՝ իմ սիրու, զու երջանիկ չես կարող լինել, քանի որ թողնած ես, քանի որ... Ներողութիւն, չափից զուրս էի գալիս: Սակայն ինձ փոփոխամիտ, թուլասիրտ, անազնիւ, քարամիրտ, անսէր, խարեբայ անունները չ'տաս, ես զբանցից ոչ մինը չեմ... բայց ոչ, քեզնից չէ կարելի այդ պահանջել, անւանիր ինձ, ինչ որ ցանկանում ես, ես թոյլ եմ տալիս: Զես հաւատում, որ էլ չեմ սիրում քեզ, այդ էլ եմ թողնում քո ազատ կամքին, որովհետև այժմ ուրիշ

մարդ եմ, առաջւայ պէս խստապահանջ չեմ, ես յարգում եմ մարզու իրաւունքները:

Այժմ եմ հասկանում, որ այն երջանկութիւնը, որից փախչում էի, դոյութիւն է ունեցել. այդ գիտակցութեան ինձ դարձրեց ինձնից սիրւած կինը, ահա թէ ինչու եմ նրան ջերմութեամբ սիրում։ Նա դարձրեց ինձ գերեզմանից, այն գերեզմանից, որը մի ժամանակ դարձրել էի իմ իղէալը, իսկ այժմ նա մի ատելի խորշ է ինձ համար, մի անողոք, անխիղճ թակարդ, որն իր միջում փակում է անողորմաբար սիրող սրտերը, գործող ուղեղը լի հազար ու մի իմաստութեամբ. իսկ մահն անսիրտ էակի դործիք է, որով կերակուր է մատակարարւում գերեզմանին։ Կեանքը բարձր է ամեն բանից, որովհետև նրա մէջ ես սիրում եմ, իսկ մահից սարսափում եմ բնականաբար։

Մի ժամանակ դու էիր այս խօսքերն ինձ ուղղում, ես հակառակ էի, այժմ ես եմ քեզ գրում նոյնը. բայց յուսով եմ, որ ինձ պէս չես պատասխանիլ, դու էլ կը սիրես կեանքը, որովհետև այնտեղ սրտեր կան, որոնք քո սիրուն են սպասում, որոնք քո սրտին մօտենալ են ցանկանում, քեզ սիրում, քեզնից սիրել են ուղում։ Սէրն ազնւացնում է մարդու սիրար, վշտացածին նոր կեանք պարզեցում. դու քեզ թշւառ մի զգար. եթէ այժմ սիրել չես կարողանում, միթէ դու սիրոյ անցեալ չունեմ. այո՛, դու սիրւած ես եղել (թէկ կարծում ես, որ սիրւածը չի թողնէլ). միթէ չես յիշում, թէ ինչ ագահութեամբ խըլում էի հայեացք. միթէ միտղ չէ, թէ ինչ բերկութեամբ, հրճւանքով լցւած՝ լսում էի խօսքերդ, նրանք ինձ համար մուզիքայի ամենազդայուն հնչւմներից աւելի բարձր, աւելի ոգեշունչ էին. միթէ վերջապէս չես յիշում, թէ ինչպէս զգացւած համբուրում էի քո դժողոյն

շրժունքն. էլ ասեմ... Բայց որ այժմ չեմ կարողանում սիրել նախկին սիրով, զա ակներև է, բայց թէ ինչո՞ւ նրա համար, որ ուրիշին եմ սիրում. իսկ ինչո՞ւ քեզ թողեցի, արգեօք դու հոգով նրանից տղբղ ես, նա քեզնից դէմքով զրաւիչ է և այն և այն, այդ չ'գիտեմ... Դու ինձ ատէր, ինզրում եմ, եթէ չ'ատես, չես հանգստանալ, ատէր ինձ, որովհետեւ քեզ ատելի պիտի լինեմ. ինչ, կարծում ես՝ դժւար է այդ անելը. մտածիր, որ քեզ թողել եմ, որ ուխտաղբուժ եմ, և ահա մի հրէշ կերսամ, իսկ հրէշին ոչ ոք չի սիրիլ կամ յարգիլ։ Այդ աւելի կարելի է հեշտացընել, ինչպէս ասել եմ, մարդկանց հետ ծանօթութիւնների, յարաբերութեան մէջ մտնելով և վերջապէս աւելի բարձր գործերով զբաղւելով։

2' գիտես, ինքզ քեզ դժբախտ, թէ երջանիկ համարես, տատանում ես, վերջապէս ասում, որ քո կարծիքով հանգիստ խղճով ատլըն՝ նշանակում է երջանիկ լինել, իսկ քո խիղճը հանդիստ է անհոգ մանկան խղճի պէս, հոգիդ արզար, չես մեղանչել իմ դէմ եայլն. զըմնով ինձ ես ակնարկում կարծելով թէ մութ է տաշծդ. ուղում ես ցոյց տալ, որ ես ուխտաղբուժ եմ, երդմնազանց, անխիղճ, անարզար և մեղանչող եմ, մոռացող և թողնող եմ. չեմ ասում, թէ իրաւունք ունես, թէ ոչ ինձ այդպէս անւանելու, բայց թոյլ եմ տալիս ասել։ Ինչ որ ցանկանում ես, արա, մտածիր, բայց ես խորհուրդ եմ տալիս աննըպատակ յոյսերով չ'ապրել, չ'կարծեն՝ թէ քեզ նորից են սիրելու, ոչ, անցան այն օրերը, փոխւեց և այն օրերի սիրտս. կտրիր յոյսդ, էլ ոչինչ չէ կարող կեանքի, ժամանակի ճանապարհից յետ զառնալ։ Սակայն չ'վշտանաս, ինչո՞ւ պիտի քեզ գերեզման տանէ քեզ համար կորած լինելուս հաւատը, զա աններելի է. ամըացըն սիրոդ,

ոյժ տուր նրան, և անհոգ կ'լինես, որպէս մայիսեան թարմ առաւօտի թիթեռը, ինչպէս անխօս մանուկը և մինչև անդամ երջանիկ, ինչպէս սիրւած աղջիկն է լինում:

ՔԱ ՌԱԺԻԱԼԵՒ.

Ի՞մ չըեշտակ, ի՞մ ՑԱՆՔ!

Ինչու այդքան ուշ ես գրում, միթէ չ'զիտես, որ դը-
րանով աւելի ես վշտացնում թոյլ սիրտս. զիտեմ, որ չես
ցանկանում ինձ վիրաւորել, ուրեմն շուտ-շուտ գրիր. ա-
ռանց քեզ կարողացայ երկար ժամանակ գիմանալ, բայց
առանց նամակիդ չեմ կարողանում մնալ, ոյժ չ'ունեմ,
մեռնելու եմ: Կ'նշ հիանալի է մահը, ի՞նչ բարի էակ,
եթէ միայն էակ է... Ցանկանում եմ մենակ, մոռացու-
թեան մէջ ընկնել ու մեռնել: Կ'նշ սիրելի է գերեզմանը,
նա է հանգստացնում հրդեհող սիրտը. բայց ինչքան էլ
չ'ցանկանամ մեռնել, ցաւը սրտիս մէջ խորունկ արմատ-
ներ է հանել և ճիւղաւորել հրէշի նման:

Ների՞ր, որ ես՝ քեզ համար օտարացածս սիրոտ բանում են քո առաջ. դու ներող ես եղել, հրեշտակ ես եղել, կարծեօք փոխւած չես լինիլ—սակայն միթէ սատանան նոյն հրեշտակը չէ... Ե՞ն, կըկին շափից դուքս եկայ, ների՞ր, իհարկէ, քեզ համար խորթ եմ, չեմ կարող ստիպել, որ ինձ սիրես. բայց քեզ անազնիւ կ'անւանեմ, եթէ մոռանաս ինձ, քեզ սիրում եմ, ատել չեմ կարող, չէ, ոյժ չ'ունեմ:

Նախանձում եմ նրան, որ քեզ զրաւել է, ինչու թագցնել, նախանձում եմ, բայց գեռ չեմ ատում, որով-

հետև նա ի՞նչ մեղ ունէ, որ ինձ թողել ես: Իրաւ որ ես
թշւառ եմ. դու ապրում ես, ես էլ քեզանով եմ ապրում,
բայց քեզ պէս երջանիկ չեմ:

բայց քեզ պէս ուշադրությունը կատարված է Այժմ քեզ ճանաչում եմ, դու էլ ես ճանաչում, սիրելի իդ էլ է ճանաչում։ Կ՛, ուր զնաց քո արհամարհանքը դէպ ամբողջ մարդկութիւնը, ուր կորաւ քո ատելութիւնը, գժողիքը հեռացան քո դառնութիւնները, թէ սատանան իր ծոցն առաւ թունաւոր մտքերդ. նրանք զնացին, անցան, և մտքերի ծովը ցամաքեց, և՝ սրտիդ հանգաւ, և մահու սեղանը կործանեց, և մահւան կրակը հանգաւ, և մահու սեղանը կործանեցին։ Խսկ ես... թշւառ, ինչիդ է պէտք թենքը կտրտւեցին։ Խսկ ես... թշւառ, ինչիդ է պէտք կեանքը, ինչու ես քաշըում նրան, երբ ոյժ չ'ունես տանելու, ասա, նրա համար, որ առ ապրում է... բայց քեզ ինչ... բայց քեզ անհամես ուր, անհայտ արած, որ

ինչ... գեռ անազնիւ չեմ անւանել քեզ, այնպէս արա, որ ստիպւած չլինեմ այդպէս կոչելու նրան, որին նւիրւած եմ:

Դու ճանաչում ես բախտը, իսկ ես կորցրել սս ո-
դածն էլ: Դու յարգում ես մարդուն, իսկ ես ատում եմ,
որովհետեւ նա խկապէս ատելի է իր փոփոխական սրտի
պատճառով. բայց քեզ ոչ միայն չեմ կարող ատել, այլ
մտքովս անցկացնելն անգամ յանցանք կ'համարեմ. դու
համոզւած չես, անխիղճ (թուլ տուր այս խօսքը քեզ
ուղղել):

ուզգել):
Ապրէիր, գըում ես. ի՞նչ օգուտ... շատ լաւ, թող,
որ մարդիկ աստւածներ դառնան, բայց ի՞նչ, մի փոքր
կեանք ունենք, այն էլ անտանելի, այն էլ արկածալից,
անհանգիստ, վշտալի, թունաւորւած. ո՞րն է յաւիտենակա-
նութիւնը, ո՞րն է երջանկութիւնը - չկայ, խարուսիկ յոյ-
սերով ապրելն արատ է, ամօթ է: Ենթադրենք թէ հէնց
կայ ընդհանուր կոիւ, բայց ի՞նչ կարիք կայ մասնակցելու.

ինչու մարտնչել այնպիսիների հետ, որ իրանք էլ են
ցանկանում մեծ տեղ բռնել. մինչև անզամ ստորոտթիւն է
ուրիշին վշտացնելը: Աւելի լաւ կ'լինէր, որ ոչ մարդը
լինէր, ոչ այդ կոփւը. ինձ բոլորովին անհասկանալի է,
թէ ինչու ենք ծնւում, ապրում. իսկապէս այդ չէ ան-
հասկանալին, այլ այն, թէ ինչու մարդիկ իրանց գոյու-
թեան մեծ նշանակութիւն են տալիս: Թողնենք այս,
սրանք և սրանց նման մաքերն ինչ առնենութիւն ունեն
մեր անձնական հաշիւների հետ. բայց մենք ինչ անձնա-
կան հաշիւներ ունենք, դու հեռացած ես ինձնից, անհոգ
ես, իսկ ես տանջւում եմ:

«Սէրը, զըում ես, ազնւացնում է սիրտը». բայց այն ես դիտես, որ սէրը մարդուն հրէշ է զարձնում (եթէ միայն կարելի է այդպիսի սիրուն սեր անւանել). սրանով քեզ չեմ ակնարկում, լաւ գիտես, որ սիրտս չի տար: Միայն խնդրում եմ, անյուշ անցեալով ինձ մի վշտացնիր, մի վրդովիր ըովէական ինքնամուռացութեանս քունը, ես առանց այն էլ հոգեալէս հիւանդ եմ. քեզ նոր մարդ եմ ճանաչում, ինձ նոր, ոչ անցած օրերի սրտերը կան, ոչ կեանքը, բայց իմ մէջ եղեմը տարտարոսի չէ փոխւում, միայն քո մէջն է, անխթզն, որ հրեշտակը դև է դառնում: Ինձ մանկական օրօր կարդալով ես ուզում հանդիսատ տալ, կամ աւելի ճիշտը՝ խարել, ինչպէս ճրադի լոյսը շողշողալով խարում է մանկան և ձեռքն այրում. թշւառը չէ կարող երջանկանալ, եթէ երջանկացնող չկայ, դա շատ հասկանալի է: Ասա՞ քո սիրուհուն, որ ինչպէս ինձ խարեց սիրելիդ, նոյնալէս էլ քեզ կարող է խարել: Սիրիր, բայց ոչ յուսա՛, ոչ հասկառա՛:

Ի՞՞ս սառհածացրած էսկ!

Սիրտս զգում էք, որ ինձ քիչ առ քիչ սկսել ես մո-
ռանալ, նա արդար է. այս ողբան ժամանակ է, որ ինձ
ոչինչ չես գրում. միթէ կայ քո մէջ յարդանքի նշան դէպ
ինձ, դէպի գոյութիւնս: Գրում եմ քեզ՝ յոյս չ'ունե-
նալով, որ պատասխան կ'ստանամ: Եթէ կ'պատասխանես,
կեանքս քիչ կ'երկարէ, իսկ եթէ անպատասխան կ'մամ,
չուտ կ'մեռնեմ, որովհետեւ ցաւն արգէն տիրել է սրտիս,
մաշւում եմ թոքախտից: Քեզ աւելի եմ սիրում, աւելի
եմ պաշտում, չգիտեմ ինչու, գուցէ վերջին օրերս են:
Ահա մի անկիւնում ընկած՝ լալիս եմ մենակ, առանց կա-
րեկցութեան, անմըսիթար, անօդնական, թողնւած, մո-
ռացւած... անգութ, ինձ չես խղճում: 2եմ ուզում սէրդ,
սիրտդ, զոնէ յիշիր ինձ միայն նրա համար, որ հետո
ոսկի ժամեր ես անց կացրել: Եթէ յիրաւի ինձ բոլորովին
մոռացել ես, զըիր, որ այլ ևս չես ցանկանում ինձ ճա-
նաշել, որ սիրտդ ինձ համար քարացել է, որ իմ մահն
ես ցանկանում, չես ուզում, որ գոյութիւն ունենամ, որ
պէսզի միանդամից հանգստանամ մահւան զրկի մէջ: Թէ
ինձ խղճում, ափսոսում ես. օ, եթէ այդպէս լինէր.
բայց ուր է, ինչից իմանամ:

Առում եմ նրան, որ խիել է իմ սրբութեան տաճա-
րը և ինքն է պատարագ մատուցանում նրա սուրբ սեղա-
նի վրայ. նա ատելի է, նրա մահն եմ ցանկանում, թէ-
կուզ վշտանաս: Ներիք, որ խիստ խօսքերով եմ զբում,
սիրոս այրւած է, զու ես զբել, որ վշտացածին չէ կա-
րելի սահման առաջարկել, ուշեմն թող այս էլ ասեմ, որ
մարդիկ հրէշներ են, որոնց սիրտը ծախու է, որոնց սէրը

կապալով է տրւում, այն էլ որոշ ժամանակով, ինչպէս փողը, որ մարդը մի զազելի, արատաւոր էակ է, որին չէ կարելի հաւատ ընծայել և ոչ էլ յոյս դնել նրա վրան, որը գիտէ միայն տանջել, վշտացնել, սպանել։ Սաստկացել է սրտիս ցաւը, զգում եմ, որ մօտեցել է մահը, իր գլուխը—թռքախտը գրել է արդէն սրտիս մէջ, քիչ առ քիչ ներս է մտնում, եթէ ցանկանաս, կարող ես արագացնել նրա անագորոյն արշաւը, և գերեզմանս շուտով կ'ուրախանայ, որ դատարկ չէ մնում. գուցէ կ'տրտմէ այրւելով սրտիս կրակից, որովհետև ես համոզւած եմ, որ այնքան ուժեղ է նա, այնքան մեծ ծաւալ ունի, որ չ'պիտի հանգչէ նաև իմ հանգելուց յետոյ։

Եթէ գոյութիւն ունի երջանկութիւնը, այն, որը երազում են բոլոր մարդիկ, եթէ կայ արդարութիւն, ճշմարտութիւն, որին գէթ խօսքով ձգտում են հասնել, նրանք ինձ համար չեն, ես հերքում եմ նրանց. որովհետև բրոնած ունէի այն շատիզը, որին անւանում են երջանկութեան ճանապարհ, բայց տեղ հասնելուց ոչինչ չ'գտայ։ Աշխարհումս միշտ արդարն է ճնշում, ոտնատակ ընկնում, ազնւութիւնն է կորշում, այդ այդպէս է։ 0՝, մարդկային ապագայ, որ բոլորին գերում, ապշեցնում ես, արդեօք դու այն ես, ինչ որ կարծում են, չեմ հաւատում, մէջս մեռածն են հաւատն ու յոյսը։

Քըիր ինձ, իմ հրեշտակ, գոնէ յարգիր անցեալը, թո՛ղ գէթ մի անգամ ստանամ մխիթարութիւնդ, որ հոգիս հանգիստ լինի։

Քեզնից արհամարհած Աշխեն։

Յարգելի Աշխեն!

Ներիր, որ այսքան երկար ժամանակ չեմ զբում. զբապատճառն, իհարկէ, ծուլութիւնս է, կարծում եմ կ'հաւատաս, որովհետև քեզ երբէք չեմ խաբել։ Թո՛յլ տուր ինձ ասել, որ խիստ տօնով ես զբում. այդքան էլ յուսահատւել!.. տղամարդու սիրտը մինչն այդ աստիճանը հասնելու ընդունակ է, իսկ կնոջ սիրտը չպէտք է հասնէ մինչն այդտեղ. դա քեզ համար կարող է վնասաբեր լինել։

Կարծում ես, թէ քեզ չեմ յարգում. երաժիշտն ինչպէս կ'մոռանայ իր հին քնարը, որով սովորել է նւազել, և փշրւած, ընկած է։ Առաջին սէրն անմոռանալի է. հաւատացնում եմ, այդպէս է և ինձ համար. դու սխալում ես այնպէս, ինչպէս մխալում ես կարծելով թէ պատասխան չես ստանալ, բայց ահա նամակս առաջիդ, ահա քեզ սխիթարիչ, սփոփիչ. այդտեղ կ'կարդաս, թէ ինչպէս քեզ յանդիմանում եմ յուսահատւելուդ համար, այդտեղ կ'տեսնես իմ անկեղծ խորհուրդը՝ փախչել սպանիչ մտքերից, չ'յիշել գերեզմանը, որը զգելի է իր կատարած պաշտօնի համար, այն սառն, անշունչ հողը, որ մաշում է մարդկային ուղեղը։ Ապրիր, բայց ինչո՞ւ ինձ համար, ապրիր միայն քեզ համար, բայց ոչ թէ ինձ, ես կորած եմ արգէն. ներողութիւն, չեմ ուզում ասած լինել, թէ քեզ մոռացել եմ, այլ այս եմ ասում, ինչպէս և շատ անգամ, որ այլ ես չեմ սիրում քեզ։ Զգում եմ, որ դու ևս նոյն սրտով չես վերաբերում դէպ ինձ, ինչպէս առաջ, որ սիրտդ ինձնից հեռացած է, և այդ շատ ուրախալի է. առաջ ինձ սատանայ չէիր անւանում, ինչպէս հիմայ, թէն այդ խօսքն առնուց յետոյ կեղծօրէն սիրային խօսքեր ես աւելացնում։

Գրում ես, որ ճանաշում ես ինձ... ճանաշում ես, որ ես դաւաճան եմ, ճանաշում ես, որ թողնող եմ, վոփոխամիտ եմ, ճանաշիր. մտքերի ծովը ցամաքեց, և ես վոխւեցի, այս, բայց քեզ ապրել է պէտք, ինչպէս և ինձ, և ինչու չ'ապրել, մահապարտ չենք: Ապրել առողջ մտքերով և ոչ թէ այնպէս, ինչպէս դու. զգում ես, որ քոնը չեմ, բայց գրում ես՝ «իմ Ռափայէլ». այդ զարմանալի է: Քիչ յետոյ էլ «անպնիւ» անունն եմ ժառանգում, իսկ յետոյ «հրէշ», որովհետեւ քո կարծիքով սէրը մարդուն հրէշ է զարձնում: Ես հրէշ չեմ, նկատում եմ, քեզ չեմ հրէշ և չեմ խարիլ սիրուհուս. միշտ կ'յիշեմ քեզ, թէկուզ դու ինձ մոռանաս, թէկուզ այդքան նախատինք թափես գլխիս:

Իհարկէ, ես քեզ հետ համաձայն չեմ, որ արդարութիւնը ոտնահարւում է, որ միշտ սխալն է ընդունելի: Բաւական է կարծեմ այսքանս էլ, եթէ ինձանով իսկապէս կարողանում ես հանգստանալ, ահա իմ խօսքերն ուղարկում եմ, նրանք կ'միսիթարեն քեզ:

Ռափայէլ

Ապոնիթ Մարդ, ինձ տանջող Աստիած!

Սպասում էի, որ քեզնից կ'մոռացւեմ, բայց այդ առտիճան չէի կարծում: Ես մահապարտ եմ, այս, դատապարտած եմ մահան. ինչ է իմ գրութիւնը, որ մի կողմից էլ դու ես արագացնում մահս: Եթէ պիտի մի տարի ապրէի, գուցէ կէս տարի չեմ ապրիլ. կեանքը քար տալ անյօյս, իմանալ, որ մի ժամ, մի օր, մի ամիս, կէս տարի հազիւ պէտք է լոյս ու արե տեսնես, դատասլար-

տւած լինել մահւան, և այդպիսի հարւած կրել, որպիսին քեզնից ստացայ!.. Հասկանում եմ, հասկանում, դու ինձ այնքան ես ատում, որ մինչև անգամ կամենում ես, որ շուտով գայ մահս, որպէսզի այլ ևս գոյութիւն չ'ունենամ, որպէսզի աւելի հանգիստ լինես: Հանգիստ... կ'լինես արդեօք՝ զգալով, որ մարդասպան ես, զգալով, որ այնքան վատ յատկութիւնները քո մէջ կան, որ տալիս եմ մարդուն: Կամենում ես ուժով հեռացնել քեզնից այն սիրտը, որը ոչ միտք ունի և ոչ էլ կարող է հեռանալ. ուզում ես ցոյց տալ ինձ, թէ դու էլ ինձնից ես թողնւած իբր թէ, որպէսզի առիթ չ'ունենամ ասելու. «Անգութ, ինձ թողեցիր...» Զգում եմ, սրտի խորին կակիծով եմ զգում, որ դու կորած ես ինձ համար, որ դու անդառնալի ես, որ անունս իր մէջ պահող ուղեղդ արդէն պատած է մոռացութեան դրագներով, և կարծում եմ, որ այլ ես ինձ չես պատասխանիլ, ես աւելի եմ կորած քեզ համար, քան կարծում էի: Ի՞նչս վայ տամ, ինչս կոծամ, վշտերս չեմ ճանաշում, այնքան խառն են, այնքան զարհուրելի, այնքան բազմաթիւ:

Քո դէմքը, որ մի ժամանակ հրեշտակային էր, նորից միտս ընկաւ. հէնց այս ըոպէին ահա, ահա ժամ ժպտում է այն ժպտով, որի տակ ես ինձ երկնքումն էի զգում... անցաւ, ահա նա. պատկերդ, դիմագուրկ... աշերումդ երեւում է այն կեղծիքը, որ սպանիչ է խարւողի համար. նա ինձ աւելի է տիխրեցնում. քաշիր նրան, չեմ ուզում նայել, չեմ ուզում համոզել, որ դու վոխւել ես:

Գուցէ այս վերջին նամակն է. բայց ես վերջին անգամ չեմ ուզում քեզ յանդիմանել, վշտացնել. էհ, չէ որ դու չես վշտանում իմ թշւառութեամբ: Ահա, ահա նորից դու ես իմ աշքի առաջ. նստած ենք խոտերի, ծաղիկների

մէջ՝ ծառի շւաքումը, դու շոյում ես իմ գաճղբահեր պլու-
խըն, ինձնից հարցնում ես. «Միթում ես ինձ...» ես ոչինչ
չեմ պատասխանում, այլ լուռ ժպտում եմ. նորից ես հար-
ցընում: «2է», պատասխանում եմ ժպտալով: «Ասա, էէ,
ասա, սիրում ես, թէ ոչ»: «Քանիերորդ անդամն է, որ
այդ հարցն ես տալիս»: «Բայց ոչ մի անդամ կարգին պա-
տասխան չեմ ստացել»: «Միթէ չ'զիտես»: «Ոչինչ չ'զի-
տեմ»—«Ե՞ն, զնա», և յետոյ տեղերիցս վեր ենք կենում,
սկսում ճեմել թե թեկ տւած տերեների ոլսոցի տակ...
Յիշում ես, ինչ կայ չ'յիշելու, ամեն բան կ'յիշես: Ե՞ն ես
Յիշում ես, թէ ինչպէս յաճախ կրկնում էիր, որ աշերս
կախարդել են քո աշերին: Վերջապէս յիշում ես առաջին
համբոյն, անգութ... օհ, նորից մոռացայ ինձ. բայց ինչ
կայ չ'յիշելու, երբ դու կարմրում էիր խօսելիս, երբ շունչ
չնչի տւած, իրար զըկած շրջում էնք շրվէժի խլածայն
երգի տակ. և մինչ նա ծխածան էր կապում արեմի շողե-
րով և մարգարտափայլ շիթերով, մեր սրտերը վազուց
կապած էին սիրով. մեր ծխածանն ամուր էր թւում, երբ
մեր շրթունքները հպւում էին հանդարտ... Ի՞նչ էինք ըզ-
գում, իհարկէ, այդ դու լաւ գիտես: Բոնում էիր ծամե-
գում, բիհարկէ, կարծես դէմքիդ վէրքեր էին բուսել,
բիցս, քում երեսդ, կարծես դէմքիդ վէրքեր էին բուսել,
աւելի ընդարձակ են, քան թէ երկինքը, մեր հոգիներն
թիւնն ու մեր սրտերինը և գտնում էիր, որ մեր սրտերն
աւելի ընդարձակ են, քան թէ երկինքը, մեր հոգիներն
աւելի պարզ են, քան թէ Աստուծոյ աթոռատեղին: Իհար-
աւելի պարզ են, քան թէ Աստուծոյ աթոռատեղին:

X

սում ես, որ չես խարել... այդպէս է: Ուրեմն չ'յուսա-
հատւել, դեռ նորից յուսալ. յոյսը միանգամից է փշում իր
հետ մարդկային բաղձանքների տան սիւները, միանգամից է
կոտրում իր խաչը: Յուսով ապրել, երբ ոչինչ չ'կայ, ան-
հերելի է: Այժմ կեղծօրէն խորհուրդներ ես տալիս, կեղծ,
պաշտօնական. կարծես պարտք է դրւած վրադ ինձ ան-
համ—անհոտ խորհուրդներ տալ և կեղծ մխիթարական
խօսքեր չուայլել. ամենայն ինչ քո միջում կեղծ է, քո
ամբողջութիւնը կեղծութեամբ է դոյացած: Թող թափեմ
սրտիցս ինձ տանջող վշտերը, նրանք ինձ պէտք չեն, ա-
ռանց նրանց էլ մահն ինձ չէ խնայելու, նա քեզ պէս ա-
նողորմ է, թէե դու նրանից էլ անողոք ես. նա զոնէ ազ-
նիւ է, իսկ դու անազիւ ես, դու ուխտադրուժ ես, կոյր
ես, չես ճանաշում մեղքդ, ուրացող ես վերջապէս: Ինչքան
կարող ես, վիրաւորւիր. թէե կարծեմ վերջին խօսքերս
են սրանք, թէե քեզ այժմ աւելի եմ սիրում, քան թէ սի-
րել եմ երբ և իցէ, բայց չեմ կարող վիշտս ծածկել, չեմ
կարող շտալ քեզ այն անունները, որոնց արժանի ես. վի-
րաւորւմ ես, բայց դու ինձ որքան ես վիրաւորել!: Երա-
ժիշտը չի մոռանալ իր առաջին քնարը, որի վրան նւա-
զել է սովորել, բայց դու երաժշտի սիրտ շունես, սիրտ
քար է, բնաւորութիւնդ մանկական. դու կեղծել, խարեւ
լաւ գիտես, բայց սիրել—երբէք. այն սէր չէ եղել, եւոգիս
այլ սիրախաղութիւն: Ես աւելի եմ ցաւում այն ուարժառ
ուով, որ այն էակը, որի համար գոհուում եմ, դու ես. Կա-
ւում եմ, որ գուցէ ինքդ էլ ես զժբախանալու մի օր:
Ինչպէս չցաւեմ, քանի որ դու ես իմ իդէալը, քո սէրն է
եղել իմ երջանկութիւնը, քեզ հետ եմ անցուցել այն ուազէ-
ները, որոնց մէջ ոսկի և մարգարիտ է շաղ տաճ: Այն
ցողը, որով թրջում էին մեր ոտները, լուսարսցին, այժմ

արեան կաթիլներ է դարձել, ինչպէս չ'ցաւեմ, այդ միայն դու ես, որ ցաւել չ'գիտես, այդ միայն քո սիրտն է, որի զգալն ըստէականն է։ «Ինչպէս թէ... կ'մտածես, ինչ անենք, թէ քեզնից խորշում եմ, ուրիշին խօմ սիրում եմ։» բայց միթէ այդ սէր է և ոչ միայն գրաւեռումն, որ թոյլ բնաւրութիւններին է յատուկ։ Այսօր ես եմ թշւառացած, վաղն էլ նա է այսպէս լինելու, միւս օրը՝ մի ուրիշը, վերջապէս մի ուրիշ անդամ դու, և այդպիսով կտրւելու է կեանքիդ թելը։ Մտածիր և ինքդ քեզնից կ'զարհուրես. երեսակայիր, որ մի քանիսին պէտք է այն անես, ինչ որ ինձ արիր. չ'կարծես թէ դրան սիրում ես, չես թողնելու, իմ մասին նոյնն էիր մտածում, բայց ինչպիսի հեշտութեամբ աղատւեցիր... Կարծում ես, կարծիր, որ չես թողնելու դրան, բայց գոնէ երեսակայիր մի ըստէ, որ դրան էլ կ'թողնես, դրա յաջորդներին էլ և մտիր բոլորի դրութեան մէջ... ե՞հ, ինչպէս կարող ես, քանի որ ինքդ չես թողնւել, և քո բնաւրութիւնն այնպէս է, որ եթէ քեզ թողնէ մէկը, դու էլ նրան կ'թողնես; այդպիսով կ'վերջանալ ամեն ինչ։ Մնաս բարով, էլ երբէք չենք տեսնւիլ...»

Քեզ պաշտող Աշխեն:

Յարգելի Աշխալ!

Հուսով եմ, որ կ'ընդունես նամակս նոյնպիսի ուրա-
իսութեամբ, որպէս և առաջ. սա մեղայական է, սրանով
քաղութիւն եմ հայցում, բայց կեղծութեան տեղ չ'ըն-
դունեԿ ներիր, ներիր ինձ, որ այսքան ժամանակ չեմ
գրել ոչինչ, չեմ միխիթարել երկնքից մարդուն չորհւած
առաջ. Խիթարական խօսքերով: Թո՞ղ քեզ տանջող այդ

մտքերը, հանիր մտքիցդ մահւան պատկերը, չես մեռնե-
լու, չէ, պիտի ապրես. գիտեմ, որ բաւականին երկրպա-
ղուներ ունես, նրանք քեզ սփոփանք կ'լինեն, կամ նրան-
ցից մէկն ու մէկը քեզ կ'երջանկացնէ, իսկ ինձ այն ժա-
մանակ աւելի շուտ կ'մոռանաս, եթէ ինձ յիշելով՝ դրժ-
բախտ ես, այլ ևս պէտք չեմ գալ քեզ։ Տեսնում ես, ինչ-
քան ներողամիտ եմ. այնքան անպատճեր խօսքեր
լսելուց յետոյ նորից եմ յիշում քեզ և գրում, ապացոյց,
որ չեմ մոռացել ոշինչ։ Քո բոլոր կծու խօսքերին չեմ
պատասխանում՝ ընդունելով իբրև վշտացածի անտեղի հա-
ռաչանք, որն ուրիշի պատիւը չէ գցում, այլ միայն վիրա-
ւորածի սիրտն է հանգստացնում։ Իսկ հին կեանքը յիշե-
ցընելդ բոլորովին զուը է, այլ ևս չեմ կարող սիրել քեզ.
թէ կարծում ես, որ այդպիսով ինձ զգացւել կ'տաս. ոչ,
սիրտս քեզ համար վազուց է լրած, և եթէ լինում են
երբեմն կայծեր, որոնք ինձ խայթելով՝ յիշեցնում են մեր
անցեալը, որը պիտի հիմնովին մոռանալ, նրանց էլ քո
հիսանդութիւնն է զուըս կորզում իմ հոգուց, որովհետեւ
ինքս էլ եմ եղել հիւանդ։ Եթէ իմանայի, որ խօսքերս
քեզ կ'սփոփէին, երկար կ'գրէի, բայց գիտեմ, որ միւնոյնն
է, եղած—չ'եղած, այսքանն էլ բաւական է։

Քեզ լիշող Ռափայէլ.

ԱՐՄԵՆԻԱ

Նորից եմ զբում քեզ իս անտանելով. թէև կարծում
էի անցեալ անզամ, որ վերջին զբութիւնս է, բայց քեզ-
նից ստացայ մի փոքրիկ զբածք, որը ոչ այլ ինչ է, եթէ
ոչ մի խաղ. Այն, որւ հետս խաղում ես; Ես ներեմ քեզ,

ներքմ, որ բաւական չէ, թողել ես ինձ, չես յարգում, չես յիշում, այլ և ծաղրում ես։ Դու իմ ես, չէ... ուրեմն ներում եմ... ներել... այս, ներում եմ մեծ ուրախութեամբ, թէ նոյն իսկ Աստւած Սադայէլին չէ ներել, այն համբերող Արարիշը։ Ներում եմ առաւելապէս այն պարզ պատճառով, որ շուտով մեռնելու եմ. չէ որ մեռնողն աւելի ներողամիտ է լինում։ Արդէն կուտում եմ մահճի հետ և օրէցօր ուժասպառ լինում։ Իմ կեանքն այն տեսակից է, որ իր վերջին օրերում տեսնում է, որ «ամենայն ինչ ունայն է» եղել, զգում է, որ բացի տանջանքից ոչինչ չէ ճանաչում, բացի մահից ուրիշ ակընկալութիւն չ'ունի։ Մահապարտի ժամը որոշւած է, նա գոնէ հանգիստ է, գիտէ, թէ քանի ժամ կապրէ, բայց ես նրա պէս համոզւած եմ, որ շուտով մեռնելու եմ, սակայն երբ, զուցէ այս ըոսէլին (տաժանելի կեանք!), զուցէ դեռ այս բառը չ'վերջացրած, զուցէ քեզ տակաւին «միաս բարով» շասած։

Ո՞րն է իմ ապագան, որտեղ պիտի կանգ առնէ իմ ողբերգական կեանքը։ Արգեօր, լացող կ'լինի շիրմիս վրան (այդ էլ միշիթարական է մեռնողի համար)։ 2է մի ժամանակ դու էիր զրում, թէ «կ'լաս գերեզմանիս վրայ», քո այն ժամանակւայ դրութիւնն իմ աժմեան դրութեան էր նման՝ այն տարբերութեամբ, որ իմ տանջանքն աւելի մեծ է, որովհետև ես թողնւած եմ և թոյլ, այն տարբերութեամբ, որ քո վիշտն իմ վիշտն էր, իսկ իմ վիշտը քո գւարճութիւնն է (գոնէ այդպէս է թուում), այն տարբերութեամբ, որ ասպրելն ես քո ձեռին էր, որպէս և մեռնելն, իսկ ես զուրկ եմ առաջին իրաւունքից, և այլն և այլն։ «2եմ ապրելու» ասելն էլ զժւար է։ Դու կ'ասես. «այնքան էլ ցաւ չէ մեռնելը, որովհետև թողնւելը մեռնե-

լուց էլ վատ է, կամ յետ չէ մնում նըանից։» Ճիշտ է... բայց չ'գիտեմ ինչու, կեանքը քաղցը է, մեռնելուց վախենում եմ, թէկուզ շատ եմ ցանկանում. ինչպէս թողնեմ այն ամենն, ինչ երկում է աշքիս և անզգայանամ. սարսուռ եմ զգում... թողնենք այս միտքն, առանց այն էլ հրդեհն անխնայ լափում է ներս, քաջութիւն չ'կայ դիմաղրելու. գանգատւելու առիթ ունեմ, բայց ի՞նչ հարկ կայ, ինչո՞ւ վիշտս պատմեմ նըան, որն ինձ չէ միշիթարելու, ինչո՞ւ թշւառութիւնս բաց անեմ այն մարդու առաջ, որ պիտի ծիծաղելով անպատէ ինձ, ի՞նչ օղուտ. եթէ յոյս ունենայի, զուցէ օգուտ էլ ունենայի. բայց զիտեմ, որ զու քարացած ես ինձ համար։ Ի՞նչ ասեմ այն կնոջը, որ խլեց ինձնից այն, որ կեսար է կոչւում. բոլոր կանայք այդպէս են համարեաց կնոջ սիրտըն անիւ է, որն այնքան արագ է պատւում, որ չէ ցոյց տալիս իր բազմատեսակ խարդախող զոյները, և նրա պատկերն այնքան զբաւիչ, կախարդիչ, խարուսիկ, շացուցիչ է, որ ամենասուր աշքն անզամ վրիպում է, ամենաառողջ բանականութիւնն անզամ ենթարկում է նրա հմայող փայլերին անզգայաբար։ Յղամարդիկ աւելի զարհուրելի են, քան կանայք, նրանք աւելի խորամանկ են, նրանց զործ զրած միջոցներն աւելի խիստ, ստոր և զարբելի են։ Սրանով կանանց առաւելութիւն չեմ տալիս, եթէ կանայք նոյնպիսի զիրք ունենային, որպիսին ունեն տղամարդիկ, ով զիտէ, աշխարհներ կ'կործանէին։ Զազրելի որդեր, ստոր ճիճուներ, անարժան հոգիներ, ահա թէ ինչ անուններ կարելի է տալ նըանց։ Էլ զրեմ... թողեմ, բայց ի՞նչ զրեմ—շատ բան կայ զրելու, շատ. եթէ սիրտս հանէիր և նրանում թագնւած գշտերը փոէիր երկրագնդի մակերևոյթով, ամբողջը կ'ծածկէր։ Սիրտս ու-

զում է տրաքւել, հոգիս գողում է, վշաքաղւում է մարմինս, ով է յանդգնել իմ ձեռներից խել նրան, որին իմ կեանքն եմ համարել, իմ սիրելին: Իմ սիրելին... իսկ ես սիրելի եմ... /Մարդկային սիրտը որքան փոփոխական է. իրան նւիրւած է ցոյց տալիս, հլու-հպատակ, ուրանում է մինչև անգամ իր կամքի գոյութիւնը, սիրտը քեզ է յանձնում ցյաւիտեան, բնաւորութիւնը փոխելով՝ քոնի պէս է դարձնում, սիրտը լի է ցոյց տալիս զգացմունքով՝ որպէս սրբութեան խորան, ատում է նրան, որին ատում ես, յարգում է նրան, որին յարգում ես, յանկարծ, ինչ... երկնային բարձրութիւնից ձանձրանալով՝ կրկին զլորւում է ցեխի մէջ, մոռացութեան տալիս այն բոլորն, ինչ որ մի ժամանակ սուրբ էր, անմատչելի, չէ կամենում նայել այն դէմքին, որից քիչ առաջ չէր կարողանում հայեացը դարձնել և բաժանւելն անհնարին էր համարում. «Ախ, ինչպէս բաժանւեմ, ես առանց քեզ անկարող եմ ապրել, ես կ'տխրեմ, կ'լամ», և այլն: Բայց վայ նրան, որն այդ երազային խօսքերն է լսում:

~~2~~Եռոս գողում է, բայց քիչ էլ զրեմ: Քո սէրը սէր չէ եղել, պաշտելի հոգեհանս, այլ ժամանակաւոր մի բան, սրտի ծարաւին յագեցում տալու տենչանք, որի հետևանքը լինում է աւեր, ամայութիւն: Դու այդպէս ես վարւել ինձ հետ, և շուտով, հաւատա՛, շատ շուտով, իմ ամբողջութիւնից կ'մնայ սոսկ դատարկութիւն: Այժմ ես և սիրում եմ, և ատում, և յարգում եմ, և արհամարհում:

Թշնառ. Աշխեն.

Յարգելի Քոյլիկ!

Զտապում եմ զրել քեզ հետս պատահած զժբախտութեան մասին, յուալով՝ որ վշտակից կ'ինես և կը-մխիթարես ինձ, բայց ոչ այնպէս, որպէս ես էի մխիթարում, ես մոլորւած էի, ինձ կորցրել էի, թէկ այժմ աւելի եմ կորցրել դլուս: Չմոռանաս ինձ, եթէ չես մոռացել զեռ ևս: Խոստովանում եմ յանցանքս. ես ցանկանում էի, որ ինձ անպայման մոռանաս, վշտանում էի, երբ ինձ զրում էիր, բայց ոչ թշւառութեամբգ, այլ նրանով միայն, որ միտս էիր զցում քեզ, չէի ուզում քեզ յիշել, քո մասին լսել, և այդ բնական է, որովհետեւ դու ատում էիր նրան, որին ես սիրում եմ: Բայց այժմ առանց քո մխիթարութեան ես կորած եմ: «Թշւառին թշւառն է միշտ մխիթար», եթէ դու թշւառ ես, ես էլ եմ թշւառ, իսկ դու ինձ սիրում ես, այդ համոզւած եմ, ես էլ քեզ յարգում եմ անկեղծօրէն, երկուսս էլ բախտակից ենք, ես քեզ լինեմ մխիթար, դու ինձ, ոչ ես կորչեմ, ոչ դու:

Ոյժ չունեմ համբերելու, ահա եղելութիւնը—ես թող-արուած եմ, աս այլ եռս չէ սիրում ինձ, նրան խաբել է ուրիշն... Ախ, անսիրտ կին, ինչու կործանեցիր իմ սըրբութեան սեղանն, ինչու անժամանակ թողեցիր ինձ մենակ, դու կատակ ես անում... բայց ոչ, ինչ կատակ, նա ասաց, որ չէ էլ ճանաշում ինձ, թողում է թե-թեամտութեանս պատճառով, ինձ պահել չգիտեմ իբր թէ, որ այն համբոյրները թոյն էին, որոնք մի ժամանակ խաղում էին շրթունքների վրայ և այլն և այլն: Այսպէս ահա. ուրեմն թշւառ չեմ—ի հարկէ: Անմիտս մինչև ան-գամ չեմ հասկանում, թէ ինչ օրեր պիտի տեսնեմ: Դու

այդ օրերը տեսել ես, չէ, քոյրիկ, որքան փորձւած կը-
լինես հիմա՝ բայց անիծիր ինձ, ես անէծքիդ արժանի
եմ. ես թեթևամիտ եմ դարձել. երբ հեռու էի այս խար-
դաւանանքից, ինձ վեհ էի զգում, իսկ այժմ՝ բոլո-
րից ստոր, թողնւած, արհամարհւած, կորած... Աշխար-
հում ոչինչ յաւիտենականութիւն չ'ունի, ամեն ինչ ան-
ցողական է, վերջ ունի, թէ ուրախութիւնը և թէ նոյն
իսկ վիշտն, ահա այդ է պատճառը, որ երբէք յոյսներս
չենք կտրում: Յուսով եմ, որ կ'պաշտպանես. ինձ...
Բայց ես Արս հետ այնպէս չէի վարւել, որ զէն շպրտեց
իր գրկից, ինչու նա ինձ ոչնչացրեց իմ բոլոր երազնե-
րով: Գարշելի աշխարհ... ախ, ինչու... ինչու... մուս է
միայն արտասւել:

Քո բողնած Ռաֆայել:

Պաշտելի եղբայր!

Ուշ է, շատ ուշ, արդէն ցաւն ինձ տիրապետել է
լիովին, ոչ քո միսիթարանքով և ոչ նոյն իսկ կենսա-
պարզե հրեշտակի այցելութեամբ կարող եմ բժշկւել. ես
շուտով սառ հողի ծոցում կ'քնեմ, բայց դու քաջալերւիր,
մի յուսահատւիր, գուցէ աս քեզ կրկին սիրէ. խօսիր
նրա հետ, համոզիր, որ մենակ չես կարող ապրել, թաղ
բարի դտնւի. մի այնպիսի միջոց ձեռք առ, որ նրան հա-
ճոյանաս, ես այդպիսի միջոցների հետ ծանօթ չեմ. բո-
լորովին:

Ճիշտ որ թշւառին թշւառն է կարեկից, բայց ես
այնքան եմ թշւառ, որ շուրջս ոչինչ չեմ նկատում: Ինչ-
պէս կարող եմ ուրիշն սփոփել՝ զգալով, որ շուտով

պիտի չքանամ այս աշխարհից. շատ խորթ է թւում:
Գիտես, որ սիրում եմ քեզ և սիրելու եմ մինչև վերջին
շունչս. եթէ սէրս տհաճութիւն չէ պատճառում, որպէս
քիչ առաջ, նրանով միսիթարւիր՝ մտածելով, որ մենակ
չես, իմ հոգին քեզ հետ է ամենուրէք: Եւ վերջապէս
քեզնից թշւառները կան, չէ. ահա սփոփանքի մի անըս-
պառ աղբիւր: Եթէ նրանից մերժւել ես իսպառ, աշ-
խատիր ուրիշն սիրել, որպէս դու էիր ինձ խորհուրդ
տալիս. ես չ'կարողացայ, բայց դու կարող ես: Ախ, ին-
չու թողեցիր ինձ, չէ կարելի արդեօք... բայց... բայց
ինչ օգուտ, մահւան եմ դատապարտւած... ինչ ծանր
խօսքեր, սակայն ձեռքովս եմ գրում: Էլ գրեմ. մա-
հապարտն ինչ կարող է գրել. մսաս բարով, երկայն ճա-
նապարհ պիտի գնամ, այլ ես չենք տեսնւիլ: Միսիթար-
ւիր, ոտքի ել, անպատճառ պիտի սիրել, ինչ է. միթէ
տուանց նրան անկարելի է ապրել, վերջապէս սիրելի հա-
մայն մարդկութիւնը. դու ցանկանում ես, որ քեզ էլ սի-
րեն. այդ միենոյնն է, բարեգործը հատուցում չէ պա-
հանջում: Վերջին խորհուրդս. եթէ կարող ես, մոռա-
ցիր նրան, որն ինձ մոռացնել տւառ, այն ժամանակ
անհոգ կլինիս (քո խօսքերն եմ զրում), որպէս թիթեռն. իսկ եթէ հնարաւորութիւն կայ Արսան փոխելու, դարձրու,
կրկին սիրել տուր, քեզ ոչ ոք չէ կարող բացարձակա-
պէս ատել:

Քեզ սիրող Աշխեն.

Ի՞մ Աշխեն, ի՞մ Անգիե!

Ես հիասթափւեցի. Արսան այլ ես չեմ սիրում, նա
այժմ այնքան էլ զրաւիչ չէ, մեծ զժւարութիւն չէր նրան

Թողնելը: Նորից առաջին սէրը զօրեղ է, հին-հին մտապատկերները կըկին են վերաբարեւել մտքիս մէջ, այնօրերը, որ միասին անցուցինք, բոլորն ահա առաջիս: Ես ատում եմ ամեն բան, խորշում ամենքից, ոչ ոքի չեմ հաւատում, բացի քեզնից: Մեղաւոր եմ առաջիդ, ներիր արհամարհնածիս: Ո՞վ գիտէ, այժմ դու կ'լինես ատելիս ինձ, սիրտը փոփոխական է. բայց ոչ, չեմ կարծում, քոնն այնպէս չէ, դու սիրում ես ինձ, և ես թշւառ չեմ. հակառակ դէպքում պատրաստ եմ մեռնելու, առանց սիրոյ ապլելու ոյժ չունեմ: Երդում եմ, Աշխէն, ես քո առաջին, որ այսօրւանից թողնում եմ բոլորն, ինչ որ ստոր է և անվայել է, և մաքուր սրտով ահա ուխտում եմ ձգտելու միշտ դէպ իդէալականը, բարձրը, սուրբը և կատարեալը. խոստանում եմ, որ յաւիտեան սիրեմ միայն քեզ, Աշխէն. չ'մերժես, ընդունիր սէրս, այն ժամանակ... Բայց շուտով դրիք. յուսով եմ, որ պիտի զբես. «Ես քոնն եմ, դու իմը...»

Քո Ռափայէլ.

Հոգիս!

Վերջին խօսքերս են, ես շուտով կ'մեռնեմ. մնաս բարով, այլ ևս չի օգնիլ ինձ քո սէրը, ոչինչ ընդունակ չէ վերակինդանացնելու սառած դիակն: Ախ, եթէ քիչ շուտ լինէր... ես կորած եմ, այլ ևս չ'պիտի տեսնեմ քո դէմքը: Բայց իմացիր, որ չ'նայելով քո զո՞րն եմ, այնուամենայնիւ քեզ սիրելու եմ մինչև յաւիտեան, այսինքն շատ-շատ՝ մի քանի վայրկեան կամ մի քանի ժամ... յիշիք ինձ կեանքիդ, շուտ չ'մոռանաս իմ յիշատակը. կամենում եմ, որ դէմ անունս մնայ յիշատակ այն մարդու մտքում, որը

ոտնատակ տւաւ ինձ: Յիշիք միշտ իմ կեանքը և զգուշացիք, որ ինձպիսի զո՞րեր այլ ևս չ'ունենաս, կեանքը խաղլիք չէ:

Դու, իհարկէ, կտիւրես իմ մահով, բայց ժամանակը շուտ կ'փարատէ վիշտըդ, ամոքւած սիրտդ կ'զերւի մի ուրիշից և բախտաւոր կ'լինես: Դու դեռ շատերին կարող ես սիրել և թողնել, այդ միայն իմն էր, որ չ'կարողացաւ ուրիշին պատկանել և ընկաւ:

Տես, թէ որքան համբերող եմ, որ վերջին ըոպէներում անզամ գրում եմ անտարբերութեամբ. բայց այս սէրն է ստիպում իհարկէ, միայն քեզ եմ գրում, ուրիշին միթէ կարող եմ:

Մեռնում եմ այն համոզմունքով, որ աշխարհում անկարելի է ոչ սիրել, ոչ յուսալ, ոչ հաւատալ. կ'ցանկանայի, որ ուրիշներն ևս համոզէին նոյն բանում: Կան այնպիսինեղը, որոնք առանց սիրոյ, յուսոյ և հաւատոյ չեն կարող ապլել, որպէս և դու, ուստի կարող ես չ'ընդունել իմ անտեղի համոզմունքը, պահանջելու ոչ մի իրաւունք չ'ունեմ:

Մեռնում եմ՝ քեզ յիշատակ թողնելով սէրս և մի քանի կաթիլ արցունք. ահա նամակիս ճակատին: Արցունքով սկսել եմ կեանքիս այս շրջանն, արցունքով էլ թո՞ղ վերջացնեմ: Ահա իմ կտակը, կենաատու և կենաատ հրեշտակ— ոչ սիրիր, ո՞չ տոսու եռ ո՞չ հաւատու:

Քո Աշխենդ.



III.

Բ Ա Ն Ց Ի Խ Ա Ր Ք Ի Ց .

Երբ հասնում էին չարատանց գիշերները, երբ լուռ
քնում էին թէ երկիր, թէ երկինք, թէ խիզմ, թէ միտք,
և արթուն էր մնում միայն Աստած, որ տեսնէ թէ ով է
խախտում բնութեան օրէնքն, ով է խանգարում գիշերա-
յին մեռելութիւնը, երբ նոյն խակ գիշերային իշխան քա-
մին չէր յանդգնում յայտնել իր տրտունչն, այդ ժամերին
մի վշտահար, թոյլ երիտասարդ իրան ապաստան ընտրելով
լայն երկնքի հովանին, ուր ուզում քշում էր իրան։ Նրա
բնակատեղիներն էին լոիկ անձաւները, մշուշապատ ծեր-
պերն, ահոելի փապարները. նա ոչ մի տեղ հանգիստ
չ'ունէր, ամեն տեղ էր և ոչ մի տեղ։ Ի՞նչ էր որոնում նա
մարդկային աշքից ծածուկ, ի՞նչն էր նրա խոռվայոյզ հո-
գին դէպ իրան քաշում—ոչի՞նչ միթէ. զուցէ նա հանդիստ
էր երազում. ոչ, նրա համար չէր հանդիստը, թէ և տանջւում
էր, որ մի օր գտնէ այդ խորթացած երանութիւնը, չար-
շարանքով էր ուզում գնել նրան և իրան յանձնել էր բնու-
թեան տնօրինութեանը։ Եթէ կարողանար մէկը մօտենալ
նրան, կ'սարսափէր՝ տեսնելով այն զունատ, մաշւած ճա-
կատն, այն նիհար, գուրս ցցւած այտերն, այն զարհուրելի

աշերը, որոնց մէջ կային ամեն ինչ—և տանջանք, և արհաւիլը, և բարկութիւն, և խելագարութիւն, որոնք միախառնելով՝ այնպէս կատաղի էին դարձրել նրանց. կլաէր, թէ ինչպէս նա յանկարծակի խանգարելով բնութեան նիրհը՝ խուլ հառաջներ էր արձակում խորունկ հոգուց և մերթ այնպէս մոնչում, որից զղըդում էր շրջակայքը: Նրա աշերը չոր էին, արտասուքները վախենում էին երեալ նրանց աղաւաղւած, արիւնալի մակերևոյթի վրայ. բայց երբ անսպասելի կերպով նրա միտքը վրդովում էր մօտ անցեալի յիշատակով, և արտասուքներն այլ ևս չէին կարողանում թագնել, դիտողը կ'նկատէր, որ աւելի խելագարի արտասուքների են նման նրանք:

Ով էր այդ գիշերւայ հերոսն, այդ ովկ էր, որ յանդը գնում էր փախչել Մօրֆէոսի սև քողի տակից և խաղալ նրա իրաւունքների հետ հառաջանքով;—Ես էի:

Մի պմնւած գիշեր էր. երկինք ու երկիր հաշտած
միմիանց հետ՝ ողորմութիւն էին անում միմիանց մինն
իր անդորրութեամբ, միւսն իր հրապոյրով. լուսինը, որ-
պէս կրյը գործիք երկնքի ձեռին՝ գնում էր խոնարհա-
բար այն շաւղով, որ գծել էր նախախնամութեան աջն,
իսկ աստղերը դիտում էին երկը մեռելային խաղաղու-
թիւնը և չ'կամենալով վրդովել՝ կարծես լուռ ժպտում
էին, երկնքում լուռ հարսանիք էր: Եւ երկիրն էր հիա-
նալի, լուռ ամեն ինչ. նոյն իսկ շարաճնի գետակը, որ
սովորութիւն ունէր ահազին գոռում-գոչիւնով առաջ
մղել, վրխիալ, գոռհ տալ ինքն իրան և կատաղի վշո-
ցով ամեն կողմ փոել ձիւնի ջրերը որպէս երկնքից պար-
գև ստացած սփոռց, կամ երբ իջած իր վայրենի բարձրու-
թիւնից՝ այլ ևս անկարող էր դառնում կլանելու անյազ
ալիքների մէջ հողային բլուրները, բայց նորից յիշելով

իր չարութիւնն, իր անցեալ գոռոզութիւնը և տեսնելով
որ այնքան է խոնարհւել, որ մինչև անգամ վախկոտ բռն
դալիս, նստում է քարի վրայ և կլլում իր կաթիլները, որ
մինչև ամգամ նստապատակը ցատկում է իր վրայով, և բը-
գէզը լողալով մի ափից միւսն է անցնում, կատաղում
էր իր մէջ, բայց անկարող լինելով բարկութիւնը Ծափել
մէկի գլխին, հառաշում, զլզում էր, որ գոնէ կարողանայ
խանդարել գիշերւայ ներգաշնակութիւնն,—այն գիշեր այդ
ապստամբ գետակն էլ միաբանած ընդհանուրի հետ՝ խա-
ղացնում էր աստղերն իր ծոցում՝ ստեղծելով իր մէջ նոր
երկինք։ Ժայռը, որ սովորութիւն էր արել խաղալ գե-
տակի կեանքի հետ՝ պոկենով մի ահազին կտոր և փշրե-
լով հոսեցնել, ուղարկել դէպի նա, որպէսզի կարողանայ
թեթևացնել իր ընատուը բարկութիւնն, այդ գիշեր զգա-
լով գործի անհեթեթ լինելը՝ կամեցել էր ինքն էլ յար-
մարւել միւսների հետ և թողել էր, որ ծաղիկները զար-
դարեն իր ծեր կուրծքը, և զեփիւռը շոյէ նըանց, և
կախել էր զլուխը՝ որպէս երեխան մօր համբոյրների տակ։
Ամենքը խոնարհւել էին և այդ բոլորի վրայ ես էի թա-
գաւորում... ցնողքով։ Զարաձճի ցնողք... որ այդքան շուտ
անզնելով տեղդ թողնում ես դատարկ։

Նստած էի զիլիսակոր ժայռի կատարին և դիտում
ոսկի գետակը թափանցիկ մշուշի միջով, նայում էի ա-
ռանց հրապուրանքի՝ ինչպէս խելազար: Ոչ ոք չ'կար
շուրջս. աշքս դարձրի հեռուն, բայց ահա մի սև կէտ, որ
դէպ ինձ էր դալիս. եկաւ, մօտեցաւ ժայռին, երկար դի-
տեց ինձ մի տեղում կանգնած՝ կարծես անվճռականու-
թեան մէջ, և յետոյ արագութեամբ վեր մագլցելով ե-
կաւ մօտս կանգնեց և նորից զցեց իր ապուշ հայեացքը
վրաս. եթէ խելազարի նման չ'լինէի, գուցէ լեղապատառ

հարցը առաջնորդիս. Նա ոչինչ չպատասխանեց, և արագ անցանք խոտերի միջով, որ համարեած ծածկում էին մեզ, ընկանք ծաղկավայրերն, ուր վայրի վարդը կարմրին տալով օրօրւում էր գիշերային մեղմ հովի առաջ: Մոռացել էի, որ հարցիս պատասխան չեմ ստացել, այլ մտածում էի, թէ ինչո՞ւ այնքան գժբախտ եմ, միթէ չէի կարող անսէր ապրել, կամ արդեօք չէր կարելի մշտնշենապէս սիրել և սիրել, ինչո՞ւ այդքան փոփոխական եմ, ինչ արաւ ինձ Աշխենը, որ նրան թողեցի. Նա ինձ համար և սիրող սիրտ էր, և քոյր, և մայր. յետոյ երազների մէջ ընկայ երևակայելով թէ ինչ երջանիկ կ'լինէի, եթէ Աշխենի հետ ամուսնանայի... է՞հ, թողնենք ցնորդները:

Առաջնորդս ինձ շատ քիչ էր նայում, միայն շատ անգամ քայլերը մեղմացնում էր ոտերիս ձայնը լսելու համար: Մի աղբիւրակի մօտ նստեցի և տյլ ևս չուզեցի գնալ. առաջնորդս կանգնեց՝ երեսը միւս կողմը դարձրած. տեսներով որ նա ինձ չէ էլ նայում, ահից վեր կացայ և շրունակեցի ճանապարհ նրա հետ: Տեսարաններին յաջորդում էին տեսարաններ. անտառը մեղմ սոսափիւնով երգում էր, երբեմն հատ-հատ ձայներ հանում, կարծես զառնցելիս լինի, և դիւթում ինձ. առւակը խուզուլ հնչիւներ էր արձակում և անուշ-անուշ կարկաշում, քարերին զարկում ու զարկում: «Օ՛ հոգսեր, հոգսեր, մտածում էի, եթէ ևս ձեզնից ազատ լինէի, վշտ աշխարհից այստեղ կ'գայի և վայելզութեան մէջ կ'ապրէի յաւիտեան. եւ որքան քաղցրութիւն, ինչ երջանկութիւն կ'զզայի այստեղ, ինչպէս կ'ժպտար ինձ ապառութիւնը և ինչ քաղցը կ'լինէի սէրը, երբ յուշառած ականչ կ'զնէի մեռնող թոշնակի անտառային թախծալի, սրտաճմլիկ սուզը, և զեփիւր կ'տանէր իմ ցնորդները դէպ Աստուծոյ աթոռատեղին...»

կ'լինէի գիշերային այդ ճիւաղից, որովհետև շափականց թուլասիրտ էի, մանաւանդ վերջին դէպքն ինձ աւելի էր վախկոտ դարձրել: Ես գլխակոր էի, գլուխա դարձրի և նրան նայեցի ապշաբար, նա էլ նայեց ինձ, գլուխը շարժեց, աւելի խորը նայեց և յանկարծ բոնեց ձեռքիցս, բարձրացրեց. Ես լուս ու մունջ հետեւցի նրան, ինչպէս կոյրն առաջնորդին:

Գնում էինք. ուր, ինչո՞ւ, ով էր ինձ տանողը, գուցէ նա գիշերային մի արիւնուուշտ աւազակ էր, գուցէ ինձ դէպի կորուստ էր տանում, ով էի ես, ինչ էի. այս հարցերն այն ժամանակ չէի տալիս ինձ, և ինչպէս կարող էի տալ, քանի որ միտքս շղթայւած էր, ինչպէս և կեանքս: Յիշողութեանս մէջ ցոլցում, առկայծուում է, որ բարձրացանք մի վիթխարի սարի գաղաթ. երկինքը պարզ էր և արել երեսում էր հորիզոնի վրան արևմուտքում, ներքէ՝ գաղաթից ցած արդէն մթնած էր. ահազին բերանը բաց արած՝ տարածուում էր անդունդը, որի ծայրը չէր երեսում, աշքից կորչում էր մթութեան մէջ: Ես սկսեցի զգալ դրութիւնս և սարսուացի. ուղեկցիս վրայ մի հարցական հայեացք զցեցի, նա միայն ասաց. «զնանք», և զնում էի յոդնած, յուսահատւած, երկբայութեան մէջ: Անշաւիդ ժայռերի վրայով կարծես զլորւում էի. խճերը ոտերիս տակից դուրս թռչելով մի ահռելի հոսանք էին կազմում և իրար զըկած սլանում դէպի ցած. մտածում էի, որ ահա հսկայական բարձրութիւնից կ'ընկնեմ անդունդների մէջ և շունչս կ'փշեմ, բայց կեանքս թանգ էր ինձ համար... Այդ տեղերն էլ անցանք. հատանք զարնահային թագաւորութեանն. այդտեղ յիշեցի իմ ամբողջ պատմութիւնն, զգացի ինչ լինելս և զարհութեցի նկատելով, որ բոլորովին անծանօթ տեղ եմ ընկած, անծանօթին կուրօքէն հետեւում եմ: «Ո՞ւր»,

Եւ յիրաւի, ինչ հիանալի, սքանչելի տեսարան է, երբ անտառում քաղցրալուր առակը խուլ երգերով՝ զլորում է իր կաթիները մամուռի վրայով, չորացած տերելը ոտքիդ տակ խշխալով՝ սիրտդ վեր-վեր է հանում, և տեսնում ես, որ ազատ ես կատարելապէս, ազատ օդի, ազատ լեռների, անտառների մէջ, միայն մամուապատ ժայռերն են դիտում քեզ և գթառատ երկինքը...

Տեսնելով՝ որ ուզեկիցս դուրս է գալիս անտառից, վախվիսելով բռնեցի թերից և ճշացի. «Ուր...»—Դէպի երջանկութիւն, պատասխանեց նա: «Ոչ, այլ ես անկարող եմ քեզ հետեւլ, ես աւելի յօժար եմ, որ այստեղ լինի գերեզմանս, քան թէ հեռանամ այստեղից և դըրախտում լինեմ. ոչ, սիրելիս, այլ ես չես կարող ինձ խաբել, իմացայ, որ դու աւազակ ես և կամենում ես ինձ ևս քեզ պէս դարձնել, բայց խաբւած ես»:—Եկ, ասաց նա մի այնպիսի ձայնով, որպիսով Սադայէն է կանչում իր զոհին: Դուրս եկանք անտառից և սկսեցինք նորից բարձրանալ. լուսինը մի ուղիղ գծով կտրել էր անտառը ժայռերից, և մենք լուսնի տակ գնում էինք, մինչեւ որ հասանք մի մենաստանի: Չորս կողմն ապառաժներ, անտառներ, իսկ ինքը մենակ կանգնած՝ սարսափ էր ազդում, և թւում էր, թէ աւազակների բոյն է: ~~X~~

«Աղաջում եմ, ասա ինձ, ով ես դու, հարց տւի առաջնորդիս. ինչ ես կամենում ինձնից, ինչու ես ինձ տանում, կամ թէ ուր, սպանիր ինձ այստեղ, այլ ես ոյժ շունեմ գալու, թուլացած եմ»: Նա պատասխանեց.

—Դու ցանկանում էիր անհոգ օրեր, քեզ տանում եմ նրանց աշխարհը. մի յուսահատւիր, մեր ճանապարհը շար չէ: Քիչ հանգստացայ, բայց ըստէական էր այդ, նրա խօսքերը կեղծ թւացին, թէ կարմանում էի, թէ նա որտեղից դի-

տէր, որ ես դժգոհ եմ ներկայից և անվիշտ օրեր եմ ֆնտում:

«Բայց այն անտառում ես կարող էի երջանիկ լինել, ինչու ինձ այնտեղ չ'թողեցիր, եթէ իմ բարիքն ես ցանկանում»:

—Հետեւիր:

Հետեւում էի. ահա հասանք մի աւեր քաղաքի:

«Այս ինչ է».

—Երջանկութեան զաւակների խղճուկ բներն են, մտնենք, պատասխանեց նա և ներս մտաւ մի տուն՝ բռնելով ձեռից և ետևից համարեալ քարշ տալով: Մտածեցի, թէ ահա իմ օրհասը, չարութիւնը պիտի տիրապետէ—կամ մենակ, կամ գառնալ արնախում աւազակ, ահա թէ ինչ է վիճակւած ինձ: Առաջնորդս մոմ վառեց. տան պատերը երեան եկան առաջիս, որոնք աւելի մեծ սարսափ զցեցին վրաս. տունը մի գետնափոր էր, պատերը ծածկւած հրակայական զէնքերով—հրացաններով, սրերով, թրերով: Բայց առաջնորդս շուտ չ'կամեցաւ որոշել իմ ապազան, տնից դուրս տարաւ և մատով ցոյց տալով շէմքը՝ «կարդա», ասաց: Կարծեցի, թէ ճակատագիրս է այնտեղ գրւած, իմ գատավճիռն է և շտապեցի կարդալ. «Սա անյաղթ քաշի տունն է, որ շատ տարիներ զէնք ու զրահի դէմ կոխւ մըղելով՝ այսքան զէնքերը թողել է յիշատակ, որ մարդկանց առաջին վկայ լինեն իր մեծ գործերին»: Հարց տւի առաջնորդիս:

«Ո՞րն է երջանիկ կեանքը, քանի որ այստեղ արիւն է փայլում. դու չ'առ ոգի ես, ասա, թէ բարի, այս արեան միջով ինձ ուր ես տանում»: Նա ժպտաց զիւական ժպտով, և մի ուրիշ տուն մտանք, որի մէջ տեղում մի մամուապատ ժայռի կտոր էր կանգնած, և մի փոքր տեղ

յղկած։ Առաջնորդս պոկեց յղկած տեղի մամուռը և հրամայեց կարգալ։ Այնտեղ գրւած էր. «Միթէ գոյութիւն ունի երջանկութիւնը. ոչ, Աստւած նրա տեղ ցնորք ստեղծեց, որ մարդիկ նրանով ապրեն։ Դուքս զալուց շէմքին կարդացի. «Սիրեցի, տանջւեցի և մեռայ դեռ կեանք չտեսած։ Ինձ համար գոյութիւն չէ ունեցել նա, ևս չեմ ծնւել երբէք»։

Վրաս կատարեալ ապշութիւն եկաւ. շուրջս տիրում
էր վայրենութիւն, ամեն տեղ հանդիսաւ, բռն անդամ վա-
խեցել էր մուտք զործել այդ կուսական անտառների խոր-
քերն, այդ ժայռերի ծերպերը։ Դրութիւնս աննախանձելի
էր, աւելի և աւելի էի համոզւում, որ կորած եմ, մի մար-
դանման բան կար հետս, այն էլ չլինէր, աւելի լաւ կհա-
մարէի։ Նա մտաւ մի ուրիշ տուն և ինձ ձեռքով կանչեց.
մտայ. հրաշք, յանկարծ այդ վայրենութեան մէջ մի մար-
մարիօնէ արձան էր կանդնած սենեակի մէջ տեղում. նա
սե էր և խիստ նման առաջնորդիս։ Վրան գրւած էր. «Ծնչ
քաղցը է աշքով տեսնել իր արձանը, որ կանդնած է
շարչարանքով»։ —«Ե՞հ, չեմ ուզում այնպիսի արձան, որ
տանչանքով պիտի ձեռք բերւի։ Ես կամենում եմ հոգե-
կան հանդիսաւ, իսկ այդ որսեղից կ'լինի, քանի որ մի
փորձանքից վախսայ, միւս թակարդն ընկայ»։ այսպէս էի
մտածում անշարժ կանդնած սե մարմարիօնի դիմաց, մին-
չև նրա տէրը զուրս տարաւ սենեակից և շնչքը ցոյց տա-
լով կարգալ հրամայեց։ Այնտեղ գրւած էր միայն մի բառ—
«Կեանիք»։

Երբ կենսասէր առաջնորդս ուզում էր մտնել մի ուրիշ տուն, ևս վճռած լինելով այլ ևս չ'հետեւ նրան՝ ասացի. «Սպանիթը ինձ, այլ ևս չեմ կարող իբրև խաղալիք ծառայել քո քմահաճութիւններին. Ի՞նչ գործ ունեմ

աւերակների և նըանց ափեղցփեղ գրւածների հետ. ինչու
պէտք է զուր թափառեմ, երջանկութեան համար քեզ
հետեւեցի, բայց դու քո յիմար զրերով միայն խառնում ես
առանց այն էլ խառնւած ուղեղս: Գնանք այստեղից,
ց՞յց տուր այն ճանապարհը, որ տանում է դէպի մարդ-
կային ընակատեղի:»

Գայլու բառական ու
Գնում էինք, բայց մտածում էի, թէ ո՞րն ընտեմ,
մեռնել, թէ լինել աւազակ. վճռել չէի կարողանում,
բայց կարծես ուզում էի հակւել դէպի վերջինը, թէն
այդ էլ ահալի էր թւում, երբ մտածում էի, որ մի օր,
մի ժամ զնդակը խառնելու է թոքերս և տապալելու եմ
փոշու մէջ՝ արիւնովո նրան ողողելով։ Տխուը մտքեր և
թոյլ բնաւորութիւն, ահա թէ ինչ էր դրութիւնս։

Լուսինը լեզան հտևում թագնեց՝ թողնելով լորի
շըջակայքում ահ ու սարսափ։ Բարձրանում էինք սարն.
ամեն մի հաստաբուն ծառ թւում էր ինձ մի աւազակ,
որ պիտի գար, մեզ հետ միանար և ուրախանար կար-
ծըւած նոր ընկերոջ համար, բայց բնութեան շունչը—քա-
մին չէր շարժւում իր տեղից, որ ծառ—աւազակներն էլ
շարժէին իրանց հսկայ գլուխները, և ամեն մի տարակու-
սանք փարատւէր։ «Արդեօք, մարդն է այստեղ սանդուդ-
ներ կազմել իր ձեռքով, այդ աւազակային ապաստանա-
րանի շաւիդն աւազակներն են կանոնաւորել, թէ բնու-
թիւնն է աւազակներին ողորմութիւն արել», մտածում
էի և զնում, մոռացած մի քանի վայրկեան առաջ ինձ
տիրած մահացու վախը, մինչև հասանք գազաթիւն։

«Ահա, քո ցանկալի կեանքի նախադռւը», վսպաց
ուղեկիցս և նստացըեց ինձ քարի վրան, իսկ ինքն անյայ-
տացաւ:

Հայոց Հայութեան կողմէն պիտեցի, օ սարսափ, նա չկար, ուր

գնաց, որտեղով. և աւելի վհատւեցի. շուրջս սիրտ ճաքացնող խորխորատներ, սարսափելի վհեր, անդունդներ, անվերջ ձորեր. ժայրերը զրկում էին նրանց, և ոչ մի շաւիդ չէր նկատւում, ոչ մի լուսաւոր կէտ, անտառներն անելանելի, իսկ ես ծերպի ժայրին, չգիտէի, թէ ուր զնայի, ինչպէս անցնէի անտառներով, ժայռերով, որտեղ՝ ով գիտէ, վիստում են հարիւրաւոր զազաններ:

«Ահա իմացայ, խօսում էի ինքս ինձ, աւազակապետը բերել է ինձ այստեղ, որ խելքի գամ. Կհամաձայնւեմ արդեօք, թէ ոչ, դա դեռ ևս մտածելու բան է... բայց այն անիծեալն ուր զնաց, գուցէ թագնւած է մի անկիւնում,» և սկսեցի կանչել ահուզողով և մեղմաձայն, յետոյ յուսահատւելով և յետոյ սարսափելով ու գոռալով. բայց ոչ մի ձայն պատասխան չէր գալիս, միայն արձականգն էր ծաղրում կապկաբար: Կախվիսելով գիտեցի բոլոր տեղերը, որտեղ կարող էր իմ կարծիքով ուղեկիցա թագնւած լինել, բայց ոչ... Սկսեցի հաւատալ կախարդութեան և նրան ընդունել մի կախարդ:

Բանտի մէջ էի յոդնած ոտներով, թուլացած սրտով. ընկայ խոնաւ գետնին և արտասւեցի՝ ինչպէս անմայր մնացած երեխայ, այնքան արտասւեցի, որ անզգայ ընկայ, և քունս տարաւ: Ահա երազումս մի գեղեցկուհի երեաց... Անհանգիստ կեանք! մինչև իսկ երկնքից չնորդւած պարզն անգամ չէի կարողանում հանգիստ վայելել, քունս անգամ կուիւ էր ինձ համար: Երկնքից իջաւ, թէ երկիրը նրան ստեղծեց բանտիս խորքում. մտածում էի միւս օրը, նա հիանալի էր... կապոյտ աշեր ունէր, որպէս գարնան երկինք, ճերմակ բազուկներ, որպէս հրեշտակի թերը, և մի գոյգ կամարներ զարդարում էին նրա նախշուն աշերը, որպէս ծաղիներով զարդարւած բլուրը դրախտանման

հովիտը. բաց կրծքի վրայով կախւել էին երկայն գանգուրները, որպէս ծիածանը դալարագեղ լերան կրծքով կապում է իրան. դէմքը հրեշտակային էր, դժառաւ հայեցքը նոյնպէս չնաշշարհիկ: Նայեց նա վակ աշերիս և երկու բազուկները միացնելով իրար հետ՝ դրաւ փափուկ վզի վրայ և տխուր երեսը դարձեց ու սկսեց հեռուն դիտել: Ուսերից վայր ընկաւ գիշերային սկ վերարկուն, և նա մնաց նոյն դրութեան մէջ սպիտակափառ հրեշտակի պէս կանգնած: Մարսուաց (երեխ մըսեց) և երեսն ինձ դարձեց: Մերկ կուրծքն սկսեց վեր-վար ելեէչ անել. նա յուզում էր: Նայեց ինձ երկար, նստեց քարի վրայ՝ մօտս, նորից նայեց և, ահ, Տէր Աստուած, երկու կաթիլ արցունք գլորւեցին նրա զոյգ աշերից. երազումս ես ևս լալիս էի, և երեսս դարձրի, որպէսզի չտեսնեմ այն արցունքը, որոնց թափւելու պատճառն ինձ անյայտ էր: Ի՞նչ էին նրանք ինձ համար, սովորական արցունքներ չէին, որոնցից ես այնքան էի թափել, որ նոյն իսկ նրանցից գոյացած հեղեղը չէր կարող իմ տրամադրութիւնը փոխել. Եթէ այդպէս էր, ինչո՞ւ երեսս դարձրի, որ չտեսնեմ նրանց, իմ դէմքին ինչու երևացին նրանցից: Օ՛, բայց չէ որ այս միայն երազումս էր. սակայն առաւօտեան արցունքը տակաւին չէր ցամաքել դէմքիցս, և աշերս թաց էին:

Ով իր կեանքում երբեկցէ այնքան է զարմացել, որ մինչև անգամ մոռացել է իլ գոյութիւնը, մոռացել է ամբողջ տիեզերքը, մի խօսքով՝ որն իսկապէս արթնութեան ժամանակ քնել է, կամ կենդանւոյն մեռել է, նա կարող է երեակայել դրութիւնս, երբ առաւօտեան տրուելով աշերս՝ ինձ տեսայ փափուկ անկողնում, վրաս մէկ վրան փոած և մօտս ուտելու պաշար: Հրաշը, կախար-

գութիւն, աւազակութիւն, առաքինութիւն, թոյն, երկ-
նատուր շնորհք, այդ բոլորը յաջորդաբար մտքովս անց
էին կենում, և ես չփառէի, թէ դրանցից որին եմ յանդի-
պած: Միթէ իսկապէս երազում չէի տեսնում այն հրեշ-
տականման էակին, հրեշտակ, որի պատկերը երբէք
չեմ տեսած և միայն երևակայութեամբ եմ ճանաշել
նրա գոյութիւնը, միթէ իմ իդէալական հրեշտակն էր
մարմնացել ինձ համար: «Բայց ո՛չ, դա խարուսիկ ցնորք
է, մտածում էի, որ ինձ ծաղրում է, ինչպէս միրաժը,
որ խարում է ծարաւ ճանապարհորդին: Հա, երկի աւա-
զակապետն է ինձ հոգ տանում, որպէսզի շուտով համա-
րացել էի միանգամայն. եթէ այդ բոպէին մէկը վերջ
տար կեանքիս, ոչինչ չէի զգալ: «Բայց ո՞ւր է իմ երա-
զային հերոսուհին, որտեղով եկաւ, որտեղով գնաց, չ'ինի
նա էլ էր կախարդ, ինչպէս և աւազակապետը, կամ զուցէ
նա սոսկ աղջիկ չէր, այլ խսկապէս մի ողի. բայց ինչ
է ողին, չէ որ նա կատարեալ աղջիկ էր, միթէ ողին ևս
աղջկայ նման է, կամ աղջիկ է:» Զանազան այսպիսի
մանկական մտորումներ ինձ տանջում էին, մինչև ընկայ
խորին թմրութեան մէջ: Այսպէս բաւականին երկար մնա-
ցի, այդ նրանից էր երեսում, որ սկսել էի մտածել արեի
ժագման ժամանակ, և երբ ուշքի եկայ, նա բաւականին
բարձրացել էր:

Տեղիցս վեր կացայ և դիտեցի շրջակայքս: Ամեն մի
կողմ նայելիս՝ տարակուսանքս և սարսափս աւելանում
էին. երկու կողմս ժայռեր, մէկի վրայ մի սև մեծ կէտի
պէս լուռ մենաստանն էր երեսում. միւս կողմում ցըւած
պէս կատարին մի անսառան ամրոց էր բարձրացած,
ժայռի կատարին մի անսառան ամրոց էր բարձրացած,
որ վրաս դիւթական աղջեցութիւն էր անում. չփառեմ

ինչու, փրկութիւնս սպասում էի այդ ամրոցից. նա ինձ
թւում էր արդարութեան ծպտեալ պաշտպանների մի
թագստոց, ուր աւազակների հետքն են պահում. իսկ մե-
նաստանը թւում էր մի երկրային դժոխք, ուր աւազակ-
ները սև զգեստների մէջ մենակեցների անւան տակ
ապրում են սև սրտերով... երբորդ կողմում մի ամենի
խորխորատ էր ձգւում, որի խորքը դժոխքից էլ մութ
էր, որի յատակն իմ աշերն անկարող էին նշմարել: Չոր-
րորդ կողմում տարածւած էր ծովը երկնքի պատկերով, և
ափին մօտ՝ մի բոլորակ կղզու վրայ տնկւած էր մի սպի-
տուկ տուն: Ես կարծեցի, թէ դա թողնւած զօրանոց է:
Աւելի էր սարսափեցնում ինձ ծովը, մտածում էի, որ
այն կողմից բոլորովին անապահով եմ. առաջին անգամն
էի ծով տեսնում, նա ինձ սկզբից չուր չ'թւաց, այլ եր-
կընքի մի մասը, որ իջել էր, երկը հետ միացել, և հա-
մոզւեցի, որ այն աշխարհն խսկապէս հրաշալիքների աշ-
խարհ է: Ես վհատեցի զարմանալի կերպով: Վերջապէս
ուշուշով դիտել սկսեցի ընակարանս: Պատառուկը հիւս-
ւելով տարածւել էր բանտիս շուրջը՝ տեղ-տեղ բարձրա-
նալով, տեղ-տեղ կռանալով, մի ահագին հիւս կազմելով
կախւել էր պատից դէպի ցած: Մէջ տեղում մի բարձր
քար էր կանգնած, որի շուրջը վարդի սոտերը ցանց էին
կազմել: Մօտեցայ նրան, բացայ քարի երեսը կասկա-
ծանքով: Դարձեալ գիր, դարձեալ լիշտակարան: Բայց
սա էլ նախկինների պէս մի Փօրդեան հանգոյց չ'լինի.
կարդում եմ: «Իմ բարձանքներին չափ, սահման չկաը,
բայց աւազ, նրանք մնացին անկատար, և փշրւեց
սիրտս միանգամ ընդ միշտ...» Միւս երեսին զլւած էր.
«Յանկանում էի, որ մի բարձր բլրի վրայ թաղեն իմ
դին, որպէսզի ուշացած, ճանապարհից դուրս եկած ան-

ցորդն այցելէ անշուք շիրիմս և նայէ, տունէ՝ թէ քանի վէրքեր կան սրտիս մէջ, քանի փշրւած յայսեր են թաղւած այս անկեանք հողում։ Այդ ըռպէներին էլ կեանքըն ինձ կ'ժպտայ, թէն ինքս չեմ զգալ։ Ես շատ կենսասէր էի։» Երբորդ կողմին զըւած էր. «Թողդ մարդիկ դամբանիս շուրջը վարդիներ տնկեն. ես ցանկանում եմ, որ իմ շիրիմը զարդարի այն ծաղկով, որն արտայայտում է սեր։ Երբ դամբարանս կ'մամուտի, վարդի կոկոններն էլ կ'չորանան, ես կ'անյայտանամ մարդկային աչքից, իմ յիշատակը կ'թառամի, և միայն այն ժամանակ կ'մեռնէ հոգիս։ Զ'կարողացայ կանդնել մի արձան, որ իմ հոգին էլ ապրէր յաւիտեան։»

Երկար ու բարակ մտածելուց յետոյ թմբութեան մէջ ընկայ, քնեցի։ Սակայն քունս անհանգիստ էր. մինչև անգամ երազումն փոթորկալի կեանքս էր ինձ պատկերանում, և տառապում էի։

Միւս օրն ինքս սկսեցի վերջապէս իմ գոյութեան մասին կասկածել և այդ բոլորը համարել մի մեռածի երազներ. ինձ աշխատում էի համոզել, որ իսկապէս ես չը կամ, որ այն ուրիշ բաներ են եղել, ինչ որ պատահել են ինձ հետ, որ այդ միայն այդպէս է թւում, իսկապէս այդպիսի բաներ չեն եղել։ Բայց ինչպէս... հօրս և Աշխենի մահը, նինայի դաւաճանութիւնը և այն և այն։ Եւ սկսեցի մի առ մի յշել, թէ ինչպէս նինան իմ ուշադրութիւնը գրաւեց իր հայեացքներով, յետոյ ինքս սկսեցի նրան նայել և զրաւեցի. իսկ նա այնուհետև սկսեց վրաս չ'նայել այլ և այդպիսով ինձ աւելի էր քաշում դէպ իրան։ Նրա հապատութիւնը վերջապէս ստիպեց ինձ սիրել նրան, և ես սկսեցի տանջւել, յուսահատել, երկբայել, կասկածել և երբեմն յուսադրել ինձ։ Բոլորովին ուժա-

պառ կ'լինէի, եթէ չ'լինէր մի հանգամանք—տանջում էի, բայց և տանջում էի մի ուրիշին։ Ի՞նչ զւարճալի է տանջելը, երբ ինքդ ևս տանջւել ես. ի՞նչ քաղցը է, ի՞նչ վայելանք է տանջելը, երբ ինքդ ևս շարաշար տառապում ես նոյնպիսի մտորումներով.—մի վայրենի բաւականութիւն է մտնում կրծքիդ տակ, զգում ես, որ առա որին պաշտում ես, իրաւունք ունի վրադ անդամ չ'նայելու. Քիչ հանգստանում ես, ցասմունքդ իջնում է։

Բայց կիրքն առաջադիմում է, երբ յագուրդ չէ ստանում. տանջելը չէր կարող յամենայն դէպս տանջւելու առաջն առնել։ Նինայի անորոշ և հպարտ հայեացքն ինձ գերում էր. ես աշխատում էի նրանից խոյս տալ, և նա նկատում էր այդ ու ժպտում։ Ի՞նչ էր նրա ժպիտը—հեղնութիւն, ուրախութիւն, թէ վիշտ, այդ չէի հասկանում։ Բայց ես իմ հպարտութեամբ յետ չէի մնում նրանից։ Այսպէս երկար կ'շարունակէր, եթէ բոլորովին չ'յուսահատէի։ Այլ ևս չէի ուզում մնալ այնտեղ, ուր որ առ էր, կամենում էի հեռանալ մի խուլ անկիւն և այստեղ ինձ յանձնել բնութեան տնօրինութեանը. կարծում էի, որ շուտով կ'մեռնեմ. հարկաւոր էր տալ վերջին հրաժեշտը նրան, որի սէրն ինձ համար թոյն էր եղած։ Վերջապէս մի օր նրան գրեցի. «Յայտնիը ինձ, ինչո՞ւ մաշում ես մի ոյժ, ինչո՞ւ թուլացնում ես նրան, որը կարող է մեծանալ և քեզ աւելի մեծ եռանդով սիրել, պաշտել։ Զէ որ թուլացածն ամեն կողմից թոյլ է։ Օ՛, բաւական է, չեմ ուզում այն կեանքը, որը լի է կասկածներով. յայտնիք մի որոշ հայեացքով զգացմունքդ, և այդպիսով ամեն ինչ, որ տանջող է, կ'վերջանայ։ Եթէ քո զգացմունքը նոյնն է, ինչ որ քեզ պաշտողինն, ապա ուրեմն թող երկուսիդ բուռն կըքերը միմիանց յայտնի դառնան. իսկ

Եթէ խոր անդունդներ կան քո և քեզ աստւածացնողի սրտերի մէջ, եթէ նրանք իրար բոլորովին նման չեն, ապա ցոյց տուր միանգամայն, և արցունքը կ'երեայ իմ վաղուց չորացած, տանջւած աշերում. ես դուքս կ'թափեմ տանջանքս և կ'ընկնեմ յաւիտեան: Աւելի լաւ է կործանել, աւելի լաւ է տալ ամենավերջին հրաժեշտը, քան թէ կասկածներով ապել. — իմ կեանքը կասկածների շղթայ է: Գիտես, որ յոյսս հաստատուն չէ, եթէ երբեմն նա ծագում է իմ մէջ, այն էլ տանջանքն է ծնում. իսկ տանջանքի ծնունդը տանջանքն էլ սպանում է. այն, կասկածը տանջանք է: Եթէ դու դիտես հազար ու մի հոգսերը քո մտածութեան առարկայ դարձնել, եթէ գիտես տանջել, միթէ դժւարանում ես զգացմունքդ դուքս հանել, միթէ անկարող ես մի այնպիսի նշան տալ, որը քեզ համար ոչ մի նշանակութիւն չունի. եթէ մերժում է, քեզ ինչ հոգ, թող փշուի մէկի կեանքը, թող չախչախւի... իսկ եթէ սէր է... օ, չէ որ ինքդ էլ կ'երջանկանաս, չէ որ սիրելու երջանկութիւնը սիրողի երջանկութիւնն է: Քանիքանի անզամ կամեցել եմ սիրտս բանալ առաջիդ, ասել՝ թէ ինչպէս թախիծը ծածուկ մտաւ կրծքիս տակ և ըսկեց մաշել սիրտս, թէ ինչպէս ուժասպառ լինելով՝ բոլորովին ենթարկեցի նրա հաճոյքներին, թէ ինչպէս նա սկսեց խաղալ կեանքիս հետ... Այն դու ստեղծեցիր, այն ստեղծեց քո հպարտութիւնը, որին սկսեցի խունկ ծխել և աւելի ընկճել: Սակայն ինքնասիրութիւնս թոյլ չէր տալիս զգացմունքներս զնել քո առաջ, որ ծիծաղդ թափ ընկնէր նրանց վրայ և փշուր-փշուր անէր, խորտակէր և նրանց, և ինձ: Զուր է ամեն բան, յոյսերս արդէն մեռան... Ահա հեռանում եմ, շուտով մահու որդը կ'կտրէ յոզնած սիրտս, և ես կ'ննչեմ քեզնից հեռու... Ինձ այլ

և ոչ ոք չի յիշիլ, կ'կորչէ իմ օտար յիշատակն ամենքի մտքից. բայց դու չ'մոռանաս թշւառիս, ով գոռող աստւածուհի, իմանալով՝ որ ունէիր ձեռիդ տակ մի արարած, որին տիրում էիր կատարելապէս, որի կեանքը քեզ համար խաղալիք էր, որին դու վերջ տւիր քո կարող ուժով: Այս, դու աստւածուհի, ես, բայց չար և չարութեան աստւածուհի»:

Գրեցի, բայց պատասխանին չ'ուզեցի սպասել: Սակայն կեանքս երբէք չէ ցանկացել ինձ մի վիճակում պահել, միշտ փոփոխել է: Անցնում էի նինայի տան մօտով: Յանկարծ նա դուքս եկաւ առաջս իր քրոջ հետ և մօտովս անցնելու ժամանակ ձեռս ծածուկ սեղմեց. ես քարացած՝ մնացի տեղս կանգնած, գլուխս կոր: Նա շարունակեց գնալ. ես յետ նայեցի, նա գնում էր առանց յետ նայելու: Երբ արդէն բաւականին հեռացել էր, թեթև կերպով դէպ ինձ նայեց, և ես սկսեցի նրան հետեւ՝ ինքս էլ չ'հասկանալով, թէ ինչու: Քոյրը նրանից բաժանւեց, իսկ նա մտաւ այգին յետ նայելով: Ես բնազդմամբ հետեւեցի նրան: Նա մտաւ ճեմելիքների մէջ, ես նոյնպէս. Նա նստեց մի նստարանի վրայ, իսկ ես մնացի կանգնած. ամաշելով՝ կամեցայ յետ գառնալ: «Ե՛կ ինձ մօտ», ասաց առա: Ես վագեցի և տւի նրան իմ ձեռը: Նա սեղմեց և ասաց՝ «շատ թոյլ ես թւում ինձ, սիրելիս, նստիր մօտս»: Նստեցի դողալով: Մի ըոպէից աւելի լուութիւն տիրեց...

«Դու ես գրել այս նամակն», ասաց նա՝ հանելով և տալով ինձ: «Կարդա»:

— Ես գիտեմ, թէ ինչ եմ գրել:
«Կարդա»: Սկսեցի կարդալ. նա անդադար ծիծաղում էր հեղնօրէն:

— «Ի՞նչ կայ այստեղ ծիծաղելու», վիրաւորւած հար-

ցըրի նրանից և պատուեցի նամակը:

Նա վերցրաւ ձեռս իր ձեռների մէջ. ես աւելի էի դողում. մօտեցաւ ինձ, և նրա շորի քղանցները գիրկս ընկան... Յետոյ նայեց աշերիս... ես նրա ձեռը համբուրեցի...

— Յիրաւի դու ինձ սիրում ես, նինա, շնչացի ես:

— «Ես քեզ ոչինչ չ'ասացի», պատասխանեց նա սառնօրէն և ձեռը տւաւ ինձ ասելով. «Այս քոնն է»: Ես նորից համբուրեցի, և նա ընկաւ գիրկս...

Ի՞նչ կ'զգայ ծարաւով տանջւած անապատականը, երբ երկնքի չնորհիւ մի առւակի պատահէ: Ոչ, այս քիչ է, նա այն չի զգալ այդ ըոպէին, ինչ որ զգացւում է սիրելու գրկում: Միրտդ սկսում է տակն ու վրայ անել, արիւնդ եռ զալ, մարմինդ փշաքաղում է, դողում, և գլուխըդ պտտում: Ի՞նչ հրաշք, այն հայեացքը, որ իր հպարտութեամբ մաշում էր հոգիդ, այնքան է խոնարհւել առաջիդ, որ սկսում է դողդողալ. այն կուրծքը, որն անհասանելի էր քեզ համար, ահա ճմլում ես դու, որքան կամենում ես: Նա լուսմ է և... ժպտում է: Դու ասում ես մտքումդ. «տանջիր նորից, եթէ միայն կարող ես, փորձիր. օ, բայց այլ ևս փորձդ չի աջողւիլ. մեռան քո գոռոզ հայեացքները, և նրանց տեղ սիրտդ բացել, ինձ ես նւիրում...» Երջանիկ ժամ!! Իսկ երբ երկու համբոյը՝ ի մի են ձուլում!! Ճմլիք նրա մէջքը, շղթայիք քո գրկում, սակայն այդ ըոպէին գիրկդ անյագ է, կիրքդ անսահման... Իզուր չէր նինան, այդ հպարտ կինը շատ անգամ ասում. «Կնոջ մի գթոտ հայեացքը, կամ մի «սիրում եմ» խօսքն աւելի է նշանակում, քան տղամարդու գիշերային արցունքները...»

Բայց ի՞նչ մնաց այդ բոլորից, նա ինձ մոռացաւ,

ես էլ նրան: Ի՞նքս էի մեղաւոր, թէ նա. ինձ թւում է, թէ և ես, և նա, մանաւանդ նա. իսկ ինքը միայն ինձ էր դատապարտում, չ'գիտեմ ինչու: Կան հարցեր, որոնց պատասխանը շատ հեշտ է գտնել, բայց չես ուզում և համարում ես անլուծելի. այդպէս է և այդ «ինչուն»:

Թողնենք այս և շ'մոռանանք, որ ժայռի ծերպին հընաւէր տան մէջ էի անցկացնում օրերս: Բացի մտածելուց ոչինչ չ'ունէի. իսկ երբ յոգնում էի մտածելուց, մի նինջ էր գալիս վրաս, թմրում, ընկնում էի: Ոչ միայն օրւայ, այլ ամբողջ շաբաթւայ պաշարը միշտ կար. այլ ևս չէի զարմանում իրեն սովորական երևոյթի վրայ, այլ միշտ մտածում էի, թէ նրա բերողը որտեղից է գալիս, երբ և ինչպէս է մտնում, որ ես չեմ նկատում: «Հարկաւ գիշերներն է գալիս, մտածում էի, բայց որտեղից, այս կողմերը միթէ բնակութիւն կայ»:

Քիչ առ քիչ սկսեցի սովորել կեանքիս. սակայն մի օր ձանձրոյթը մտաւ մէջս և այլ ևս չ'ուզեց դուրս գալ. սկսեցի տանջւել ազատութեան տենչանքով: Ճարունակ անէծք էի թափում ամենքի և իմ գլխին:

Այդպէս անցան մի քանի տանջալից օրեր: 2' գիտէի, թէ ուր կարելի է գնալ, բայց վառ յուսով սպասում էի ազատութեան, տանջանքով լի յուսով համբերում էի: Աւազակապետն էլ կարծես մոռացել էր ինձ: Այդ մենակ ժամերին ինչպէս ընդունակ էի սիրելու, ինչպէս սիրտս մնունդ էր ուզում: Այն, սէրը սրտի մնունդն է, որը երբ չէ կարողանում ճաշակել սիրտն, ուժատապ ընկնում է, բայց կերակրում փշերով, փնքն էլ խոպան դառնում: Իմ կեանքն առանց սիրոյ միանգամից կ'կտրէր, ամբողջ աշխարհում մենակ էի (զգում եմ, որ պատճառը մասամբ ես եմ եղել), բայց չէի ուզում, որ մենակութիւնս կատարեալ

լինի. մի ընկեր, միայն մի ընկեր էի որոնում, մի անձնըէր, համազգեց բարեկամ, որ ես նրանով ապրէի, իսկ նա ինձնով: Միթէ չէի գտնում.—գտնում էի, բայց իմ անհանդիստ. հոգին կանգ առնել չէր ուզում մի կէտի վրայ, չ'կար մէկը, որ կարողանար սանձել նրան. նա կ'սանձէր այն դէպքում, եթէ տանջէր ընդմիշտ. բայց ես թէս շատ եմ տանջւել, սակայն և այնպէս տեսական չէ եղել, շուտով յագուրդ եմ ստացել սիրուց: Չեմ կարող ասել, որ վերջ՝ ի վերջոյ երես կ'զարձնէի այն կնոջից, որն արձագանդ չէր տալ իմ զգացմունքին. ընդհակառակն՝ թւում է թէ ես կ'մաշէի, կ'թուլանայի և մի օր վերջ կ'տայի կեանքիս: Ես թողնող եմ եղել միայն այն դէպքում, երբ ինձ սիրել են (կեանքը բացառութիւն է արել միայն մի անգամ, բայց դրա մասին յետոյ): Ինձ պէս անխոհեմ անձնաւորութիւն չեմ ճանաչում: «Թօն-Ժուան!» կ'ասեն ինձ շատերը, թող, չեմ ասում, իրաւունք ունեն, թէ ոչ:

Բանտումս մաշւում էի տաղտուկ, նոյնօրինակ մըտքերով: Մի այդպիսի օր կանգնած՝ դիտում էի ծովը և կղզու վրայի սպիտակ տունը: Մօտս շորի խշշոց լսւեց, ես դարձայ և, պէտք է ասել, որ վախեցայ, տեսնելով մօտս մի դժգոյն, հիւանդոտ դէմք, որ թոյլ կերպով ժպտում էր: Ճւարել էի, չ'գիտէի ինչ անեմ, ինչպէս վարւեմ, առաջ գնամ, թէ յետ, նստեմ, թէ կանգնած վարում, խօսեմ, թէ լոեմ: Գլուխս անգիտակցաբար ցած մնամ, խօսեմ, թէ լոեմ: Գլուխս անգիտակցաբար ցած գցեցի և աշքիս տակով դիտել սկսեցի նրան. նա խռարհեցրել էր կապոյտ նախշուն աշերը, որոնք հէնց այդ ըոպէից ինձ գերեցին: Ինչպէս ժայռի մէջ վակւած աղբիւրը որոնելով մի անցք՝ վերջապէս գտնում և դուրս է վիժում, այնպէս էլ սիրոս պահանջ էր զգում, որ դուրս գայ իր մոլեգնութիւնից: Այդ յանկարծահաս ուր-

ւականն ինձ գրաւեց: Կարծես շատ-շատ անգամ էի տեսել այն զանգուրները կախւած բաց կրծքի վրայով, կարծես շատ-շատ անգամ էի տառապել այն վարդանման անմըմունչ շրթունքների ծարաւով, և այն ժպիտը հազար ու մի անգամ այրել էր ինձ, որի համար երեակայութիւնս աշխարհներ էր ոտնատակ տւել: Մի ըոպէ ինքնարզզացում եկաւ վրաս, յետ-յետ քաշւեցի. նա ինձ նայեց մի այնպիսի հայեացքով, որից սարսափեցի և խղճացի նրան: «Ի՞նչ է ուզում ինձնից», մի այսպիսի հանելուկ ծնւեց մտքում: Վեր կացաւ տեղից և սկսեց բանտիս միջով զլխակոր քայլել: Ես սիրտ առայ և հարցըրի նրանից.

«Ո՞վ ես: Դու գուցէ կարող ես իմանալ, ես ո՞րտեղ եմ, արգեօք փրկութեան յոյս չ'կայ, ցոյց տուր ինձ մի ճանապարհ... նախ ասա ինձ. ո՞վ ես, երկրից ես, թէ երկնքից, ոգի ես, թէ մահկանացու, հրեշտակ ես, թէ մի թոյլ կին:»

—Գո՞ն ես վիճակիցդ, հարցըրեց իմ երազային հերոսուհին զլխակոր, փոխանակ հարցերիս պատասխանելու:

«Բանտարկեալը կարո՞ղ է գոն լինել իր կեանքից:»

—2Է որ ինքդ ես կամեցել անդորրութիւն, մի այնպիսի կեանք ես երազել, որպիսին այժմ ես տեսնում:

«Ինչպէս... ես հրաշքներին չէի հաւատում, ուրեմն ինձ խարել են մարդիկ և իմ հասկացողութիւնը՝ պընդելով, թէ հրաշքը զոյութիւն չ'ունի. այս հրաշք չէ. ո՞րտեղից կարող ես իմանալ դու իմ զաղտնիքը, եթէ ոգի չես կամ դրա նման մի բան:»

—Դու չես ուզում այստեղ մնալ:

«Ո՞չ,» պատասխանեցի ես՝ ընդունելով նրանից մի այնպիսի հայեացք, որից երեսս դարձրի: Նրա մէջ բար-

կութիւն կար արդեօք, թէ վիշտ, թէ հեզնութիւն, թէ զգւանք, չ'հասկացայ, միայն խիստ էր:

Երբ երեսս դարձրի, աղջիկն այլ ևս չ'կար: Մի ազդու ճնշում տիրեց ինձ, և ես ընկնելով գետնին՝ հեկեկացի: «Երանի թէ նա լսէր իմ հեկեկոցն», անց էր կենում մտքովս...

Միւս օրն առաւօտեան երբ զարթնեցի, կոյսը նրստած էր զլխավերես մի քարի վրայ ձեռը ծնոտին: Մնացի շւարած, ապուշ կտրած: «Ինչու է եկել», հարցրի ինքս ինձ, և նրա վրայ մի հայեացք զցելով նստեցի քարի վրայ: Նա չէր խօսում, իսկ ես նրա խօսքին էի սպասում: Վերջապէս հարցրի. «Ո՞վ է թաղւած այս քարի տակ, և ով է զրել այս խօսքերն»: Այս ես ասացի կիսավըստահ կերպով, հետզհետէ ձայնս խեղելով և դողացընելով: Նա ժպտաց, որից ես մի տեսակ վախեցայ, և սկսեց պատմել հետեւալը.

«Երկինքն ստեղծում է վշտեր. և ով է աւելի յարմար նրանց ժառանգելու, որի հոգին է ընդունակ նրանց իր մէջ ընդունելու ամբողջութեամբ, բացի մարդկայինից: Նա վշտերով ծնւում է, նրանցով ապրում, նրանցով էլ մեռնում: Կեանք ասւածը հէնց այդ դառնութիւնների շարքն է, որը ոմանք տանում են ուրախութեամբ, որի մէջ գտնում են նոյն իսկ վայելչութիւն, իսկ ոմանք թուլութեամբ փախչել են կամենում նրանից: Բայց շատ անգամ կեանքն իր խստութեամբ բռնանում է իրան սիրողի վրայ, ՚ի շարն է գործածում այդ սէրը և իր պաշտողին տապալում: Նա շատ քմահան է, այդ պատճառով էլ մարդկային նուրբ զգացմունքների հետ խաղալ գիտէ անզգուշաբար: Նա այդպէս վարւեց այս քարի տակ հանդշողի հետ: Որքան էր սիրում նա կեանքը և

ինչպէս ծաղրւեց նրանից. այդպէս է ծաղրւում աղջիկը, երբ իր սիրածից դառն կատակներ է միայն լսում:

Նա ծնւեց մտքի համար: Ամեն մի չնչին բան նրա մէջ հարցեր էր զարթեցնում: Նա ամեն բան իմանալ, ճանաչել էր ցանկանում: 2էր բաւականանում երեակայականով, հաւատ չ'ունէր, այլ ցանկանում էր ամեն ինչ իր աշքով տեսնել: Ահա հէնց այդ ամենազիտութեան փափագն էր, որ նրան ամուր շղթայել էր կեանքի հետ, այդ ծարաւն էր, որ նրան տանջում էր անողորմ կերպով: Նա ընկել էր մտքի խորխորատի մէջ, ոչ կարողանում էր դուրս գալ և ոչ էլ ցանկանում էր, մինչև չքննէ, թէ ինչեր են թագնւած այդ մթին վհի մէջ, թէ ինչ է կեանքն, ուր է տանում նա մարդուն: Առանց այն էլ նա ծնւել էր հիւանդու, թոյլ, մելամաղձու, վառ երեակայութեամբ: Նա տարօրինակ էր մանաւանդ նրանով, որ աշխատում էր իր երեակայածն իրականացնել. մի միջոց էր որոնում հասնելու անհասին: Նրա գունատ դէմքին ժէր երեալ երբէք: Քաշում էր անտառի խորքը, նստում մի ստէրախիտ ծառի տակ լոիկ, մենակ և միտքը տանում հեռուն, կամ մի գերեզմանաքարի դիմաց և վըշտանում: Ոչ ոքի մօտ չէր բանում իր սիրու, մենակ էր ծնւել, մենակ էր ապրում: Բաւական էր մի անգամ նայել նրա դէմքին, և ամենազւարթ մարդն անգամ կ'փոխէր իր տրամադրութիւնը: Նրան ոչ մի բանի մէջ նկատել չէր կարելի, իսկոյն հրաշագեղ դէմքը կ'պատէր մուայլով, և կ'սկսէր հեկեկալ հեռու փախչելով: Քանի-քանի անգամ նրան տեսել եմ այդ դրութեան մէջ թագնւելիս մահարձանների մօտ: Բոլորը կարծում էին, որ նրանից կամ շատ նշանաւոր մարդ դուրս կ'գայ, կամ ոչինչ: Մի անգամ նրանից հարցրի.

«Ի՞նչն է քեզ տանջում» նա պատասխանեց.

— «Ոչ ոք չէ ուզում իր գաղտնիքը յայտնել, ինձ ինչու էք ստիպում, որ բոլորը պատմեմ, ինչ որ իմ դառնացող հոգին է զգում և գուցէ ոչ մէկը դեռ չէ զգացել: Գիտէք, թէ ինչեր կան թագնւած ովկիանոսի խորքում: Միթէ կարելի է այդ բոլորը դնել մարդկանց առաջին: Ես տանջում եմ կեանքի ծարաւով—ահա հետաքըրութեանդ գոհացումը: Գիտեմ, որ դէպի կեանքն ունեցած մէրս մի օր ինձ գերեզման է գլորելու բոլոր յոյսերովս, բաղձանքներովս, դեռ չ'հասկացած՝ թէ ինչ է կեանքը, ինչու ենք կուտում, կամ ինչու պէտք է մի չնչին ակընթարթ վերջ տայ այդ բոլորին. գոնէ կ'ցանկայի, որ ինքս էլ ապրէի մեռնելուց յետոյ... 2եմ հաւատում, որ կայ մի աշխարհ, ուր մեռնելուց յետոյ յաւիտենական կեանքով բոլորն են ապրում անխտիք և զգալով. այլ հաւատում եմ, որ կայ մի կայան, որի մէջ են ընկնում մարդիկ մեռնելուց յետոյ, նրանցից ոմանք հէնց ընկնելուց մեռնում են վերջնականապէս, ոմանք քիչ ապրում են, ոմանք երկար և ոմանք աւելի երկար, բայց ոչ մեռնողն է զգում, որ մեռնում է, ոչ ապրողն է զգում, որ ապրում է: Այդ աշխարհն է հէնց այն աշխարհն, ուր ապրում ենք մեռնելուց առաջ. այդ անդրգերեզմանեան կեանքը գտնում է մարդկային յիշողութեան կամ պատմութեան մէջ: Այդ աշխարհն է այն դրախտը կամ դժոխքը, որ ստեղծել են կենսասէրներն իրանց երևակայութեան մէջ: Ով կարողացաւ կանգնել մի արձան, նա կարող է գոնէ ժամանակաւորապէս ժառանգել հանդերձեալ կեանքը: Յաւիտենականապէս ժառանգողներ ևս գուցէ գտնւեն, բայց այնքան քիչ, որ կարելի է բացառութիւն անգամ չ'համարել:

«Օ՛, ինչ յոյսեր ունեմ ես. եթէ կեանքը ծաղըի չը մատնեց իմ պատանեկան սէրն, անշուշտ յաջող պատասխաններ պիտի տամ վերջին դատաստանին, և ինձ համար նպաստաւոր վճիռ պիտի կայանայ այդ դատսատանից յետոյ—այդ պատասխանները կ'լինեն իմ գործերը, մարդկային՝ կամ աւելի ճիշտը—նոր սերնդի դատաստանը կ'լինի հանդերձեալ կեանքի վերջին դատաստանը, և նրա որոշումը կ'լինի իմ դրախտային կեանքի տիրանալը: Ճատ վատ բան է իր վրայ մեծ յոյսեր դնելը, բայց ինչ արած, քանի որ անկարող եմ մտքիցս հանել այս տարօրինակ համոզմունքը:

«Ի՞նչն է աւելի անփառք, քան մահը, և ինչն է աւելի զարմանալի, քան գոյութեան կուրք: Երբ տեսնում եմ, որ բոլոր արարածներն իրանց գոյութիւնը պահպանելու յետեկից են ընկած միայն, ամեն կողմ գոյութեան կուրք է նկատում, արատ, անպատութիւն, փափուկ սըրտերին հարւած տալ, վիրաւորել, և ապա տեսնում եմ, որ այդ ամենն ստոր մահով է միայն վերջանում, այն ժամանակ ինձ հարց եմ տալիս. «Ինչու մարդիկ անհաշտ են ապրում»: Մէջս կրում եմ մի յանդուփն մտադրութիւն.— Վերջ տալ մի կերպ այդ բոլորին և ստեղծել միանգամայն նորագոյն կեանք: Թո՞ղ շատերը համարեն այս պատանեկան ցնորդներ, հիւանդ ուղեղի անտեղի շարժում. դրանց շեմ կարող պատասխանել, մտքերիս հետևանքը մի օր կ'ծառայէ իրըև պատասխան»:

Կեանքի խաղերից մէկն էլ սէրն է: Միրտն ու հոգին տանջում են ամեն մի զրկանքից, բայց ամենից շատ՝ սիրուց: Որքան թշւառ է մարդ, երբ կասկածը մտնում է սիրտը և միանալով սիրոյ հետ՝ միասին կեղեքում են նըրան: Մէր և կասկած... այս երկուսն անբաժան ընկերներ

Ենք: Իսկ երբ կասկածը դառնում է համոզմունք, այն ժամանակ թունաւորած կեանքն այլ ևս անպէտք է դառնում, իսկ սէրը՝ հիւանդոտ. ինչի՞ն է պէտք հիւանդոտ սէրը, չէ որ նա մի օր կ'գորէ քեզ գերեզման—կամ ինքնակամ վերջ կ'տաս կեանքիդ, կամ ապրելուց յոդնած՝ կ'ընկնես մահճի մէջ և կ'փշես վերջին շունչդ: Բայց ինչ որ քեզնից չէ կախւած, չես կարող արգելք լինել, երբ նաքո մէջ կ'մտնէ: Ահա հայեացքդ ընկաւ մի դէմքի վրայ, գրաւեցիր, գերւեցիր և սիլեցիր. այդտեղից էլ սկսում է շղթայումդ. ընկած ես կապանքների մէջ, որքան էլ կամենաս դուրս գալ այդ շրջանից, չես կարող,—առաջ ցատկիր, շղթան ես առաջ կ'գայ, յետ գնա, կրկին շղթայի կ'հանդիպես: Եղիք ամենիմաստունն, ամենագէտը, չես կարող մի ելք գտնել ազատւելու սիրոյ ճանկերից: Օր ու գիշեր վառվում է քո մէջ այն պատկերը, որն ընտրել ես քեզ համար վիրը մի կապ իդէալիդ հետ. թէկուզ նրա հոգին լինի մի հրէշի հոգի, թէկուզ նրան ատէ ամբողջ տիեզերքը, բայց դու սիրում ես և շատ բան զոհում նըրան: Թողի նա բոլորովին քեզ չ'հասկանայ, թողի նա անմըսութեամբ ծաղրելով՝ սպանէ քո կեանքը, չես կարող չ'համաձայնւել, ինքդ ես նրան անձնատուր եղել, ինքդ ես քեզ դժբախտութեան մօտացըել:

Ի՞նչ է մնում այդ բոլորից. ահա, մի քար—ասաց
նա՝ ցոյց տալով առաջս կանգնած մահարձանը—մի փո-
շու կոյտ. բոլոր երազները դուրս են թոշում հոգու հետ
միասին և տեղը թողնում ապականութիւն, որպիսին այս
լուռ քարի տակ է։ Նա սիրեց կապածով, երազներով,
բայց մերժեց։ Այդ մերժումն էր, որ կործանեց առանց
այն էլ քայլքայտած մարմինը, և թուլացած կայծը հան-
գաւ կենսասէրի կըծքում։

Աղջիկը վերջացընեց իր խօսքն: Ընկել էի մտատանջութեան մէջ: «Միթէ ինքս չեմ եղել մի այդպիսի կեանքի հանգցնողը, միթէ ես մի հրէշ չեմ»: Ճնշումը տիրեց ինձ: Երբ ուշքի եկայ, նայեցի աղջկայ նստած տեղին, և դատարկ էր նա: Այդ ըոպէից գերեզմանն ինձ համար սրբացաւ, իսկ մէջս նոր ցաւ ստեղծւեց: Բոլոր ժամանակն անհանգիստ էի, և մտածում էի այնքան երկար, որ մըտքերս իրար էին խառնուում, հոգուս տիրում էր լուռ հանգիստ, կարծես թմրում, հանգչում էի և մի նիբռն խորհըրդաւոր կերպով մտնում էր մէջս. ինձ ոչինչ չէր տանջում այլ ևս, ոչինչ չէր սպառնում: Բնութիւնն այդպէս ժամերին չնորհ անելով՝ ինքն ևս յարմարում էր հետս. ոչ մի արարած ինձ չէր խանգարում, լուռմ էր ամեն ինչ, միայն խռում էր սրտիս թոյլ բաբախումը:

Միւս առաւօտ կոյսին տեսայ նոյն գրութեան մէջ,
որպէս նախկին օրը. միայն այլ ևս այնքան մռայլ չէր,
և դեղնութիւնը մասամբ անցել էր դէմքից: Ամաշելով՝
վեր կացայ տեղիցս և սեղմեցի նրա ձեռը. նա կարմրեց
իմ այդ վարմունքից, դողաց թեթև կերպով և ցած զցեց
հայեացքը: Մի քանի ըոպէ կրկին լուութիւն տիրեց:
«Ի՞նչ է անունդ», յանկարծ հարցը նրանից՝ յետոյ
որաւառվ տւած հարզիս համար:

Ելեն, պատասխանեց նա՝ աւելացնելով. լսիր ինձ:
Լսում էի:
«Գիտեմ, որ եղել ես մի աւեր քաղաքում, սկսեց նա,
մտել երեք տուն։ Առաջին տնից դուրս գալուց չէմքի
վրայ կարգացել ես մի լիշտակութիւն այդ տան մէջ ե-
ղած զինքերի մասին։ Այժմ՝ կ'պատմեմ, թէ որտեղից են
նրանք, և ով էր նրանց տէրը։ Տեսնում ես այն կանաչա-
զարդ լեռները, որոնց գագաթները փաթաթւած են

դժգոյն ամպերով, և խորխորատներում խաւարն է թագաւորում։ Այստեղ, այն երկնահաս սարերի վեշերին ապրում են հովիւներ, բնութեան հարազատ զաւակները։ Մինչև այժմ էլ կարելի է լսել, թէ ինչպէս են յաղթական երգեր ուղղում Հսկայորդուն՝ այն քաջին, ինչպէս սրբացած է նրա անունը հովիւ երգերում։

Այդ ազատ ժողովրդի մէջ ապրում էր մի հսկայ հովիւ, բոլորից յարգւած, սիրւած, և բոլորին սիրում, յարգում էր նա։ Այդ հսկայի որդին է ահա այն ժայռ քարի տակ թաղւած առիւծասիրտ քաջը։ Երկնքից օրհնւած էր դրանց ընտանիքն, ամեն մի բարեբախտութիւն նրա համար էր ստեղծւած։ Բնութիւնը հսկայորդու անունը կապել էր իրանց հարեանի աղջկայ անւան հետ։ դեռ օրօրցում ծնողները նշանել էին երկուսին։ Մանուկները մեծացան միասին՝ միմիանց եղբայր ու քոյը ճանաչելով, միմիանց համար ապրելով։ Երբ լեռնային արել մտնում էր՝ սարի ետևում թագնուում և այնտեղից հանգիստ ուղարկում մարդկանց համար, երբ աստղերը կապոյտ երկնակամարի վրայ դողդողում էին, լուսինը ցոյց էր տալիս իր ծիրանի շողերը հեռու սարի ծայրից, և գիշերային հովը կամաց զարկում հովւական վրաններին, երկու մանուկներն իրար գրկած՝ հրեշտակների նման ննջում էին խաղաղ հարկի տակ, ծնողները հիանում, սքանչանում էին Աստուծոյ գթութեամբ և ծունկ խոնարհած փառաբանութիւն վերառաքում Ամենաարածրեալին և խնդրում, որ նրանց սրտերի կապն աւելի ամրացնէ և նրանցից չ'խնայէ իր չնորհն։ Այդպէս ասլրում էին երջանիկ, անվիշտ։

Ճուտով մեռաւ աղջկայ հայրն, իսկ մօր մասին ոչինչ չ'գիտէր զուստրը, որովհետեւ նա մեռել էր իրան ծնած

օրն։ Աղջիկը մնաց որբ, բայց ոչ անտէր։ Հսկայորդու հայրը չէր զանազանում նրան իր որդուց։ Անցաւ ժամանակը, երկու սրտերի մէջ ստեղծւեց այն կիրքը, որն սկզբից նախասահմանւած է մարդու համար։ Նրանք յաւիտեան մի տեղ ապրելու երդում արին։ Բայց մի օր անակրնկալ կերպով աղջիկն անյայտացաւ լեռներից։ Դաւաճանել էր արդեօք իր Հսկայորդուն... բայց ինչպէս կարելի էր. մի քարափից ցած էր գլորել իրան, թէ մի խարեբայի գըրկում էր գտնւում... Ոչ, չէր կարող այդ լինել, նա անըզգամ չէր, նա սիրտ վաճառող չէր, նա սէր ու սրբութիւն արհամարհող չէր։ Նրան յափշտակել էին շար ձեռներ։ Հսկայորդին ընկաւ սարէսար, ձեռք վեր առաւ իր գլխից։ «Գտնել անպաշտպանին կամ կենդանի, միասին ապրել, միասին չնչել, կամ մեռած և վրէժխնդիր լինել կամ մեռնել այն հարւածից, որից մեռել է և նա»։ այսպէս էր մտածում։

Տեսնում ես բարձր լեռան կատարի վրայ կանգնած հպարտ ամրոցը, որ խոժուագէմ, սարսափելի հայեացքով մեզ է նայում։ Երբ Հսկայորդին նկատեց այդ ամրոցն, ամեն բան պարզւեց նրա համար։ Այստեղ էր փնտռածը։ Զրահաւորւեց և կատաղի զազանի պէս արշաւեց դէպ ամրոցը, որ պատուտէ իր ճանկերով նրա ամուր պարիսպները և դուրս քաշէ իր սիրելուն։ Վագեց, հասաւ։ Բայց ամուր էին ամրոցի պատերը, և թոյլ նրա ձեռները։ Խրոխտ առիւծը խոնարհւեց։ «Խղճա ինձ, ով տէր, ասաց նա ամրոցի իշխանին, տուր իմ սիրելուն, նա չէ կարող մնալ քո ամրոցում, նրա համար չեն պալատն ու իր փարթամութիւնը, նա միայն լեռնային պարզ վրանի տակ կարող է երջանիկ լինել։» Վսեմ առիւծի խոնարհ աղաշանքին մի քըթից եկաւ պատասխան։

ՔՐԵՉՈՅ ԱԿԱԿՈՅ

— Լսում եմ, լսում, ասաց իշխանը պատուհանից, պարզաբնտ հովիւ, ճիշտ որ քո սիրելու համար չեն ըստեղծւած պալատն ու իր ճոխութիւնը, փափկութիւնը. ճիշտ որ նա սովոր է քարերի վրայ քնել և ոչ թաւշի մէջ: Բայց նա իմ կինը պիտի լինի կամայ, թէ ակամայ: Նրան երբէք քեզ չեմ տալ կենդանի. դու սիրում ես նրան, ես էլ եմ սիրում. դու ուզում ես բախտաւոր լինել, ես էլ եմ կամենում: Նա իմ կինը պիտի լինի. իսկ եթէ անհնար եղաւ այդ, այն ժամանակ դու կ'ստանաս միայն նրա դին. այն ժամանակ որքան կ'ուզես, եղիր երջանիկ:

«Բայց ես կ'պատռեմ այս ամուր պարիսպները, հիմնայատակ կ'կործանեմ քո երկաթեայ դռները և վայր բերելով քեզ այդտեղից՝ կ'յօշոտեմ և երկնային արծիւներին կերակուր կ'դարձնեմ մարմինդ: Քո ամբողջ իշխանութիւնը փոշի կ'դարձնեմ, և գոյութիւնդ իսպառ կ'չնշւի, կ'վերանայ աշխարհի երեսից:»

— Հա, հա... հա... լսեց վերեից, և Հսկայորդին կատաղած ընկաւ ամեն կողմ վնտոելով մի մուտք, բայց ամուր էին ամրոցի դռները, և թոյլ նրա բազուկները...

Ահա երեաց պատռհանի առջե մի դեղնած, մաշւած դէմք, և Հսկայորդին քիչ մնաց, որ խելագարւէր: Ամրոցի տէրը բռնած աղջկայ արձակ մազերից՝ ցոյց էր տալիս հովվին և սուրը դողացնում:

«Մեռիր», յանկարծ գոչեց Հսկայորդին, և զնտակը կպաւ հակառակորդի կրծքին: Բայց գազանն աւելի է կատաղում, երբ զգում է իր օրհասը, և նրա հարւածն ամենանդութն է լինում: Տապալող գայլը նախ և առաջ իր գրկի ոչխարն է պատռոտում: Սուրը շողաց, և հովուհու դիակն ընկաւ ցած... Ամեն բան վերջացաւ

Հսկայորդու համար... նա այլ ևս այս աշխարհից չէր, նրան չէր կարող հրապուրել այլ ևս դժնդակ կեանքը: Մեռմ էր մեռնել: Մեռնել... առանց վրէժխնդիր լինելու... բայց ումնից, միթէ բաւական չէր, միթէ աննշան էր իր առած վրէժը... բայց ո՛չ, պէտք էր ընկնել աշխարհից աշխարհ, վնտուել ամեն մի անկիւնում այն զէնքը, որով սպանւեց իր կեանքի պահապանը, իր սիրտն, իր հոգին, և խլել. միայն այդպիսով կարող էր հանգիստ, զոնէ քիչ հանգիստ գտնել: Ծիծաղելի, անմիտ ցանկութիւն է, չէ՞ բայց աշխարհում այդպիսի կրքեր էլ են լինում, ոչինչ չ'կայ առանց տարօրինակ կողմերի, կեանքը տարօրինակ, զարմանալի դէպքերի մի համագումար է. և ո՞վ է կարող տաել, թէ այդ ինչո՞ւ է այդպէս. այն ժամանակ ուղղակի պիտի հարցնել, թէ ինչո՞ւ ծնւեցինք: Ի՞նչ, միթէ՞ նա կարող էր վերջ տալ զինագործութեան. ընական է՞ ո՛չ, բայց հանգիստն այդպէս էր պահանջում: Եւ նա ընկաւ ամեն կողմ, կուեց, վտանգների ենթարկւեց, խլեց իր տեսած զէնքերը, և ժողովեց մի տեղ: Այդպիսով քիչ նստում էր նրա կատաղութիւնը: Վերջապէս մի օր նա ընկաւ մի այդպիսի կուտում, և կոտրւած, անհանգիստ սիրտը միանգամայն դադարեց բարախելուց:»

Ելենը վերջացրաւ իր պատմութիւնն: Սկսեցի դիտել այն գարշելի ամրոցը, որից երբեմն ազատութիւն էի սպասում: Խսկ այդ ժամանակ Ելենն անյայտացաւ՝ ամեն բան ինձ համար հանելուկ թողնելով:

Հետեւալ օրը նրան բանտիս մէջ դտնելն ինձ այնքան էլ չ'գարմացըց: Նա մօտեցաւ և առաւ ձեռս:

«Դու երեկի գարմանում ես, ասաց նա, թէ ո՞վ եմ ես, ո՞րտեղից եմ գալիս, ինչո՞ւ եմ քեզ այսպիսի անհետաքըրքիր բաներ պատմում: Բայց լսիր ինձ, շատ շուտով այս

բոլորը կ'իմանաս: Լսիր մի ուրիշ պատմութիւն.

Երկրորդ տնից գուրս գալուց շէմքի վրայ կարդացել ես, որ այնտեղ թաղւածը մի տանջւող է: Ահա թէ ով էր նա: Մի խեղճ, միայնակ հովիւ, խիստ երկնքի տակ մեծացած, ծնւած օրից որբ մնացած: Բայց նրան ոչ ոք չէր ատում. նա հեզահամբոյը էր և հիւրասէր: Վճիտ աղբւրը, լեռնային մարմանդը, սիզաւէտ սարերի զեփիւռը նրա սիրտը փափկացրել էին, և նա մոռացել էր իր ճակատազը խիստ հարւածները, մխիթարւում էր իր հօտով և իրան երջանիկ զգում, ոչ մի պակասութիւն չէր գտնում իր համար, ոչնչի չէր սպասում: Սակայն կան բաներ, որոնք սպասելի են մինչև նոյն իսկ գերեզման. այդ չգիտէր հովիւն: Այդպիսի բաներն աւելի ժառանգական են. սկսել են մեր նախահայր և նախամայր Աղամից և եւայից, և ժառանգաբար հասել են մեզ: Դրանցից է և սէրը: Նա ժառանգական է և անվերջ. սէրը մի աւանդ է բնութիւնից յանձնարարւած, մի սըբազան աւանդ, որին երկիրածութեամբ պիտի մօտենալ (թէկ կան խելագարներ, որոնք սէրը համարում են մարդկային ամենաստոր կիրքը!), մի անդունդ, որով անփորձ անցնելը շատ քշերին է յաջողուում: Լերան գաւակը չէր կարող զերծ մնալ նրանից, թէկ բոլորովին չէր սպասում:

Մի օր սարի լանջերին նա արածացնում էր հօտը, երբ ձորի խորքից նրա ականջին հասան կնոջ երգի ձայներ: Առաջին անգամն էր լսում կնոջ երգ: Հտապելով ձորըն՝ սկսեց մի անկիւնից դիտել երգչուհուն, որ կուժը զըրած աղբիւրի ծորակի տակ՝ նստել էր քարին և գլուխը յենած բաց բազկի վրայ՝ երգում էր: Հովի սիրտը կրակ մտաւ, և թռաւ դէպի աղբիւրն: «Ամօթ չէ, զարձաւ աղջիկը հովին, որ մօտենում ես մի աղջկայ, երբ նա մե-

նակ է»: Ասաց, բայց զղջաց՝ տեսնելով հովի բարի և ցոլցլացող աշերն: Աղջիկը գուշակեց նրա հայեացքներից, որ գրաւած է իրանով և ժպտալով փախաւ իսկոյն՝ թողնելով հովին կախարդւած իր յետեկից նայելիս: Ամեն օր հովիւը գալիս, նստում էր աղբիւրի գլխին, ոչխարներն արածացնում և լսում աղջկայ երգը: Վերջապէս աղջիկն էլ թողեց իր անտարերութիւնը, և սիրեցին միմիանց: Լեռների սէրը ոչ մի սիրուն նման չէ լինում. այնտեղ ծերպերը, ձորերը, զեփիւռն ու գիշերը սէր են ներշնչում: Բոլորն իմանում էին, որ հովիւն ու հովւուհին միմիանց նւիրւած են, և ասում էին. «Թողն իրարով ապրեն, տմարդութիւն է երկու սիրտ միմիանցից բաժանելն»: Այդպէս մեծահոգի է լեռնցին, նա նախանձ չ'ունի:

Սակայն սիրելու իրաւունքը միայն մէկին չէ տւած. իւրաքանչիւրն իր գգացմունքի տէրն է, ազատ իշխում է իր հոգու վրան: Ի՞նչ արած, թէ հովիւը սիրում էր հովւուհին: գտնեց և մի ուրիշը, որ նոյնպէս սիրեց նրան: Մէկին երկուսը սիրել կարող են, բայց մէկը երկուսին սիրել չէ կարող: Ահա թէ ինչու հովւուհին չ'սիրեց իրանով տանջւողին: Քանի—քանի անգամ մտածել էր վերջինս սպանել հովին, որ գուցէ լերան աղջկը մոռանալով նրա յիշատակն, ընդունէ իր սէրը, բայց ափսոսացել էր: Քանի—քանի անգամ տեսնելով հովին՝ բորբոքւել էր իր մէջ, և սիրտը լցւել էր փշերով: Բայց պէտք էր մի բան անել, պէտք էր խլել աղջկան հովի գրկից. և ահա վըճուեց փախցնել:

Մի օր աղջիկը նստած ժայռի կատարին՝ դիտում էր կապոյտ քողի նման ձգւած գետը, որի մէջ խաղում էր արևը, և սքանչանում: Յանկարծ նկատեց, որ իրան ինչ որ մարդիկ են մօտենում, և ճանաշեց իրանից մեր-

Ժըւածին։ Հասկացաւ, որ փախցնելու է եկել, և շւարած մնաց. ի՞նչ անել, ինչպէս ազատւել, այլ ևս փախչելն անհընարին է, մինչև վերջին շունչն ուրիշի բաժին պիտի լինի, էլ չի տեսնիլ իր սրտի թագաւորին... Նա շփոթւած յանկարծ ցած գլորեց իրան ահազին բարձրութիւնից անդունդի մէջ...

Ի՞նչ արած, այդպէս է կեանքն։ Անմեղ շարադրծը տեսնելով՝ որ այլ ևս չ'կայ իր պաշտելի էակը, չ'կայ նա, որի համար ապրում էր, ինքն ևս հետեւց նրան։

Իսկ հովիւը խելազարւեց, ընկաւ սարէսար, քաշեց ամեն մի տառապանք՝ թողնւած բոլորից անխնամ։ Մի անգամ նրա դին գտանք սարի ստորոտում և յանձնեցինք հողին։

Վերջացրեց Ելենն իր պատմութիւնը և խորը նայեց դէմքիս. ես ցած գցեցի աշերս։

«Ուզմում ես գնալ այստեղից, ես քեզ ցոյց կտամ ճանապարհն, ասաց նա. ոչ, դու պէտք է լսես վերջին պատմութիւնս և յետոյ գնաս։»

— Ես բոլորովին ցանկութիւն չ'ունեմ գնալու, ասացի նրան։

«Աւելի լաւ, լսիր վերջին պատմութիւնս, շատ եմ ձանձրացրել, քիչ էլ համբերիր։»

Նա ինձ գերել էր իր ժպիտներով. ես իսկապէս չէի ուզում նրանից հեռանալ այլ ես։

«Վերջին մտած տան չէմքին կարդացել ես «Կեանք», սկսեց նա, և այդ տան մէջ տեսել ես մի արձան։ Ի՞նչ բան է կեռանքը, եթէ ոչ գործերի, արարքների մի շարք։ Այն արձանի տէրը կարող է պարծենալ, որ կեանք է ունեցել, ապրել է, որովհետև նրա ամբողջ կեանքը գործ է, նրա միտքը կապւած է դործունէութեան հետ. ահա

թէ ինչու է արժանացել արձանի իր քըոչ կողմից, որն ապրում է նրա հետ միասին կղզու վրայի սպիտակ տան մէջ։

Մի անգամ, երբ քոյր ու եղբայր մօտիկ աշխարհն էին դնացել, քոյրը նկատեց այնտեղ մի երիտասարդի, որ մենակ մտամոլոր շրջում էր զաշտերում։ Աղջիկը տակաւին սէր չէր զգացած, և այդեղ զգաց։ Գունատւած, տանջւող երիտասարդը նրան կաշկանդեց. և երբ եղբայր ու քոյր տուն վերադարձան, վերջինս չ'կարողացաւ մոռանալ վշտակիր երիտասարդին և սկսեց մտածել նրա մասին։ Եղբայրը նկատեց, որ քըոչ հետ մի ինչ որ փոփոխութիւն է կատարւել, հարցրեց պատճառը։ Քոյրը բացաւ սիրտը եղբօր առաջ. այն ժամանակ նա խոստացաւ յայտնել երիտասարդին իր քըոչ սէրն։ Այդ դիտաւորութեամբ գընաց այն երկիրն, ուր քըոչ սիրածն էր, գտաւ նրան աննախանձելի դրութեան մէջ, և բերելով իր հետ՝ մի բարձր սարի գագաթի վրայ թողեց։ Քոյրն ամեն օր այցելում էր երիտասարդին առժամանակ ծածուկ, յետոյ յայտնապէս և նրան սիրային միջնագէպեր հաղորդում, որպէսզի զբաղեցնէ նրան, հաշտեցնէ, սովորացնէ նոր դրութեան և փափկացնէ սիրտն։ Այլ ես անհնար է սպասել, նա հարցընում է երիտասարդին. «Միրում ես ինձ, թէ ոչ...»

— Միրում եմ, ասացի գողալով և մի ներքին բաւականութիւն, քաղցրութիւն զգալով։

Նա թեքելով գլուխը դէպի կուրծքս՝ ձեռը մեջքիս դրած նայում էր հեռուն և ամբողջ մարմնով զողում։ Մի հանդիսաւոր խաղաղութեամբ մեր շրթունքները հըպւեցին իրար, և երկար ժամանակ մնացինք այդ դրութեան մէջ...

«Կ'ամուսնանաս հետս, այնպէս չէ, սիրելիս», շնչաց

նա՝ ամուր սեղմելով գլուխս իր բաց լանջին:

— Ամուսնանալ!... ի՞նչպէս... ամուսնանալ, քանի որ իմ կեանքի մասին չեմ կարող երաշխաւորել, ինքնամոռացութիւնից հիասթափւելով ասացի ես: — Ինչպէս ամուսնանալ, քանի որ Աշխէնի դերեզմանն իր անագորոյն հայեցքով յանդիմանում է ինձ, ծիծաղում վրաս, սպառնում անկումով:

«Ո՞վ է Աշխէնը», հարցը ելենն անհանգստանալով:

Ես պատմեցի իմ կեանքը: Երբ հասայ այն տեղին, թէ Աշխէնն իմ պատճառով մեռաւ, երեսը ծածկեց ու մրմնջաց. «մնաս բարով», և լալով փախաւ մօտից: Մնացի ապշած, մենակ, կասկածով լցւած: Ինքս ինձանից դժոն էի: «Ինչո՞ւ այսքան խիստ վարւել թոյլ սրտերի հետ, ինչո՞ւ համբոյը լեղի դարձնել. յանդիմանում էի ինքըս ինձ, ի՞նչ եմ ես — մի հրէշ, մի ողորմելի, մի թշւառ արարած, որ ոչ միայն ինքս չ'գիտեմ ապրել, այլ և ուրիշներին խանդարում եմ, որ ոչ միայն ոչ ոքի չեմ ճանաչում, այլ և ինքս ինձ...» Ընկայ շոր քարի վրայ, և արցունքի կաթիլները վերջապէս դուրս ցայտեցին իմ վաղուց ցամաքած աշերից... Երանի թէ այդ ինձ համար խրատ դառնար!...



Այս զէպքից յետոյ անցաւ մի քանի օր, բայց ելենը բոլորովին չ'երևաց: Ես այլ ևս ցանկութիւն չ'ունէի հեռանալու, այլ նրան տեսնել էի կամենում. կարծես թէ առանց նրան ապրելն անգամ կասկածելի էր թւում: Նրան սիրում էի և կ'սիրէի մինչև վերջին շունչս, բայց ա-

մուսնանալ! Երբէք, երբէք չէի ուզում յանձն առնել:

Ի՞նչ վատ է սպասողական դրութիւնը... Մի օր վերջապէս երևաց նրա եղբայրը: Նա իմ կարծեցեալ աւագակապետն էր: Իրար բարեցինք: Նա ժպտալով հարցը եց.

«Գոհ ես կեանքիցդ»:

— Գոհ եմ, ասացի՝ նոյնպէս ժպտալով և աւելացրի. — Ինչպէս է ելենն, ինչո՞ւ այլ ևս չէ երեսում:

«Գու չես ցանկանում նրա հետ ամուսնանալ»:

— Ո՞չ, անկարող եմ:

«Բայց նա կ'մեռնէ»:

— Ինչո՞ւ պիտի մեռնէ:

«Արդէն հիւանդ է»:

— ?!...

«Այո!»

— Գնանք, եթէ այդպէս է, ես ցանկանում եմ շուտով տեսնել նորան:

«Գնանք»:

Եւ սարից իջնելով՝ ուղերւեցինք դէպի ծովը: Ճանապարհին ինձ պաշարեցին զանազան աննպաստ մտքեր: Երևակայում էի, որ ելենը մահւան անկողնի մէջ ինձ օգնութիւն է կանչում, ես ցանկանում եմ նրան օգնել, բայց չեմ կարողանում... և նրան տեսնում եմ զագաղում այնպէս գեղեցիկ, բայց գունատ: Նա հետա խօսում է զագաղի միջից, օրհնում ինձ, ես արտասւում եմ... եայլն եայլն:

Նաւակն սպասում էր ծովի ափին, նստեցինք և դէպի կղզին լողացինք: Ահա այն տունն, ահա և ելենը, յիշաւի անկողնում պառկած է, և ծերուկ քահանան աղօթք է մրմնջում զլխավերեն... Աշերը մարած, դէմքը գունաթափ, նիհարացած, թոյլ, ձայնը տկար, հայեցքը խեղճ և զութ շարժող: Խիղճս յանկարծ բողոքեց իմ դէմ, ես

գարհուրեցի այդ տեսարանով և երդւեցի ամեն մի միջոցի դիմել ազատելու համար իմ գլորած արարածի կեանքը: Պատրաստ էի նոյն խակ ամուսնանալ նրա հետ: Նա նայեց վրաս, մօտեցայ և ձեռս նրա ձեռին տւի, որ կարծես թէ այրում էր կատարելապէս:

«Համբուրբենք», շնչաց նա թոյլ ձայնով: Ես չ'համարձակւեցի կատարել նրա խօսքը եղբօր ներկայութեամբ:

— «Լսիր նրան, ասաց եղբայրը: Ծունկ խոնարհելով առաջին՝ միանգամայն ինձ մոռացայ նրա թոյլ բազուկների մէջ:

«Սիրում ես ինձ», մըմնչաց նա: Փոխանակ հարցին պատասխանելու՝ ես խոստացայ նրան սիրել մինչև յաւիտեան, լիովին նրան պատկանել, նրա հետ ապրել:

Եղբայրն արտասւում էր լուռ բարեսիրտ ծերուկ քահանայի հետ, քոյրը հետևեց նրանց, և հիւանդոտ, յոդնած աշերից մի-մի կաթիլ մարզարիտների պէս դուրս ցայտելով՝ սկսեցին հոսել մաշւած դէմքի վրայով:

«Մի լար, քոյրիկ, ասաց եղբայրը, նա քեզ սիրում է, դուք երջանիկ կ'լինէք միասին (քոյրը թեթև ժպտաց): Տւէք ձեր ձեռներն»: Այս ասելով՝ նա վերցրեց իմ և նրա ձեռներն ու միացրեց, խակ քահանան պսակեց մեզ...

«Խօսիր, ելեն», ասաց եղբայրը. բայց նա ոշինչ չէր խօսում. միայն վերջին ահազամ ժպտաց դէմքիս, և այլ ևս չկար...

Բոլորս արտասւում էինք...

Յիշում եմ ինձ մի սենեակում շրջապատւած դեղերի շերով, ճերմակ շորերում պառկած անկողնու մէջ, գլխա-

վերևս կանգնած մի քանի մարդ, վրաս գործադրում են դեղեր ամենայն զգուշութեամբ. ծառաներն ինձ անւանում են խեշագալ, ասում են, որ վազուց եմ այնտեղ, անզգայ եմ եղել մինչև այդ ժամանակ, նորնոր եմ խելքի գալիս և այլն ևայլն:

Հետզհետէ ուշի եկայ և վերջապէս տեղեկացայ, որ վազուց է, ինչ որ մի պարոն ինձ անզգայ դրութեան մէջ բերել է հիւանդանոց: Յիշեցի հետս պատահած վերջին դէպքը և պտրտելով շորերս՝ որ դէն էին դրւած, գրպանիս մէջ գտայ մի նամակ: Նա ելենի եղբօրից էր այս բովանդակութեամբ, որ ցաւում է վրաս, չգիտէ, թէ ինչ կ'լինի իմ դրութիւնը. մեղադրում է ինձ առանց այն էլ թուլառող քրոջն անզգուշութեամբ մերժելու և նրան մահ պատճառելու մէջ և վերջը յայտնում, որ իր կեանքը պահպանողը քոյրն էր, քանի որ նա չ'կայ, ինքն այլ ևս հանգիստ չի ունենալ, կ'գնայ՝ ինքն էլ չ'իմանալով թէ ուր, մինչև որ մահը վրայ կ'հասնէ մի տեղ:

Նորից խառնեցին մտքերս և ես ընկայ նախկին դրութեան մէջ: Կատարեալ խելազար էի:



IV.

ԵՐԱԿՆՎԱԹԻԹԻՆՔ ԹՅԵԱԹՈՒԹԵԱՆ ՍԿՃԲՆԵՊԱՏՇԱՓ,

Կ Ա. Մ

ԵՂԳԵՑՈՒԹԻՒՆՆ ԱՐԵՑ Է.

Պառկած էի հիւանդանոցում։ Բժիշկներն իրանց յոյ-
սը կտրել էին, որ կ'առողջանամ և այլ ևս գեղեր չէին
զործածում։ Թոյլ էր և մարմնական առողջութիւնս, կար-
ծես կտրտւած էի, Կազդուրւելուց յետոյ ինձ սպասում էր
զժանոցն։ Սկզբում ոչինչ չէի զգում, կարծես քնած լինէի,
կամ աւելի ճիշտը՝ մեռած, որովհետեւ քնի մէջ մարդ եր-
բեմն երազում է։ Ի՞նչ է խելազարութիւնը, եթէ ոչ մահ,
այն տարբերութեամբ միայն, որ զեռ եռում է արիւնդ,
զեռ մօտ չես փոշիանալուն և կարող ես շատ անդամ բը-
ժշկւել, կամ այսպէս ասած՝ յարութիւն առնել, կըկին
դժրախտանալ, կըկին աղետալի կեանք վարել։

Յետոյ սկսւեց ինձ համար մի ինչ որ երազալից
կեանք. մերթ-մերթ զգում էի, միայն ամեն բան երազից էր
աղօտ. այդ առողջանալու նշան էր. ինքս ինձ խօսում էի,
դատում, երգում, իսկ հիւանդապահները ծիծաղում էին
վրաս. ևս զարմացած նայում էի նրանց դէմքերին, բայց

ոչինչ չէի տեսնում նրանց վրայ, միայն ծիծաղի ձայնն էր լւում անընդհատ։ Ճատ անգամ քնիցս վեր էի թրուշում այդ անվերջ ծիծաղից և նորից ապշում, տեսնելով որ մօտս մինչեւ անգամ ոչ ոք չ'կայ։ Առաջ, քանի նոր էի սկսում այդ ծիծաղն զգալ, նա թրում էր որոտոց, որ ինձ անհանգիստ էր անում, և ես չ'գիտէի, թէ ինչ միջոցով ազատւեմ նրանից։ Ուզում էի մտածել, յանկարծ նըկատում էի, որ չ'գիտեմ, թէ ինչի մասին եմ մտածում։ Վերջապէս ծիծաղն սկսեց քնքշանալ, բայց աւելի յաճախ լսել։ Նա նման էր կնոջ հեծկլտոցի, որ կարծես բղխում էր գետնի տակից։ Հետզհետէ նրա հետ սկսեց խառնել նաև լացի ձայն։ Լացին անմիջապէս հետեւում էր քըքիչ, ծիծաղին—լաց, մի խօսքով՝ կատարեալ իստերիկա։ Մէջս սկսեց երեալ նաև զարմանք։ Յետոյ այդ ձայները փոխեցին և այլ ևս ոչ լացի էին նման, ոչ ծիծաղի, ոչ մի բանի չէի կարողանում նմանեցնել, բայց նրանց չնորհիւն էր, որ հետզհետէ ուշի էի գալիս, թէԿ շատ անգամ վրդովլում էր հանգիստ։ Վերջապէս կարողացայ հասկանալ, որ ոչ այլ ինչ է իմ լսածը, եթէ ոչ մուզիքա, որ այդ պիհնիօի ձայներ են, որոնց տակ ես շատ եմ երազել, երբ նւազում էր Աշխէնն, իսկ ես վշտանում էի։ Որքան քաղցը էին թրում նրանք, որքան հարազատ, ախորժ։ Նրանք յիշեցնում էին իմ արկածալի անցեալը, և ես ըսկում էի արտասւել մանկան պէս, քիչ թեթևանում էի, քիչ խելքս զլուխս էր գալիս։ «Է՞ն, պէտք է մոռանալ ամենայն ինչ, նոր կեանքով ապրել, նոր զգացմունքներով աշխարհ մտնել, գուցէ այդպիսով կ'կարողանամ հանգիստ լինել»։ Մտածում էի այդ ձայների տակ։ Օ՛ մուզիքա, որքան ոյժ կայ քո մէջ, որքան բուժիչ զօրութիւն ունես, որ կարողանում ես վերածնեցնել մարդկային հոգին, մի

ամբողջ ովկիանոս։ Թշւառ է այն մարդը, որը երբէք չէ խմել քո տատածային միսիթարիչ ակունքից, կամ հոտ չէ քաշել քո երկնային վնչիկից, որը հիւսւած է արտաւալի մելօդիաներից, եղեմական գեղգեղանքներից։ դու անհուն հառաջանքով լի մի աղօթք ես, որ կարելի է վերընծայել միմիայն Ամենաբարձրեալին։ դու ցոլում ես հոգու մէջ որպէս վաղուց թափւած անմոռանալի արտասուքի յիշատակ, դու միանում ես հոգու հետ, որպէս երկու հրալից շրթունքներ են հպւում, և ձայն ես տալիս, որպէս վաղեմի համբոյը, որը կամնենում է մարդ երազել, մտաբերել, բայց ոյժ չէ ունենում ուղեղը…

Մուզիքայի չնորհիւ բոլորովին առողջացայ, բայց մարմնով քիչ թոյլ էի։ Նւազում էին դէմուդէմի տնից։ Ճատ անգամ այդ տան լուսամտի առաջ զալիս, նստում էր մի աղջիկ և դիտում ինձ։ Սկզբում ես ուշադրութիւն չէի դարձնում, նա աւելի էր հետաքրքրում։ Վերջը նկատեցի, որ նա է նւազում զաշնամուրի վրայ։ Ես սկսեցի շարունակ լսել նրա նւազը, և ամեն անգամ վերջացնելուց յետոյ նա ինձ տեսնում էր հիացման մէջ և գաղտուկ ժպտում։

Վերջապէս դուրս եկայ հիւանդանոցից և փոխանակ գժանոց գնալու (ինչպէս կարծում էին մի ժամանակ բըժիշկները), գարձայ ազատ մարդ... Ինչպէս բժիշկներն ինձ թողել էին բնութեան խնամքի տակ, բնութիւնն էլ այնպէս տնօրինեց, որ այլ ևս բժշկի օգնութեան կարօտութիւն չ'զգամ ուղեղս բժշկելու, կամ աւելի ճիշտը՝ խառնելու համար։ Ճատ անգամ է պատահում, որ բարեսիրտ եղբայր բժիշկները կարծելով թէ առողջացնելու հնարչկայ՝ հիւանդին գերեզման են նիւթում, ասելով «այնտեղ հանգիստ է...» Այո՛, պարո՞ն բժիշկներ, այնտեղ հանգիստ

Հրատակության մասին հայոց գործեալիք առաջարկություն

Հայոց գործեալիք առաջարկություն

— 124 —

է, այնտեղ ձեզ պէս բժիշկներ չ'կան: Բայց մահը ձեզնից աւելի լաւ բժիշկ է. եթէ ես մահան ճանկն ընկած լինէի, կրկին չէի պատահիլ դժբախտութեան: Դրա սկիզբը շատ սովորական էր—ես սիրահարուեցի... Աշխատում էի մոռացութեան տալ անցեալը, սրտիս խորքից հանել ամեն մի յիշատակ, դառնալ առը մարդ: Այդ, իհարկէ, բոլորովին չ'աջողւեց, բայց բարեկամ, նեցուկ-ընկեր էր հարկաւոր ինձ, և գտայ: Գտայ մի թշւառ, տանջւած բարեկամ. նա որբ աղջիկ էր, մի այրի կնոջ տան դաստիարակչուհի: Տեսնելով ինձ հիւանդանոցում՝ առաջին օրից սկսել էր տածել զէպ ինձ և նւագել ինձ համար՝ գիտենալով նրա ազգեցութիւնը: Մի քանի տեսակցութիւններից և զանազան բացատրութիւններից յետոյ յայտնեցինք իրար մեր սէրը և... ամուսնացանք: Ուրիշ կերպ չէի կարող վարւել. նախ՝ վախենում էի, թէ մի գուցէ նրան ևս թովելով դժբախտացնեմ, և յետոյ՝ անկարող էի մերժել նրա առաջարկութիւնը, մանաւանդ որ ինձ ընկեր էր հարկաւոր, առանց նրան չէի կարող ապրել: Այդ ամուսնութեամբ ինձ երջանիկ էի համարում, բայց հինգ այլտեղից սկսում է իմ իսկական թշւառութիւնն: Ահա թէ ինչպէս:

Մինչեւ այդ ժամանակ դեռ երազներով էի ապրել, դժւարութիւններ չէի կրել, միայն էի, ապրելու հոգս աննշան էր. բայց ամուսնութեան հետ հոգսերը բազմապատկեցին, երկու էինք դարձել. պէտք էր խոհեմութեամբ ապրել, մտնել պրօզայական կեանքի մէջ, ընտելանալ նրան: Պաշտօն ճարելու յետեից ընկայ: Առաջին գիմածից մերժեցի, և այդ վրաս վատ ազդեց. հինգ այն օրը զղացի ամուսնանալուս համար. «ինչո՞ւ ինձ զըկեցի աղատութիւնից, ով էր ինձ ստիպում», մտածում էի, բայց

— 125 —

իզնւը, արդէն բանը բանից անցել էր, այլ ևս փրկութիւն չ'կար... Որքան անհեթեթ գործ է ամուսնութեան կապով կապւելը, երբ անորոշ է ապագադ, երբ չ'գիտես, թէ կարող կ'լինես պահել քեզ, մի ուրիշին և վերջապէս շատերին. աւելի լաւ է խելագար լինել. բայց միթէ այդ խելագարութիւն չէ, մինչև անգամ աւելի վատ է: Այլ ևս ոչինչ չէի կարող անել, թէկուզ աղմկէր սիրոս, և յամրօբէն անիծէի գործս:

Պէտք էր դիմել մի ուրիշին զբաղմունք գտնելու համար. դիմեցի երկրորդին, երրորդին... և վերջապէս գտայ մի գժւար և անյարմար պաշտօն. ինչ արած, պիտի տանէի, ամենայն ինչ պիտի տանէի, պարտաւոր էի, թէկուզ մինչև անգամ աւելի ստոր պաշտօններ, ինքս իմ առաջ խոշ էի զրել, կապանք ստեղծել: Աշխատանքն այնքան ծանը էր և անտանելի, որ շուտով ուժերս սպառւեցին. յամառութեամբ տանում էի ամեն մի զրկանք, բայց երկար չ'տեսեց, շուտով անկողին մտայ: Հակառակի պէս հինգ այդ անելանելի դրութետն մէջ կինս մի զաւակ ծնեց... Զաւակը երջանկութիւն է մարդու համար, բայց ես շատ էլ գոհ չէի, մինչև անգամ տրտնջացի: «Երկինք, այս ինչի համար է, միթէ բաւական չէր հոգսս, որ պարզեցիր մի մտատանջութեան առարկայ ևս», մրմնջում էի գաղտուկ: Ուրախ չէր նոյնպէս և ամուսինս. ես համոզւած եմ, որ նա նոյնն էր մտածում: Այս, իհարկէ, դժոխային է, բայց ով էր մեղաւորը, թող իւրաքանչիւրն ըստ իր խղճի պատասխան տայ... Ես անկարող էի վեր կենալ մահճից, կինս ստիպւած էր պաշտօն փնտուել, բայց չէին տալիս: Նրան ասում էին. «Դու զաւակի տէր ես, քիշ յետոյ կ'ունենաս և մի ուրիշը, միթէ այդ հանգամանքներում կարող ես կրթել մեր զաւակներին»: Եւ իսկապէս չէր կա-

ըող, բայց սնւել և սնել էր հարկաւոր: Մի կերպ վերջապէս ազատեցի մահճից և դեռ ոչ բոլորովին առողջ՝ ընկայ այս ու այն կողմն աշխատանք գտնելու համար: Նախկին պաշտօնս ընկել էր ձեռիցս, տեղս բռնել էր ինձ պէս մի թշւառական: Բանն այն տեղը հասաւ, որ ստիպւած եղայ բանւորութեամբ պարապւել... Է՛, քնքութեան աշխարհն այլ ևս աներեակայելի էր ինձ համար, քրտնքով, դառը քրտնքով պիտի ճարէի ընտանիքիս պարէնը. պիտի ազնիւ զգացմունքներս, անգին երազներս ոտնատակ տալով՝ տանէի թուք ու մուր իբրև մի ստրուկ՝ մի քանի կոպէկ ստանալու յուսով. այդքան պրօգայական, այդքան սառն է աշխարհը... Ա

Կինս ծնեց մի երկրորդ զաւակ—թշւառութեանը գումարած թշւառութիւն—իբր թէ մէկին կարողանում էի սնել! Բանւորութիւնն էլ ուժիցս վեր էր, դրանից էր զըրկեցին ինձ ասելով՝ որ բանել չ'զիտեմ: Տան կահկարասիքըն անգամ վաճառ հանեցինք, բայց նորից ոչինչ չ'մնաց: Սովածութիւնն սկսւեց...

Հպարտութիւնս արգելում է ինձ այլ ևս շարունակել, բայց ոտնատակ եմ տալիս նրան. Եթէ ոչ չէ խնայում, ես ինչու խնայեմ. ջնջում եմ ճակատիցս հպարտութեան կնիքը, հանում եմ հոգուցս նրա վերջին մնացորդն, էլ ինչիս է պէտք, բաւական է ինձ և ատելութիւնս դէպի համայն տիեզերքն...

Ստիպւեցի կրել ամենածանը հարւածներ: Երբ հասնում էր երեկոն, վնում էի մի մութ փողոց, կուշ գալիս անկիւնում, ծածկում երեսս և ողորմութիւն խնդրում: Մկրում հպարտութիւնս թոյլ չէր տալիս վիզ ծռել, և իմ խնդրելու մէջ կար մի ինչ որ հարմայական. շատերն այդ պատճառով զգւանքով երես էին դարձնում ինձնից, մինչև

անգամ մի օր մէկին ասաց. «տեսէք, կեանքը մուրալով է պահպանում և դեռ հրամայում էլ է»: Մի ուրիշը հրեց, մինչև անգամ մէկը յանդգնեց թքել իմ դէմքին... Ինչու, ինչ էի արել նրան—իհարկէ՝ ոչինչ, բայց նա զւարճացաւ դրանով, նա անզօրի հետ զործ ունէր... Վառում էր երեսս կատաղութիւնից, հոգիս լցւում վրէժինդրութեամբ, բայց անզօրն իրաւունք չ'ունի իրան պաշտպանելու, որով հետև անզօր է, նա զօրեղի առաջ թուքն է կուլ տալիս...

Անկարելին կարելի դարձաւ. Քիչ առ քիչ սովորեցի այդ կեանքին, սովորեցի խղճալի ձայնով խնդրել: Ճատ անգամ երբ կոպէկները տուն էի բերում, կինս լոիկ լալիս էր: Փողերը նրան էի յանձնում, նա առնում էր ձեռիցս և շպրտում՝ ասելով. «որու աշխատանքով չես զբաղւած, որտեղից են այս փողերը, սա թոյն չէ, որով մեր զաւակներին կերակրում ենք». ասում էր ու լալիս, իսկ ես զլուխս ցած էի բռնում: Անցնում էին ժամենը, և այդ թոյնը զործադրում էր, նա անկիւնում ընկած չէր մնում... Քանի—քանի անգամ է շպրտել կինս այդ թոյնը և նորից յետ վերցրել. Ի՞նչ արած:

Այլ ևս ոյժ չ'ունենալով դիմանալու այս հարւածներին՝ կրկին մտայ անկողին: Այն ժամանակ կինս շարունակեց իմ սկսած պաշտօնս: Օ՛, սարսափելի է մուրացկանութիւնը, մանաւանդ կնոջ, բնութիւնից զրկւածի համար: Նա փոխում էր շորերն, ընկնում գոնէդուռ, նոյն ծաղրին ենթարկում, նոյն դառնութիւններին հանդիպում, շատ անգամ վերադառնում դատարկ ձեռով, ընկնուած սրտով: Մենք կարող էինք մեռնել, բայց մեր զաւակները.—Նրանք արգելում էին:

Բնակարանն ևս փոխեցինք, մտանք մի գետնափոք խրճիթ, որից խոնաւութիւնը մահւան պէս փշում էր:

Դրանով էլ չ'թեթևացաւ մեր վիճակը: Կինս շատ անգամ դատարկ էր գալիս, իսկ զաւակներս հաց էին պահանջում: բայց ի՞նչ, միայն հաց, չոր հաց էին ուզում, այն էլ չ'կար: Հատ անգամ նստում էի անկողնիս մէջ, զաւակներս գիրկս առնում և արտասուքի հետ մըմնջում կամացուկ: «Լսում էք, որդիներս, չ'ամուսնանաք, եթէ չէք կարող զաւակներ պահել: Մեռցը ձեր մէջ սէր ասւած կիրքը»: Կինս նոյն պէս լալիս էր, իսկ զաւակներս հետեւում էին մեր օրինակին: 2'գիտեմ, նրանք հասկանում էին իրանց վիճակը, նրա համար էին ձայնակցում, թէ ոչ. բայց դժւար թէ հասկանային: «Ո՞վ գիտէ, ինչ է սպասում ձեզ», ասում էի նրանց, իսկ նրանք իրանց անմեղ աշխիները յառում էին վրաս, տիրում և գրկում ինձ՝ կարծես հասկանալով, որ դժբախտութեան մէջ նրանց գգւանքը միսիթարութիւն է: Իսկապէս թէն մի կողմից նրանք ծանրութիւն էին պատճառում, սակայն առանց նրանց էլ միւս կողմից շատ վատ կ'լինէր ինձ համար, մտքերն աւելի և աւելի կ'զցէին: Քաղցը ին զաւակները, բայց կարծում եմ, աւելի քաղցը կ'լինեն երջանկութեան մէջ, որ ես չեմ տեսել: Եւ փառք, և պատիւ, և հպարտութիւն, և սիրտ, բոլորը նրանց զոհեցի և նորից նրանց համար էի ապրում, նրանց համար էի ձեռս մեկնում դէպ այն մարդիկ, որոնք ամեն բանից ատելի են:

Զրկւել զաւակներից՝ մեզ համար նշանակում էր զրկւել կեանքը պահպանող միակ նեցուկներից: Մենք հաց չ'ունէինք նրանց կերակրելու. մտածում էի թողնել, որ մեռնեն, սովամահ լինեն: Սարսափելի վճրո է, չէ՞ Բայց ոչ, այդպէս մտածելիս՝ միշտ մի ձայն հնչում էր ականջիս մէջ. «Թու պարտաւոր ես նրանց կերտիրելի ինչու ստեղծեցիր նրանց»: Եւ ես հնազանդում էի այդ ձայնին, որպէս եր-

կընային պատզամի: Ինչով էին մեղաւոր զաւակներս, նրանց կեանքը տւողը պարտաւոր էր պահպանել և այդ կեանքն, այնպէս չէ. սակայն ի՞նչ կարող էի անել, ինքս ոյժ չ'ունէի քայլելու, կինս վերադառնում էր դատարկ ձեռներով, զաւակներս պահանջում էին ուտել: Նրանց ամեն մի ճիշն, ամեն մի հնչիւնը սրի պէս ծակում, խոցուառում էր սիրտս. ինձ վիճակւած էր տանել այդ բոլորը: Որքան գժւարութիւններ, որքան մտատանջութիւն. մտածում էի, մի ելք չէի գտնում ազատւելու, վիճակւած էր ինձ խմել թոյնի վերջին կաթիլը, և մօտենում էի նրան:

Մի անգամ կինս վերադարձաւ մուրալուց, գըկեց երեխաներին և սկսեց լալ ոչ ըստ սովորականի: Հարցը պատճառը, նա երկար ժամանակ չէր ասում, բայց վերջապէս կարողացայ նրանից դուրս կորզել մի քանի խօսք. նա մի հարուստ պարոնից ողորմութիւն էր խնդրել, իսկ վերջինս նրան անպատաբեր խօսքեր էր ուղղել... Ո՛չ, թէկուզ հէնց տնից դուրս գալիս մեռնել, պէտք է գնալ, չ'պէտք է թոյլ տալ այլ ևս, որ կինս տնից դուրս գայ. վճուցի և տեղիցս վեր կացայ, որպէսզի մուրալու գնամ: Գլուխս պտտւեց, և ընկայ անզգայ: Երբ ուշի եկայ, կըրկին վեր կացայ և մի կերպ՝ փայտերի օգնութեամբ դուրս գնացի տնից:

Մութ երեկոյ էր. երկինքն ևս սեացել էր մարգկանց սրտերի նման. մառախուղը պատել էր ամբողջ քաղաքն, անձրես բարակ մաղում էր: Քաշքշւելով, պատերին յենելով, երբեմն ընկնելով և ցնցուիներս ցեխոտելով՝ հասայ մի բազմամարդ փողոց: Ահա անցնում են մշակները, նրանք ոչինչ չեն ունենալ, աւելորդ է նրանցից խնդրելը. բայց էլի, գուցէ կ'տան:

«Մշակ եղբայրներ, իմ օրը ձերինից վատ է, օգնեցէք

թշւառիս, զաւակներս հացի են սպասում»:

—Առ, եղբայր, աւել չեմ կարող տալ, ասաց ամենից յետինը՝ նայելով դէմքիս և գցելով կոպէկը ձեռս.—իրաւոր խեղճ մարդ ես, բայց ինչո՞ւ ես ամուսնացել. ասաց և գնաց՝ չսպասելով պատասխանիս: Դա դառը նախատինք էր, որն արտասանելու իրաւունք ստացաւ մշակն իր մի կոպէկով:

Անցնում էր մի հարուստ պարոն, ես նրան ճանաշում էի, բայց նա կառքի մէջ էր, իմ աղաղակը չէր լսիլ: Անցնում էր մի ուրիշն իր ծառայի հետ:

«Տէր, օգնեցէք դժբախտիս, որդիքս սովամահ են լինում»: Առաջին անգամ նա ուշադրութիւն չ'զարձրեց, բայց երբ աւելի բարձր կրկնեցի նոյնը, դարձաւ և ասաց.

—Ոչ մի արատ չ'ունես, ինչո՞ւ ես ողորմութիւն խընդուռում, միթէ չես կարող մի գործ կատարել. եթէ չես կարող ընտանիք պահել, ինչո՞ւ ես ամուսնացել»:

«Կարող եմ գործ կատարել, բայց չ'կայ»:

—2'կայ! ինչ ասել է գործ չ'կայ:

«Տէր իմ, շնորհ արէք, կարող եմ կատարել նոյն իսկ ծառայի պաշտօն, գիշերային պահապանի պաշտօն...»

—Տեղ չ'ունեմ, ասաց ու հեռացաւ:

Այսպէս անցան մի քանիսը, բոլորն էլ մերժեցին:

Ահա անցնում են երկու ամուսիններ իրանց երկու զաւակների հետ. «Գուցէ սրանք խղճան թշւառականիս, իրանք ևս զաւակների տէր են», մտածեցի:

«Օգնեցէք ինձ, մըմնցացի, որդիքս սովամահ են լինում, 'ի սէր ձեր զաւակների, ինձ մի պաշտօն չնորհեցէք»:

Նրանք ծանր ժպտալով անցան, վրաս անգամ չ'նայեցին, իսկ փոքրիկ երեխաններն ապշութեամք դիտում էին ինձ:

Եաց կոյ ամրդ և

Կատաղեցի, փրփրեցի և բոլոր ուժերս հաւաքելով՝ վագեցի—եթէ կարելի է ասել —այն, վագեցի նրանց յետևից և հասայ: Երեխաններն սկսեցին ճիշ արձակելով վիախչել դէպ իրանց ծնողները, նրանք վախեցան իմ կատաղի աշերից:

«Պարո՞ն, զոնէ փո՞ղ... փո՞ղ տուէք», ասացի և բռնեցի փեշերից. ոտերս ծալւեցին, ընկայ ուշաթափ փայտի հարածների տակ:

Երբ ուշի եկայ, տեսայ, որ ինձ կառքի մէջ քանտէին տանում քաղաքի ամենայայտնի փողոցով: Բոլոր հայեցքները կենտրոնացած էին վրաս. ոմանք ծիծաղում էին, ոմանք արհամարհում, ոմանք մինչև իսկ թքում և լկտի ժպիտը դէմքերին՝ մատով սպառնում. շատ քչերն էին ցաւակցութեան նշան ցոյց տալիս: Ինձ նայում էին նաև հին ծանօթներս. ես ծածկեցի դէմքս ձեռներով...

Ազատութիւննից կապանք!.. Ես բանտում էի. ինձ մեղադրում էին սպանութեան փորձ փորձելու մէջ... քիչ էր մնում, որ ինքս էլ հաւատայի նոյն քանին, այնքան ուրիշները համոզւած էին նրա մէջ: Լսել եմ, որ մի խելօքի այնքան են ասել, թէ «խելագար ես», որ ինքն էլ է համոզւել և սկսել է խելագարութիւն անել: Եւ դա զարմանալի չէ, որովհետև շատերն այն համոզմունքին են, թէ «ձայն բազմաց ձայն Աստուծոյ» է, մինչդեռ այդպէս չէ, որովհետև մարդկութեան մեծամասնութիւնը դեռ կանոնաւոր մտածել չ'կիտէ, հարցերի մէջ լրջօրէն մտնել սովոր չէ, կիսափայրենի դրութեան մէջ է գտնուում: Մարդկային կեանքն աւելի սխալանքներից է կազմւած, աւելի ստորութիւնների կօմբինացիա է, քան ճշմարտութիւնների (խօսքս առանձին ազգութիւնների մասին չէ՝ իհարկէ): Որքան յայտնի է պատմութիւնից, մեծամասնութեան

ձայնն անարդարութեամբ մէկին խաչ է բարձրացրել, մէկին քարկոծել, միւսին հալածել, չորըրդին անտարբերութեան մատնել։ Հէնց այդ «ձայն բազմաց ձայն Աստուծոյ» ասացւածն ինքնըստինքեան անարդարութեան մի զգւելի արտայայտութիւն է, մի սխալ, որը գործում են, կարող եմ ասել, հէնց դիտմամբ. այդ մի սպառնալիք է ճշմարտութեան դէմ, ուրիշ ոչինչ։ Փանիսն են գուր տեղից զոհ գնացել բազմութեան այդ յանդուգն լկտի ձայնին, և դեռ քանիսները կ'զնան...

Իմ միակ ձայնը շատերի մէջ խլանալով՝ արժանացայ բանտի։ Այնքան էի տառապել, այնքան էի հարւածներ կը-րել, որ այդ նոր աղետը տանելու շատ էլ դժւարութիւն չ'զգացի. ասում են, թէ «առաջին կորուստը կ'օգնէ հեշտութեամբ տանելու երկրորդը», և դա այդպէս է։ Եթէ առաջուց նեղ օրեր տեսած չ'լինէի, գուցէ խելագարւէի բանտ ընկնելով։

Թոյլ էի դեռ ևս, ինձ հարկաւոր էր բժշկւել, և այդ չ'խնայեց բանտն։ Այնտեղ բժիշկների հոգատարութեամբ բոլորին առողջացայ (օ, ինչպէս աշխատում են նրանք այդպիսի դէպքերում)։ Մկզբում մի տեսակ չէի էլ հաւատում, թէ բանտումն եմ, բայց յետոյ զգացի դառնագին ճշմարտութեան բոլոր ծանրութիւնը և սկսեցի մտածել ինչ անելու մասին։ 2Է որ ընտանիքս թողել էի վերջին կարօտութեան մէջ, չէ որ կերակրող չ'ունէր, ինձ էր սպասում։ «Եղկելի հայր, զաւակներդ քեզ վրայ են յոյս դրել», ասում էի ինքս ինձ և երազների մէջ ընկնում։ Երեւակայում էի, որ բանտից ազատած եմ, վազում եմ դէպի տուն, զաւակներս նետում են դիրկս, և կինս ժըպտում է... Յետոյ քիչ նստում ենք, որդիքս հաց են ուղում... Եւ յանկարծ դուրս էի զալիս ինքնամոռացութիւ-

նից, տեսնում, որ այդ բոլորը շատ հեռու է իրականութիւն լինելուց, ամուր են բանտիս պատերը, բարձր է լուսամուտն, ինքս մի խեղճ արարած եմ... Բայց նրանք կ'մեռնէին սովից, պէտք էր հասնել, պէտք էր փախչել, ազատւել անիրաւ բանտից։ Լուսամուտը թէս բարձր, բայց խախուտ էր. մտածեցի կոտրել և ցատկել ահազին բարձրութիւնից, ինչ կ'լինի, թող լինի. բայց սարսում էի, երբ երևակայում էի, որ ցատկում եմ, օդի մէջ եմ։ Սակայն միթէ բանտի մէջ կենդանի մնալով զաւակներս կ'ապրէին. ոչ, աւելի լաւ էր ցատկել, ուրիշ հնար չ'կար, կամ կ'զախչախւէի, կամ կ'ազատւէի։ Առաջին դէպքում աւելի լաւ վիճակի կ'ենթարկւէի, քան թէ բանտում մնալով. որովհետև թէս տակաւին դատավճիռ չէին կայացրել ինձ համար, բայց գիտէի, որ աքսորւելու եմ հեռաւոր երկիր։ Ի՞նչ օգուտ, պիտի զրկւէի զաւակներից, և վիշտը կրծէր սիրտս։ Երկրորդ դէպքում երջանիկ կ'զգայի ինձ, տեսնելով որ զաւակներիս մօտ եմ. իսկ հետեանքի մասին չէի մտածում, որ կարող են այնտեղ բռնել և կրկին յետ բերել։ Վճռեցի։

Գիշեր էր, կաթնագոյն գիշեր. լեռներն իրանց մէջքին էին կապել ամպեղէն գօտին, իսկ պսպղուն գագաթները ցցել մինչև լուսինը։ Մառախուղի յետ մնացած փշրանքները կամաց կամաց բարձրանում էին սարի լանջով դէպ ամպերը որպէս յողնած ճանապարհորդներ, և ցօղն իշնում էր երկրի երեսին։ Ոչինչ չէր լսում, բացի գետակի միօրինակ վշշոցից, միայն երբեմն ազատ քամին բաղիսում էր պատուհանս և խուլ ձայներ հանում։ Վըճռել էի ցատկել, չ'նայած որ գիշերն այդպէս մաքուր և փայլուն էր։ 2Է որ մութ գիշերն աւելի հեշտ է փախչելը։ Մօտեցայ լուսամուտին և սկսեցի աշխատանքս։ Այդ՝ իհար-

կէ, շատ երկար տևեց, այնքան էլ հեշտ չէր երկաթէ ձողեր հանելը: Լուսանալուն մօտենում էր, իսկ ես դեռ չէի վերջացրել գործս: Ակսեցի զղալ արածիս համար, բայց արդէն ուշ էր. չէ որ եթէ գային, լուսամուտը կիսախարխուլ դրութեան մէջ գտնէին, ես բոլորովին կ'կորչէի, չէ որ զաւակներս սպասում էին ինձ: Ուժերս կրկնապատկեցի: Մի վերջին ճիգ, և ահա պատրաստ էր այնքան տեղ, որ կարող էի դուրս սողալ: Թէկ արդէն լուսացել էր, բայց սկսեցի դուրս գալ: Յանկարծ բանտիս դուռը ճրռուաց... ինձ ցած գցեցի...

Անիծեալ յոյս, ես կրկին բանտում էի, միայն թեա և ոտներս կտրատւած, գլուխս պատուած, մէջքս ջախջախւած, բժիշկը գլխավերես, և բանտապահն ինձ հայնոյելիս՝ դժոխային հայեացքներ զցելով վրաս: «Ինչու էիր ուզում փախչել, գաղրշելի», գոռաց նա՝ աքացելով ինձ, երբ բժիշկը դուրս էր գնացել մի ինչ որ բանի համար: — Զաւակներս կ'անիծեն քեզ, անգնթ, մըմնչացի կեսաձայն:

Նա թքեց վրաս:

Բժիշկը եկաւ, կապկապեց վերքերս ու հեռացաւ՝ թողնելով երկու հիւանդապահներ մօտս, որոնք ոչ միայն հոգ չէին տանում ինձ, այլ և հայնոյում էին փայրենաբար:

Ափսոս, հազար ափսոս, վերջին յոյս, դու էլ կորար: Գիշերային լոիկ խաւարի մէջ որքան էի քեզ փայփայում, որքան սիրում էի քեզանով երազել, որքան քաղցը էիր, և տանելի էր քեզանով կեանքն, իսկ այժմ!.. այժմ տեսնում եմ, որ այն, որին փայփայում էի, տեղը դատարկութիւն թողնելով չքացաւ. Էլ ի՞նչ է ինձ համար կեանքըն, էլ ում համար եմ ապրում... Այսպէս զառանցում էի զլուխս թաղած ճերմակ բարձի մէջ, իսկ աշերս չոր էին: Ո՞վ պիտէր, ի՞նչ դրութեան մէջ էին կինս ու որդի-

ներս, ինչով կարող էին բացատրել իմ անակընկալ կորչելըն, ով կ'խղճար նրանց արցունքներին, ով նշանակութիւն կ'տար նրանց կեանքին. Է, ինչ գործ ունէ մեծատունը թշւառի հետ, ինչու նրա ճակատին կնճիռ երևայ, ինչու ծանօթանայ աղքատութեան սարսափների հետ. ոչ, նա ազատ է, անհոգ է, այդպէս էլ կ'մնայ միշտ: Ում ինչ, թէ մի քանիսի կեանքը կ'վերջանայ անժամանակ, միթէ երկրի ծոցում տեղ չ'կայ նրանց դիակներն ամփոփելու համար: 2է որ բոլորն էլ մեռնելու են, միթէ կարող են նրանք ճակատագրին հակառակել. ում համար երկինքը վշտեր է ստեղծել, այն էլ պիտի տանէ, ում համար եղերական մահ է նախորոշել, այն էլ պիտի ենթարկէ նրբան: Այսպէս է հարստի դատողութիւնը, նա ֆատալիստ է բառի բուն նշանակութեամբ, բայց միայն ուրիշների վերաբերմամբ:

Առողջութիւնս տեղը գալուց ինձ հիւանդանոցից հանելով գցեցին մի մութ սենեակ: Պէտք է խոստովանել, որ հիւանդ ժամանակս ինձ աւելի լաւ էին պահում, խնամում, առողջացնելուց յետոյ շան տեղ էլ չէին դնում: Ոչ, շան վիճակը բազմապատիկ լաւ է, նրան խնամքով են վերաբերւում, իսկ ի՞նձ... Արժէր միթէ, ես ստրուկ էի կատարելապէս...

Միւս կողմից զաւակներիս կարօտն էր ինձ տանջում: Նոյն իսկ գիշերները, քնիցս վեր էի թռչում յանկարծ, կարծես մթութեան միջից խօսում էին հետս. բայց զգում էի, որ հալիւցինացիա է, նորից էի ընկնում յուսահատութեամբ: Միւտքս հանգիստ չէր, և նորից յոյս էր մտել մէջս. զգում էի, թէ պիտի տեսնեմ ընտանիքս: Մտածեցի կրկին փախչելու փորձ անել: Բայց ի՞նչպէս, բանտս մինչեւ անգամ լուսամուտ չ'ունէր, դուռը պինդ կողպած էր լինում,

միայն այն ժամանակ էր բացւում, երբ ինձ ուզում էին կերակրել. բայց այդ ժամանակ էլ ինչպէս դուրս գայի, քանի որ մի կողմից բանտի ծառան մօտս էր լինում, միւս կողմից պահապանը դըրան մօտ կանգնած. որքան դժւարութիւններ. և այս բոլորն ինչի՞ համար—մի քանի կոպէկ խնդրելու, որով պիտի ընտանիքս կերակրէի: Բայց պէտք էր դժւարութիւններին յաղթել: Որոշեցի մի չափազանց վտանգաւոր բան.—խեղդել կերակուր բերող ծառային, հագնել նրա շորերը և դուրս գալ. եթէ պահապանը կ'հասկանայ ծպտեալ լինելս, նրա հետ ևս կոիւ կ'մտնեմ:

Կերակուր բերելու ժամանակն էր. լսում էի ծառայի քայլերն. իրագործել մտադրութիւնս, թէ ոչ. սկսեց մի կոիւ հոգումս: Այո, թէ ոչ: Ներս մտաւ ծառան, մօտեցաւ... Սիրտս սկսեց թնդալ, քիչ էր մնում պայթէ: Յատկեցի արագութեամբ և բռնելով ծառայի կոկորդից՝ սկսեցի սխմել: Չեռս թուլանում էր, և ես արագացնում էի, որ չ'ինի թէ անկարող լինեմ երկար դիմանալ, խիղճ խանգարէ, և գործս կիսատ մնայ... ծառան դիմադրում էր, բայց շատ թոյլ կերպով, որովհետև կոկորդն ամուր էի սխմում, և արիւնը ծածկել էր աշերը: Վերջապէս անշնչացած փուեց գետնին... Ես կատաղել էի. մեռել էր մէշ ամեն ինչ, և միայն փախչելն էր աշքիս առաջ, չէի մտածում մինչև անգամ պահապանի մասին, մոռացայ նոյն իսկ շորեր փոխելն ու դուրս պըծայ...»

«Ուր, բարեկամ», գոռաց պահապանը՝ գրկելով ինձ, որպէս առիւծը գըրկում է թոյլ եղնիկին. ես սկսեցի դիմադրութիւն ցոյց տալ, բայց իզնւր... ամեն կողմից թափւեցին վրաս. բոլորովին կորայ...»

ծանը շղթաներով կապկպած՝ ինձ գցեցին գետնին...

«Միհան կախաղան!...» հառաջեցի ես, երբ մի քանի օրից յետոյ երեսիս կարդացին իմ դատավճիռը—բարձրացրնել կախաղան եռ գոյրը յարքունիս գրաւել: Ահա թէ ինչ էր վիճակւած ինձ. միթէ մայրս ինձ կախաղանի համար ծնեց, միթէ վերջնականապէս կորաւ պատիւս: Այդ ճշմարտութիւն է, որ պիտի մեռնէի, բայց միթէ այսպիսի խայտառակ մահով, կախաղանի վրայ: Եւ այս բոլորն ինչի՞ համար էր. մի քանի կոպէկ խնդրելու համար:—Ոչ, աւելի հեռուն պէտք է նայել, բռն պատճառները պէտք է որոնել անցեալում: Արդեօք ինք մեղառնո՞ր եհ կախաղան հասանելուս համար: Գուցէ գտնւեն շատերը, որոնք սառնասրտօրէն ասեն՝ այո. կ'լինեն և այնպիսիները, որոնք կ'ասեն՝ մասամբ. գուցէ կ'լինեն և այնպիսիները, որոնք կ'արդարացնեն ինձ բոլորովին: Ես կ'ասեմ. չ'նայած որ մի կազմակերպւած բնաւորութիւն չ'ունէի, չ'նայած որ կեանքին այն հայեացքով չէի նայում, որ կարելի լինէր նրանից օգտել, սակայն և այնպէս այդ բոլորի մէջ մեղաւոր էր նեանրը: Ճատերը կ'ասեն. «այդ խօսքն ընդհանուր է». այո, այդպէս էլ պէտք է հասկանալ. ինչո՞ւ ծնւեցի, որ այս բոլորին ենթարկւեմ: Ի՞նչ է կեանքը— եթէ ոչ տառապանքների մի երկայն շարք: Մարդիկ ապրում են երջանկութեան իդէայով, բայց նա նոյնքան անմատչելի է, որքան երկնքից աստղ պոկել և ցած բերելը: «Մարդու բնաւորութիւնից է կախւած իրան երջանիկ կամ թշւառ զգալը, շատերը որոշ հանգամանքներում իրանց երջանիկ են զգում, իսկ ուրիշներն աւելի լաւ հանգամանքներում ապերջանիկ են համարում իրանց», ասում են շատերը: Ճիշտ որ բնաւորութիւնից է կախւած. բայց ո՞վ է ստեղծում այդ բնաւորութիւնը, եթէ ոչ նոյն կեանքը, որը չնորհում է մարդուն նաև հանգամանքները: Զի գըտ-

Նըւիլ մի այնպիսի անձն, որ լիովին գոհ լինի իր վարած կեանքից, իր վիճակից, իւրաքանչիւրը որևէ մի դէպքից դժգոհ է։ Այդ դեռ ոչինչ, նայեցէք ահագին ամբոխին, քարասիրտ, տգէտ ամբոխին, նա մի կատարելապէս անպէտք տարը է ներկայումս (ապագայ սերնդի մասին խօսք չ'կայ, որ պիտի առաջանայ այդ ամբոխից), նա և տանջում է, և կեանքը քարշում։ Չի լինիլ նրա անդամներից մէկը, որ գոնէ մի քանի ըոպէներում ասած չ'լինի. «անիծւի այսպիսի կեանքն, ինչպէս ցանկանում եմ մեռնել.» բայց մահը մօտենում է թէ չէ, սկսում են զրահաւորւել նրա դէմ, թէկուզ զառամեալ հասակում։ Ո՞վ է մեղաւոր զրա մէջ—կեանքն. ինչո՞ւ—որովհետև նա այնպէս է կըրթում մարդուս, որ նա իրան սիրէ, խարում է, յոյսեր է խոստանում. նա մի վիճակախաղ է, որ ամենքը կարծելով թէ իրանց կ'ընկնէ վիճակարկող իրը, բախտ են փորձում, բայց միայն մէկին, երկուսին է ընկնում։ Ամենքն էլ կարծում են, թէ կեանքը լի է շահերով, հետաքրքիր է նա, բայց շատ քերին է յաջողուում տիրանալ ցանկացածին։ Գատ անգամ մարդ նոյն իսկ երեակայում է այն, ինչ որ իրականապէս գոյութիւն չ'ունի կեանքի մէջ, և չ'ստանալով, չ'տեսնելով, չ'զգալով ցանկացածը, մաշտում, թառամում է։ Վայ նրան, ով երազող է, նա ոչինչ չ'պէտք է սպասէ կեանքից. ստացածն էլ չնչին, ուշադրութեան անարժան է թւալու. այդպէս է կեանքը, նա չէ կարող բաւարարութիւն տալ ամենքին, այս ճշմարտութիւնն ակներև է։ Ինչո՞ւ մէկին մեղադրում են, թէ զդային է, մելամաղձուտ է, յուետես է, չէ որ այդ բոլորը կեանքից է ըստացել, չէ որ հանգամանքներն են ազգել վրան։ Ինչո՞ւ մէկին մեղադրում են կրքոտութեան, սրիկայութեան, անբարյականութեան, գողութեան մէջ. որոնեցէք իսկա-

կան աղբիւրը և կ'տեսնէք, որ նրա անձնաւորութիւնն անասելի մաքուր է, որպէս հրեշտակ, և մեղաւոր է կեանքը։ Դրէք գողացողին լաւ հանգամանքներում, տւէք նրան ապրելու միջոց, որևէ յարմար գործ, նա կ'զգէ անարդարութիւնից։

Կան այնպիսիները, որոնք շափից գուրս գոհ են կեանքից, բայց դրանք ուրիշի դրութեան մէջ մտնել չ'գիտեն։ Բարեգործը պատահում է ապերախտութեան և ըստիպւած է լինում ասել՝ «ինչ որ ցանես, այն չեւ հնձիլ։ Քարոզիչը ենթարկում է հալածանքի, և մսում է համոզւել, որ մարդիկ անընդունակ են ըմբռնելու. նոր մտքին ծաղրով են դիմաւրում, և մարդ հիասթափւած բացականչում է. «այս է կեանքն»։ Այս՝ իհարկէ, մի կոիւ է, մշտական, անվերջ, բայց ստոր կոիւ։

Ճատ անգամ մի դէպք, մի հանգամանք ահագին յեղափոխութեան, մի բոլորովին նոր շրջանի պատճառ է դառնում, հիմնովին փոխում կեանքի ընթացքը։ Եթէ ես լինէի հարուստ, կամ գոնէ ապրելու միջոց ունենայի, ոչ կ'հեռանայի հայրենիքից, ոչ այնքան գոհերի պատճառ կ'դառնայի և ոչ կախաղանի կ'արժանանայի. իմ ընաւորութիւնն այն տեսակներից է, որ ոչ ոքին վիրաւորանք չի պատճառի, ես ինձ համար կ'ապրէի անկախ ուրիշներից, իսկ ուրիշներն անկախ ինձնից։ Բայց մեռաւ հայրս, ինձ գտայ բոլորովին տնանկ դրութեան մէջ, ստիպւեցայ ուրիշի տանն ապրել, որը պատճառ դարձաւ իմ տարեգրութեան, օտար տեղեր գնալուս, ուր տւի գոհեր. իսկ յետոյ ամուսնանարդիվ դարձեալ նոյն պատճառով հասայ մուրացկանութեան. իսկ մուրացկանութիւնից կախաղան համնելը մի քայլ էր, ոչ աւելի. և ահա կանգնած եմ կեանքիս չէմքին, իմ բաժին ժամանակի սահմանի վը-

քան, սպասում եմ վերջին ըռպէին, երբ մի դիւթական ոյժ կ'զլորէ ինձ անդնդի մէջ, որտեղից այլ ևս չեմ վերադառնալ... Մօտեցել է մահս, մինչդեռ ցանկանում եմ դեռ երկար ապրել: Թող զարմանալի չ'թւայ. ուզում եմ ապրել ոչ թէ ինձ համար, ոչ, այլ զաւակներիս, կնոջս համար: Որքան կարօտել եմ նրանց, որքան սիրտս ուզում է նրանց, թոյլ կ'տան արդեօք վերջին անգամ տեսնել, համբուրել վերջին անգամ և ընդմիշտ բաժանել... Եթէ ոչ, ցանկանում եմ այս ակնթարթումս մեռնել, էլ ինչիս է պէտք կեանքն: Սպասեմ, ամենավերջին յոյսն է:

Ահա իմ կեանքն, իմ կտակն, աւանդս, ոչինչ չ'ունեմ այլ ևս հաղորդելու ոչ ոքի: Սակայն ընկնելու է երբեկցէ այս տետրը մարդու ձեռք, և եթէ ընկնէ, կ'կարդան միթէ, ուշադրութիւն կ'զարձնեն. «Ե՞հ, անմիտ ցնորդներ են, մեզ ինչ, թէ մէկն իր յիմարութեան պատճառով տանջւել է», կ'ասեն շատերը, «Թող խոհեմութեամբ ապրէը»: Երջանիկները կ'ասեն. «անհաւատալի է, միթէ այսպիսի բաներ են կատարւում իրականութեան մէջ»: Ինձ կ'հասկանայ միայն նա, որի հոգուց փոթորիկն անպակաս է եղել, որից չէ հեռացել հոգսը, որի կեանքը թոյն է եղել:

Վերջացած էի համարում կենսագրութիւնս, բայց ահա մի սարսափելի դէպք, որն անկարելի է լոռութեան տալ: Մի օր է մացել մինչև կախաղան (որպիսի հեշտութեամբ եմ գրում!), և իմ անցեալի մի աներեակայելի հանելուկը պարզում է առաջիս: Այսօր ստացայ թղթերի մի ծրար, աւելի ճիշտը՝ մի կապոց, զարմանալով բաց արի

և ինչ եմ տեսնում... մի նամակ մեր նախկին հարեանից, որի տանն ապրում էի հօրս մահանից յետոյ, մի թուղթ մօրս ձեռով գրած և հօրս կտակը, որի գոյութեան մասին զաղափար չ'ունէի: Կարդում եմ մօրս ձեռագիրը և սարսափում եմ. ի՞նչ, ուրեմն ես մենակ չեմ եղել... բայց ահա նա.

Ի՞՛ Ռուսիայէկ!

Ինքդ նկատում ես, որ երբէք դէմքիս ժպիտ չէ երեւում, օրէցօր թառամում եմ անժամանակ. ինձ համար հանգիստ չէ ստեղծւել, ես ապրել եմ տանջւելու համար: Այն, զու կաս, մեծ միսիթարութիւն ես մօրդ համար. բայց վիշտս այնքան մեծ է, որ անկարելի է քեզանով մոռանալ: Զգում եմ, որ մօտ է մահս, և շտապում եմ յայտնել այս անշունչ թղթով: Կ'անցնեն տարիներ, զու կ'մեծանաս, կ'հասկանաս՝ թէ ինչ ասել է տառապել. զու ևս թշւառ ես լինելու, այդ երեսում է խոհուն դէմքիցդ:—Այսպէս, կ'ծանօթանաս աշխարհի հետ, և այն ժամանակ կարգալով գրածս՝ կ'զգաս, թէ որչափ մեծ կարող էր լինել ցաւս. գուցէ զաւակների հայր կ'լինես, այն ժամանակ ասկանալի կ'լինի քեզ, թէ ինչ ասել է զըկել զաւակից, ամենասիրելի արարածից, որի համար միայն կարելի է չնշել, որին կարելի է պաշտել, որի համար կըտըռում ես քունդ, հանգիստդ, փայփայում, խնամում, որի մէջ թագնւած ես տեսնում յուսոյ մի մեծ թագաւորութիւն: ծանը է, չափազանց ծանը զըկել մի այդպիսի արարածից: Երևակայիր, որ մինչև անդամ չ'զիտես, թէ ուր է նա, կենդանի է, թէ մեռած, կ'տեսնես երբեկցէ,

թէ ոչ, և այն ժամանակ հարւածը կզգաս իր բոլոր խըստութեամբ:

Կարող է մտքիդ մէջ մի այսպիսի հարց ծագել. «Ինչու միշտ տխուր էին ծնողներս, ինչ վիշտ կարող էին ունենալ, քանի որ անրաւ հարստութեան տէր էին, ապրում էին ազատ, սիրով, երջանիկ...» Բայց այս վերջին բառն իրաւունք չ'ունես ասելու. ճիշտ է, որ ազատ էինք, սիրով էինք, բայց ոչ երջանիկ... Ընդհակառակն, շատ հեռու էր երջանկութիւնը մեր թախծալի սրտերից:

Դու մենակ չէիր, ունէիր և մի քոյր: Նա մեր անդըրանիկ զաւակն էր: Օր ու գիշեր մեր փայփայանքի, խանդաղատանքի առարկան էր, նրանից չէինք անջատւում: Ի՞նչն է քաղցը, քան առաջին զաւակը! (Մրանով դու չ'վըշտանաս, մտածելով որ իբր թէ քեզ աւելի քիչ եմ սիրում. յուսով եմ, որ այդքան էլ եսասէր չես լինիլ): Մի օր զրկւեցինք այդ զաւակից, կորաւ նա անհետ, չ'իմացանք թէ ով տարաւ նրան, ինչու և ով տարաւ: Այն օրւանից սկսեցի տառապել՝ անդադար սպասելով, որ մի օր կյայտնւի նա. սակայն իգոր, ամեն բան ՚ի դերեւ ելաւ, մօտենում են վերջին օրերս, բայց նա չ'կայ տակաւին... Երդւեցնում եմ քեզ իմ անունով, եթէ երթեւիցէ պատահես քրոջդ, սիրիր նրան ինձ տեղ, գրկիր իմ փոխարէն՝ տալով վերջին համբոյրս. այդ բոլորը կզգամ ես դերեզմանիս մէջ և հանգիստ կ'լինեմ:

Քո քշառ, մայր.

Ահա թէ ինչն էր ծնողներիս տխրութեան պատճառը: Որքան ապաբախտ եմ, որ չեմ տեսնելու երբէք իմ

կորած քրոջը. բայց ով էր նա, տեսել եմ արդեօք, թէ ոչ, այդ կերևայ հարևանիս նամակից, որ բառացբառ մէջ եմ քերում: Երանի թէ չլինէր այս նամակը, նա ինձ աւելի է զգալ տալիս, որ մեծ են եղել եղեռնագործութիւններս, որ ես մի ատելի արարած եմ եղել, անհաստատ բնաւորութեամբ, ծախու զգացմունքով:

Յարգելի Ռապիայէ!

Գրում եմ քեզ՝ չ'իմանալով թէ որտեղ ես. տեղական վարչութիւնը քեզ կ'հացնէ նամակս, որի հետ ուղարկում եմ մօրդ ձեռով գրած թուղթը և հօրդ կտակն: «Ի՞նչ կտակ, կ'զարմանաս, այս մըտեղից լոյս ընկաւ, այսպիսի բան չ'կար»: Խսկոյն: Հասել են ծերութեանս օրերն, այն ժամանակամիջոցը, երբ մարդ հոգու վրայ է մտածում, եթէ ծանը բեռ կայ, թեթևացնել է ուզում բնագդօրէն: Ծերութիւնը քնքշացնում է սիրտը, չոր աշքի մէջ արցունք է ստեղծում, որպէսզի մարդ լայ իր ստոր արարքը, որպէսզի քիչ թէ շատ մօտենայ հանգստութեան տաճարին: Խսկ մահւան անկողինն աւելի է խեղճացնում: Ես բոլորել եմ կեանքիս շրջանն, այժմ մահւան եմ սպասում, բայց ոչ հանգիստ սրտով. արցունքը չէ կարող թեթևացնել յանցանքներիս քաշն այնպէս, որ զգալի լինի. ինչ է մի կաթիլն անծայր ովկիանոսի մէջ: Ես գործել եմ ամենածանը յանցանքներ, և ապաշխարել չեմ կարող երբէք: Ներիր ինձ (թէկ ոչ ոք չի ներիլ), ներիր և աղօթիր մեղաւոր հոգուս համար: Ո՛վ գիտէ, որքան երջանիկ ես դու, շքապատւած հրեշտակի պէս զաւակներով, ուրախ, գւարթ անց ես կացնում կեանքդ. օ, որքան զա-

նազանութիւն իմ և քո մէջ. դու երիտասարդ, իսկ ես զառամած, դու դեռ ևս տասնեակ տարիներ կ'ապրես, իսկ ես միմիայն երկու—երեք օր: Քաղցը է կեանքն, աւելի քաղցը, երբ չարութեան ոգին կրծքիդ մէջ չէ թագաւորում. բայց ժկ է տւել ինձ այդպիսի կեանք, ես ապրել եմ չարութեամբ և մեռնում եմ չարշարանքով: Արժանի եմ... դժւար է, շատ դժւար, ինձ փրկութիւն չ'կայ. եթէ կեանքիս թելը քիչ էլ երկար լինէր, ես կարող էի ապաշխարել, քաւել մեղքերս, բայց ժամերս արդէն հաշւած են դժբախտաբար, ինձ անհամբերութեամբ սպասում է տանջանքով լի գերեզմանը, հանգերձեալ կեանքի պատժարանըն, ինձ է սպասում մի ահեղ, սարսափելի դատաստան, որից թագչելն անկարելի է, ինչպէս մահից: «Ի՞նձ ինչ, ես երջանիկ եմ», կ'ասես դու, բայց թոյլ տուր մեղապարտ ծերունուս բարբանջել, չթագցնել գործերս, գուցէ երկնքի չնորհիւ քիչ հանգիստ գայ գեհենական հոգուս վրան:

Ասում են, այնտեղ՝ դժոխքում պատիժները զանազանում են միմիանցից. այդ ինձ համար ձեռնտու չէ, ես աւելի կ'տութեմ: Բայց արդեօք այնտեղի տանջանքն աւելի խիստ է լինելու, քան մահւան տագնապալից ըովունքը, երբ զգում եմ, որ հոգիս խորասուգւած է անթիւ կեղտերի մէջ և այրւում եմ ամբողջովին, դեռ կենդանի. եթէ այն, ուրեմն անգութ է երկինքն... իսկ եթէ հաւասար լինի... օ, նորից անտանելի է, անկարելի է դիմանալ. յամենայն դէպս սա դեռ սկիզբն է...

Քանի—քանի զոհեր եմ տւել, քանիսին եմ զրկել, կեղեքել: Բնութիւնն ես միաբանել էր հետս, ամեն բան աջողութեամբ էի գլուխ բերում, ձեռնարկութիւններս ընդունայն չէին անց կենում, և ահա ես ոգերըւած՝ սկսեցի աւելի և աւելի առաջ տանել դժոխային միտումներս. սա-

կայն անհանգստութիւնն օրէցօր շատանալրավ ինձ արզելը չէր լինում, ես աւելի էի կատաղում:

Մի դէպք պատճառ դարձաւ մի քստմելի արարքի. ես գողացայ քո քոյրն... Ահա թէ ինչու և ինչպէս արի այդ զաղանութիւնն. այն, խոկապէս զաղանութիւն էր իմ արած գործը: Ես ունեի մի աղջիկ. նա իմ մռայլ թագաւորութեան մէջ փայլում էր իբրև մի հրեշտակ, և ես նրանով էի իմանում, որ դեռ սոլորովին շեմ կորած. բայց նրա անմեղութիւնը չէր համուկերպում իմ չարութեան հետ, և նա մեռաւ: Ես կատաղեցի, կրկնապատկեցի չարութիւնս. բայց անզաւակ չէի կարող ապրել, կինս այլ ևս չէր ծնում. ինձ զաւակ էր հարկաւոր, և աղախնու մի-ջոցով զողացայ քըոջդ, որի մասին յիշւած է մօրդ թղթում: Ինձ անկարելի էր ապրել հայրենիքում, և ես հեռացայ ուրիշ քաղաք:

Քըոջդ անունն Աշխէն դըի, մի ներքին ձայն դրդում էր տալ նրան մօրդ անունը: Երբ մեծացաւ, ճանաշելն անկարելի եղաւ, դարձայ հայրենիք: Խիղճս տանջում էր սաստիկ, բայց ոչ ոք չ'իմացաւ զագտնիքս, քոյրդ ինձ ճանաշեց իբրև հարազատ հայր...

Չ'նայած՝ որ մեղաւոր էի հօրդ առջե, սակայն և այնպէս խորամանկութեամբ շահեցի նրա հաւատը և կը-տակակատար նշանակեցի: Նրա մահից յետոյ օգտւելով քո անփորձութիւնից՝ քեզ ցոյց չ'տւի կտակը, և չ'նայած՝ որ ահագին հարստութիւն ունեի, որը դիզել էի կեղեկումներով և զլխաւորապէս զրամանենգութեամբ, այնուամենայնիւ յափշտակեցի քո տունն ու ժառանգութիւնն: Ունեի նաև կեղծ պարտամուրհակներ, որ եթէ հակառակ դէպքում իմանայիք խարդախութիւնս և գատ բանայիր դէմս, նրանցով ոչնչացնէի պահանջդ, բայց առանց նրանց էլ ես

իմն արի. ձեր տանը զտնւած բոլոր թղթերը փշացըի, իսկ մօրդ գրածն առայ մօտս. ես զիտէի, որ ծնողներդ քեզ ոչինչ չեն ասել քըոջդ մասին, հայրդ իր բոլոր զաղանիքներն ինձ յայտնում էր, մենք շատ անզամ էինք երկար խօսակցութիւններ ունենում, նա ինձ հաւատում էր իրը բարի մարդու...

Երբ դու մենակ, հիւանդ, անխնամ ընկած էիր տանն, Աշխէնն ինձ խնդրեց, որ թողնեմ նրան զալ քեզ հոգ տանելու. ես զիշայ նրա աղաչանքին (մանաւանդ որ նրան այլ ես չէի սիրում, որովհետև կինս կրկին զաւակ էր ծնել), թոյլ տւի դալ քեզ մօտ. չ'նայած՝ որ քո մահն էի ուզում, որպէսզի աւելի հանգիստ վայելեմ յափշտակածս, բայց խիդմ տանջում էր, գթացի քեզ և մինչև անզամ իմ տունն առայ: Իսկ դուք՝ քոյր և եղբայր փոխանակ հանգիստ մնալու սիրահարւեցիք իրար վրայ, և այդ ինձ շատ խորթ թւաց: Մտածելով որ վատ հետևանքներ կարող է ունենալ ձեր սիրահարութիւնն, սկսեցի հետդ այնպէս վարել, որ ստիպւես թողնել տունս: Այդպէս էլ եղաւ: Քո հեռանալուց մօտ երկու տարի յետոյ մեռաւ Աշխէնը: Ներիր ինձ, Ռափայէլ, ես զողացայ քո քոյրը և այժմ քեզ յետ եմ տալիս միայն նրա անունը:

Տեսնում ես, թէ որքան վնասներ եմ պատճառել քեզ, մեղապարտ եմ քո առաջ, խոստովանում եմ՝ մահան մօտ լինելով: Կեանքիս մէջ ամենից շատ քեզ եմ զրկել, այդ պատճառով ցանկանում եմ առատ կերպով վարձատըրել. չէ որ յանցանքը փողով գնուում է, այդ օրէնք է ամեն տեղ. բոլոր յանցանքս գնել չեմ կարող քեզնից, զոնէ մասամբ կ'ներես, հեշտութեամբ կ'ներես մանաւանդ այն պատճառով, որ երջանիկ ես, տնհանգիստ ու անժառանգ չես պէս: Քեզ նշանակում եմ իմ բոլոր հա-

ըըստութեան տէր, նա քոնն է այսուհետեւ: Փառանզական իրաւունքի վերաբերեալ թղթերը կ'գտնես քաղաքային վարչութեան մօտ: Գոնէ թող մահան բոպէին քիչ թեթեանայ տանչանքս, կեանքիս մէջ հանգիստ չեմ ունեցել...

Յետոյ ստորագրւած է նրա անզգամ ձեռով, այն ձեռով, որը միշտ արիւնով է լւացւել, որն անէծքով է բըռնւած, արտասուքով շաղախւած: Գարշելի՛ մարդ, եթէ զու չ'լինէիր, ես մինչև կախաղան չէի հասնիլ. ինչիս է պէտք այլ ես քո թունաւորւած հարստութիւնը, տար նըրան քեզ հետ քո կարծեցեալ դժոխքը, սատանանեցին կաշառելու համար պէտք կ'զայ անշուշտ: Մէկին կախաղան բարձրացնելուց յետոյ երշանիկ ես համարում!.. և այդքանն անելուց յետոյ կամենում ես հանգիստ մեռնել... Ահա թէ որպիսի մարդիկ է արտադրում կեանքը!

Սրանով վերջացնում է մահապարտն իր յիշատակարանը: Թէ որշափ մնշող տպաւորութիւն կարող է թողնել մի այսպիսի կեանքի նկարագիրն, այդ թողնում եմ իւրաքանչիւրին զգալ ըստ իր չափու, որովհետև ամենի մէջ հաւասար չէ զգացմունքն, զգալու չնորդը: 2եմ կարող նոյնպէս քննաղատել հերոսին այն հիման վրայ, որ ամենքն ազատ են իրանց համոզմունքներով ապրելու: Թոնդ իւրաքանչիւր աշխատէ իր մէջ գտնել հերոսին կամ նրա մի մասը, և այն ժամանակ ոչ մի դժւարութիւն չի զգալ

նրան ճանաչելու համար: Իսկ որի մէջ չ'կայ նրա ընը
բութեան և ոչ մի կողմը, նրա յատկութիւններից և ոչ մինը,
և միմնոյն ժամանակ չ'գիտէ ուրիշի զբութեան մէջ մտնել,
թող նա անարդար վճիւններ չ'կայացնէ այն մարդու հա-
մար, որը գիտէր արհամարհել ամեն մի մանկամիտ կար-
ծիք:

Երկրորդ և վերջին անգամ նրան տեսայ կախաղանի
տակ: Նա կտնդնած էր հպարտ, անվախ հայեացըով, բայց
երկրայութեան մէջ: Ճակատը արատած էր արդէն կնճիռ-
ներով, չ'նայած որ երեսուն հնդից անց չէին լինիլ նրա
տարինները, նսեմացած գեղեցկութիւննը զեռ փայլում էր
յոդիած աշերի մէջ, որոնք թուլացել էին հոգեկան յու-
զումներից և արտասւելու անընդունակ դարձել: Երբ խօ-
սել սկսեց, ես զարմացած մնացի՝ լսելով նրա խրոխտ,
հրամայական ձայնը: Նո խնդրեց, որ թոյլ տան վերջին
անգամ ընտանիքը տեսնել՝ կանչել տալով կախաղանի
մօտ: Իսկ երբ նրան ասացին, թէ կինն ու զաւակներն
իր բանտարկւելուց մի քանի որ յետոյ մեռել են ինչ որ
հիւանդութեամբ, նա զունատեց, զողողաց, նայեց շուր-
ջը սարսափելի հայեացքով, խոր հառաչեց և հրամայեց.
«Աւեմն կախեցէք ինձ շուտով»: Այդ ժամանակ միայն
երկու կաթիլ արցունք զուրս ցայտեցին նրա մժագնած
աշերից, և նա շարունակեց. «Կախեցէք, քանի որ չեմ չ սեղ
խելագարութեան: Ես գժրախտ եմ և երշանիկ: Մեռնում
եմ օրհնելով և անիծելով ձեզ, թշւառականներ... Մեռ-
նում եմ՝ չ'ափսոսալով ոչնչի, որովհետեւ իմ կեանքը թոյն
էր...»



5257

2013.

